

ՀՐԱՉՅԱ ՔՈՉԱՐ

ՄՏՈՒԳՎԱԾ Է 1961 թ.

91.99
82
A 6193


ԵՐՈՍՆԵՐԻ ԾՆՈՒՆԴԸ

ՆԱՄԱԿՆԵՐ ԳՈՐԾՈՂ ԲԱՆԱԿԻՑ

~~4769~~
4769.



ՀԱՅՊԵՏՀՐԱՏ
ԵՐԵՎԱՆ * 1942



«... ԻՐԵՆՑ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒ-
ԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ, ՀԱՆՈՒՆ ԻՆՁԻ ԷԼ
ՀԵՆՑ ԿՌՎՈՒՄ ԵՆ ՄԵՐ ՄԱՐԴԻԿ, ՊԵՏՔ
Է ՄԵՐ ԲԱՆԱԿՈՒՄ ԾՆԻ, ԵՎ ԻՐՈՔ ԾՆՈՒՄ
Է՛ ՀԵՐՈՍՆԵՐ, ՈՐՈՆՔ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ ԵՆ
ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ»:

Ի. Վ. ՄՏԱԼԻՄ

ՈՐԴԻՆԿԱՆ ԿԱՐՈՏ

Հարազատ են Ուկրաինական դաշտավայրերը մեզնից ամեն մեկի համար, ով սիրում է մեր մեծ հայրենիքը: Գեղեցիկ են անալի այդ տարածություններն անգամ ձմռան այս օրերին: Երբ սարդկա դիշեր է, երբ ձյունով ծածկված հարթությունների վրա ցուցում են լուսնյակի շողերը՝ և դիշերը դարձնում ցերեկի պես լույս՝ քեզ զգում ես անսահման օվկիանի մեջ, մոռանում ես ցուրտը, որ դանակի պես շերտ-շերտ կտրուտում է դեմքդ, մոռանում ես տառապանք ու վտանգ և Գոգոլի պես բացական չում ինքդ քո հոգու մեջ՝

— Սատանան տանի, գեղեցիկ ես, տախտատան...

Իսկ եղեմնիների անտառները, որ ծածկված են ձյան սպիտակ քուլաներով, ինչպես նորա-

հարսերն սպիտակ պսակներով, հանդարտ ու
խաղաղ դետե^րրը, որ քնել են հաստ սառույցի
տակ և դու նրանց վրայով զգուշ անցնելիս ըզ-
գում ես թե ինչպես խորքում տեղի է ունենում
մշտական շարժումը և հարազատ գյուղերն ու ա-
վանները ձորակների ափին, ուրկից ծուխն է եր-
կինք բարձրանում որպես նշան, որ այդտեղ
կրկին կյանք կա, կան ընտանեկան օջախներ...

Ինչպե՞ս չմեռնես այս երկրիդ համար, երբ
պետք է քո մահը, որ տեսնի նա կախարդական
դարուճներ, ծաղկի ու բուրբի եղեմական բույրե-
րով: Էլ ի՞նչ ամենաթանկ բանի համար սխտի
պահես կյանքդ:

Այսպես ես զգում ու մտածում:

Բացի քո այս երկրից, որի վրա ապրում ու
կռվում ես, ունես դու նաև քո մանկության օր-
քանը, որ նույնպես երբեք չես մոռանա, որի
խաղաղության, երջանկության համար կռվի ես
եկել: Սիրելիցին Սիրելին է հիշում կարոտով,
երբ մի պահ դադարում են ռազմի գործողու-
թյունները, տուլացին՝ Տուլան, Վոլգայի ափե-
րի բնակիչն իր հողի կարոտն է քաշում, իր
մայր Վոլգայի կարոտը, թուխ արծվաքիթ

վրացին հիշում է իր չքնաղ Վրաստանը, Կախեթըն ու Կոլխիդան:

Մենք էլ, Հայաստան երկիր, քո Արարատյան հովիտն ենք հիշում, քո Մասիսն ու Արագածը, քո Ծիրակին ու Լոռին, քո շնաշխարհիկ Սեանը, հիշում ենք քո սիրելի պատկերը, որպես կովի դնացած որդին՝ իր հարադատ մոր դեմքը: Մի քանի օր առաջ եկար հանկարծ ինքդ ու կանգնեցիր քո բոլոր որդիների հայացքի առաջ: Տեսան քեզ, և՛ նրանք, որ պատրաստվում էին նոր հարձակման դնալ, նրա՛նք, որ արդեն դիրքերի մեջ էին և նրա՛նք, որ հաղթական մարտից հետո թեթև շունչ էին առնում կրկին հալածելու թշնամուն մեր մեծ, մեր ընդհանուր հայրենիքի սահմաններից: Եկար ու մարտական ոգի, մարտական արիություն ներշնչեցիր նրանց, եկար ու ասացիր. «Ահա՛ ես, ձեր մայրը, որ զօր ու դիշեր ձեզ համար եմ տքնում, ձեր հաղթության հավատով ապրում, օգնում եմ ձեզ հեռու հեռվից, սիրում եմ ձեզ կաթոգին սիրով, իմ թանկագին որդիներ, և երբեք չեմ մոռանում ձեզ՝ եղև՛ք արի, քաջ՝ ձեր պանծալի

նախնինների պես, ստացի՞ք իմ գործած ձեռնոց-
ներն ու գուլպաները, որ չմրսեք կուլի ժամին»:

Եվ մենք ասացինք. «Լսո՛ւմ ենք, մա՛յր,
այդպես էլ կլինի, հավատա՛ ըս որդիներին...»

... Բացեցին մարտիկները ճակատային թեր-
թը, որ հաղթություններ էր ավետում, նկարա-
զրում էր վերջին հաղթական ճակատամարտերը:
Եվ ահա որպես պատերազմական հաղթանակնե-
րի շարունակություն՝ թերթը բազմազգի դյու-
ցազուններին հայտնում էր, որ՝

Հայաստանը հավաքել է պետության հար-
կավոր ամբողջ բամբակը: Հավաքել են Վաղար-
շապատի շրջանը, Հոկտեմբերյանը, ապա թվում
էր, թե ո՛ր դյուղերն առաջին հերթին...

Ճակատային թերթը հաղորդում էր, որ՝

N զորամասի ստացած նվերների մեջ եղել
են բրդե տաք գուլպաներ՝ ուղարկված Հայկա-
կան Ռեսպուբլիկայի Կիրովականի ու Ալսուլեր-
դու շրջանների կոլտնտեսականներին...

Ծանոթ, հարազատ անուններ, որ արթնաց-
նում են հազար քաղցր հիշողություն, վերակեն-
դանացնում են երևակայությանդ մեջ ծանոթ,
սիրելի պատկերներ: Մտքով վերադառնում ես

այն օրերը, երբ նույն այդ դյուղերում տոնում էին բերքի տոներ, երբ խնդուլթյան հանդեսներ էին լինում, ուր դեղջուկն ու դեղջուկուհին պատմում էին, թե կրեմլում ինչպես հայրաբար զրույց է արել իրենց հետ Ստալինը, ի՞նչ պատվերներ է տվել, ի՞նչպես է ընդունել իրենց նվերը՝ խաղողն ու դեղձը, կարճիք գինին ու սպիտակ բամբակի նմուշները: Ահա Ջարել Բուդաղյանի կերպարանքը՝ բամբակենու դաշտերի Փոնի վրա, Թանկագին Մովսիսյանի խոնարհ ու ամոթխած ժպիտը և շատ ու շատ դեպքեր ու դեմքեր:

Բացում եմ օրագրիս գիրքը՝ վերապրելու համար հրաժեշտի օրվա իմ զգացումները, երբ հայրենական սրբազան կռվի ճակատն էինք դալիս: Այնտեղ ահա՛, կարդում եմ.

«Կախարդական մի լուսաբաց էր Արարատյան հովտի վրա: Ճահճուտներում թևերը թափահարում էին սպիտակ թռչունները, կապույտ դեղձանիկները նստել էին հեռադարձարների վրա ու լռիկ մեր երթին էին նայում: Պատանի հովիվը նոր էր արածելու բերել իր դառները: Թվում էր, թե հենց այս առավոտ մեկեն ծաղկեցին

բամբակենու բոլոր արտերը սպիտակ, դեղին ու
բաց մանիչակադույն ծաղիկներով: Հնձաններում
նոր էին արթնացել այգեպանները. կանայք այ-
գիներէց կողովներով խաղող ու դեղձ էին բե-
րում մեզ, երբ մի քանի բոպետով մեր գնացքը
կանդնում էր նրանց այգիներին կպած փոքրիկ
կայարաններում: Ահա հայ դժուղացին, բահը
ձեռքին տարվա այս եղանակին վերջին անգամ
ջրում է առվույտը: Նա կանգ առավ, հենվեց
բահին ու հայացքով սկսեց ուղեկցել մեզ: Ես
յուսամուտից ձեռքս թափահարելով՝ մնաս բա-
րով ասացի նրան: Նկատեց: Գլխից վերցրեց
դլխարկը և թափահարեց՝ բռնած աջ ձեռքում,
ձախով էլ թափահարելով բահը, մտերմական
բացականչությունների հետ մխասին, որ գնաց-
քի աղմուկի պատճառով մեզ չէր հասնում:—
Հայ ժողովուրդը մեզ բարի ճանապարհ է մաղ-
թում, — մտածեցի ես, — չլսեցի նրա խոսքերը,
բայց հասկացա՝ նա ասում էր. — սուբներդ
կտրո՛ւկ լինի, քար տեղ գնաք՝ կանաչ բուսնի,
բարո՛ւ գնաք՝ բարո՛ւ գաք...»: Անցանք Շէրա-
կի դաշտով, անցանք Գուղարքով, ամբողջ հայ
աշխարհի պեյղաթը սահեց աչքիս առջևից: Իսա-

հակայանի ու թուամանյանի աշխարհները, մեր
ներկրի հավերժական դադաթները: Մենք բաժան-
վեցինք երկրից, բայց տանում ենք մեր հողում
նրա փառավոր դործերն ու պատմությունը, որ
մեզ ուժ ու ոգի կտան կռվի մեջ»:

Այդ օրվանից անցել են ամիսներ: Շատ մար-
տեր տեսան հայորդիները եղբայրակից ազգերի
զավակների հետ միասին և միշտ պատվով, դրո-
շի պես բարձր պահեցին հայրենիքի անունը: Եվ
այսօր, երբ երկիրը ճակատին հայտնում է իր
դործերը՝ մենք էլ պիտի նրան դեկույց տանք:

Վաղարշապատի ու շրջանի բնակիչներ, չնորհակալ ենք ձեր անձնվեր աշխատանքի հա-
մար: Ամբողջ բամբակը ժամանակին հավաքե-
լով՝ դուք էլ մեզ հետ մասնակցում եք ազատու-
թյան համար մղվող մեծ պատերազմին: Ձէի՞ք
ուզի մեր մասին էլ խմանալ: Կուզենայիք իհար-
կե: Դուք շատ լավ եք ճանաչում ձեր հայրենա-
կից Եղիա Մարգարյանին՝ վաղարշապատցի: Նա
դյուրաստնատես էր ձեր շրջանում և ջանք ու ե-
ռանդ չէր խնայում, որ հողը ձեզ տա այն ամե-
նը, ինչ ունի իր մեջ, որ առատ լինեն խաղո-
ղըն ու բամբակը, պտուղներն ու բանջարեղենը:

Դուք սիրում էիք Եղիային: Ինչպե՞ս կարելի էր
չսիրել ժողովրդի այդ լավ որդուն՝ համեստ,
աշխատասեր: Մենք այստեղից իրավունք ունենք
ավելացնելու՝ խիզախ, անվեհեր: Բանակումն էլ
նրան սիրեցին այնքան, ինչքան դուք էիք սի-
րում: Պատերազմից առաջ նա համբերատար,
անխոնջ եռանդով սովորեցնում էր բանակային-
ներին զնուացրով դիպուկ կրակել, պատրաստ լի-
նել հայրենիքի պաշտպանությանը: Կռվի մտնե-
լով դերմանական բանդիտների դեմ՝ նա հիաց-
մունք պատճառեց իր նվիրվածությամբ, անվե-
հեր կերպով զրոհի տանելով իր մարտիկներին:
Դա այն օրերին էր, երբ մենք դեռ պատրաստ-
վում էինք ամբողջ աշխարհին ապացուցելու, թե
ինչպես դերմանական սնապարծ բանակն ամենից
չատ ընդունակութուն կցուցարբի գլխակորույս
ետ փախչելու մեջ: Շատ ճակատներում մենք
դեռ այն ժամանակ վկա էինք լինում նրա այդ
ընդունակութունը ցուցադրելուն: Եվ ահա մեր
զրոհներից մեկի ժամանակ նորից համարձակո-
րեն առաջ դնաց Եղիան իր մարտիկների գլուխն
անցած՝ թշնամու վրա դնուացրային տարափ
թափելով: Գերմանացիները մեր զորամասի այդ

գրոհից «հերոսաբար» փախան: Նրանց գրահավոր բանությունից աղատվեցին շատ դյուռեր ու ավաններ: Այդ օրն էր ահա, որ թշնամու գնդակից Եղիայի կրծքին բացվեց մի վերք: Ու նա գնաց բուժվելու, որ նորից վերադառնա սրբազան պատերազմի ճակատը:

... Ես տեսնում եմ ահա Ղամարլուի հարուստ դյուռերը, լի մառանները. տեսնում եմ Արտաշատի կարմիր գինին կարասների մեջ՝ արդար վատակն աշխատասեր հայ դյուռացու: Դո՛ւ էլ լսիր, զվարճասեր Ղամարլո՛ւ, դու, որ աշնակա լավ աշխատել ու ապրել գիտես, գիտես նաև լավ կուլել քո հալալ քրտինքի, քո դատած աշխատանքի համար: Արչավիր Ղազարյանի մասին եմ ուզում պատմել ձեզ, այդ ուրախ, լոթի Ղամարլուեցու մասին: Նա էլ դյուռատնտես էր պատերազմից առաջ՝ և բանակ գալով՝ չէր մոռացել իր հողն ու ջուրը: Մեր ոուս ընկերները հավատում էին նրան, որ Ղամարլուից լավ անկյուն Եհովան չի ստեղծել աշխարհիս վրա: Ինչպիսի՛ համով էր պատմում մեր հայրենի գինիներին, կերակուրներին ու մրգերին մասին, հիշում ու սիրում էր Ղամարլուի յոսպ ամսուրը (մանա-

վանդ ցուրտ օրերին), առատ աչուներ, ծաղկա-
վետ դարուներ՝ այդիններում ու պարտեղներում :

Շատ ենք հանդիպել Ղազարյանին ու կա-
տակել. իր սրտում նա պահում էր ոչ միայն
հայրենի շրջանի ու դյուղի կարոտը, այլև Ղա-
մարյուրի հայտնի բարբառը, որով անկեղծ
զվարճութուն էր պատճառում : Պատերազմից
առաջ, նա մի անգամ այն միտքը հայտնեց, որ
իրենից ուղղամական մարդ դուրս չի գա, որ ինքը
լավ այդեղործ է : Մենք սխալ համարելով այդ
միտքը՝ դատապարտեցինք, որ վտանգների նա-
խօրյակին այսպիսի զղացում ունի : Նա համառ
էր, չընդունեց, միայն ասաց .

— Ի՞նչ եք վրա տալիս, հլա սպասեք, դու-
ցե կուվում ետ չեմ մնա լավ ճառ ասողներից . . .

Կատարվեց վերջինը : Ինքն ամենից լավ ա-
պացուցեց, որ սխալ էր իր առաջին միտքը : Երբ
մեր զորամասը կուվի դուրս եկավ արյունարբու-
ների ցեղի դեմ, հենց առաջին օրերից Արշավիր
Ղազարյանը նվաճեց անասհաման սեր ու հար-
զանք, մարտիկի խիզախ փառք՝ բոլոր հրամա-
նատարների ու բանակայինների մեջ :

— Ղազարյանը հերոսաբար է դործում . . .

— Ղազարյանը խիղախ հայրենասեր է...

— Ղազարյանը ցույց է տալիս անվեհերություն ու անասանություն...

Ուրիշ լեզվով չեն խոսում նրա մասին, քան այս կերպ, ուրիշ շատ ու շատ էպիտետներ են գործածում այդ կարճահասակ, արվակեղ ջրվորի ու այգեպանի դեմքով դամարլուեցի տղայի մասին, սլատմում են շատ դրվագներ նրա մարտական գործունեությունից: Քանի՛-քանի անգամ նա իր մարտիկներին քաջաբար դրոհի է տարել, քչել դերմանացիներին իրենց ամրացած դիրքերից, գետնին փռել տասնյակ դիակներ, քանի՛ անգամ հերոսական դիմադրությամբ կասեցրել է վարչրենացածների պսիխիկ դրոհները և մահ ու պարտություն պատճառել նրանց, քանի՛ անգամ հրամանատարությունից խնդրել է, որ իրեն հանձնեն այս կամ այն մարտական խնդրի կատարումը: Գնացել է գործողության և վերադառնալով հանդիստ զեկուցել է.

— Ընկե՛ր հրամանատար, ձեր հրամանը կատարված է...

Կարծես վերադարձել է այգին էտելուց ու զեկուցում է տնտեսության պետին.

— Ընկե՛ր նախագահ, այդին էտեցինք...

Բայց այդպես թվում է միայն: Փառքը հեշտ չի ձեռք բերվում կռվի մեջ, նա պահանջում է, որ կյանքը տաս և երբ տեսնում է որ պատրաստ ես տալու՝ դալիս է քեզ հետ ու պահպանում կյանքդ. իսկ երբ տեսնում է փոքրոգի ես, վախկոտ, դողում ես կյանքիդ համար, խլում է քեզնից կյանքդ, որովհետև ամենակարևորի համար այն պետք չեկամ ու դու հանգչում ես՝ չվառելով ոչ մի կրակ ուրիշի սրտում, ընկնում ես՝ օդուտ չբերելով սուրբ դոբժին:

Արչալիբր Ղազարյանը միշտ պատրաստ է եղել իր կյանքը զոհաբերելու հայրենիքին և այդ պատճառով էլ վաշելում է հարգանք, պատիվ, սեր, փառք՝ ինչով որ կարող է շոյվել մարդու արժանապատվությունը և խիղճը հանդիստ լինի, ներքին խայթոցներ չզգա:

... Ես հիշում եմ գեղեցիկ Լուին և ուզում եմ նրա արի դավակների մասին պատմել—դասեցի Արամայիս Դանիելյանի մասին: Դու, Նլվա՛րդ, կճանաչես նրան, նա ձեր աղդական է, թեև չի կրում թումանյան ազգանունը: Պատերազմից առաջ, մի անգամ պատահում էր կռամ

այցելելու Արամայիտին: Միասին հրաձգության
դնացինք: Ամբողջ օրը դիտեցի նրա պարապ-
մունքները՝ ինքս էլ մի քիչ մասնակցելով: Ամ-
բողջ օրը ես վկա էի այն հարդանքին, որ վա-
յելում էր բանակայինների մեջ Դսեղում ծնված
մեծացած այսօրվա լեյտենանտը, թեև ուսերեն
խոսում էր ինձնից էլ վատ: Բայց դա մի թե-
րություն էր, որ ժամանակն ու առօրյան սրբե-
ցին: Այն ժամանակ ես ու նա խոսելու շատ
նյութ ունեինք: Ամբողջ գիշեր առողապարդ
երկնքի տակ հիշեցինք դեպքեր ու պատմու-
թյուններ Թումանյանի կյանքից, խոսեցինք Լո-
ու ու բարձրից, հիշեցինք Դսեղի ծերունիներին
ու չմոռացանք սուտլիկ Սարոյին էլ...

Մեր վերջին հանդիպումն այլ հանդամանք-
ներում տեղի ունեցավ: Կատարում էի ես իմ
ուղղմական պարտականությունները՝ երկու կո-
լեգայի հետ միասին: Կովի առաջավոր դիրքե-
րումն էինք և թշնամու ականներից պաշտպան-
վելու համար նստել էինք փորված խորշերի
մեջ: Ունոցով դալիս ու մեր շուրջը պայթում
էին ականներ, բեկորները սուլելով անցնում էին
մեր գլխավերևով: Օդանավերը պտույտներ էին

դործում մեզ վրա անդրները նման, սև սվաստիկաները՝ գլխատիչի սև մազերը պես: Անընդհատ ճարճատում էին դեղացիները, բայց դա առաջին օրը չէր և մենք հանդիստ մեր դործով էինք զբաղված:

— Գրեցեք լեյտենանտ Դանիելյանի մասին, — ասաց ստորաբաժանման կոմիսարը, — նա արժանի է դովասանքի՝ թեև, ինքն է միշտ ուրիշները մասին դրում...

Մեր ճակատային թերթի համար հաճախ էինք դիմում Արամայելին, որ դրի: Դսեղցի լինելով՝ նա իր մեջ դրական շնորհք էր տեսնում ու չէր մերժում մեզ, հողվածներ էր դրում մեր թերթի համար, տպվելուց հետո կտրակելով:

— Իդ ի՞նչ տպարան ունեք, որ հայերեն հողվածներս դցում եք մեջը, ոտսերեն, ատրպվում, դուս գալի...

— Մեր տպարանն ըսենց ա, — պատասխանում էի ես: Հաճելի էր նույն թերթի համար դրել նրա թղթակցի քաջությունների մասին:

— Ահա այն անտառի մեջ է նա, — ցույց տվեց կոմիսարը, — անտառի եզրին:

A I
6193

Մենք հասանք երեւացող անտառը: Արամա-
յիսը պինդ դրկեց ինձ, համբուրեց:

— Շա՛տ, շա՛տ ուրախ եմ, որ դեռ սաղ-
սալամաթ ես...

— Ես էլ քեզ համար եմ ուրախ, հպարտա-
նում եմ քեզնով, որ լավ ես կույում:

— Բայց ափսոս որ Եղիան վիրավորվեց,—
հառաչելով ասաց նա Մարգարեայնի մասին:

— Ոչինչ, կառողջանա, բժիշկներն ասացին,
որ վերքը մահացու չէ. դու քո մասին պատ-
միր, ի՞նչ կգրես թերթի համար:

— Ըհը՛, է՛լի թերթ, մի կյանքից խոսենք,
կույից խոսենք, վախենում ես գրելու նյութ չլի-
սի՞ր...

Դեպքը մեր մի խիստ համարձակ գրոհից
հետո էր:

Գերմանացիները հաճախ էին դիմում մի է-
ժան մեթոդի: Կրակում էին զնդացիները, ան-
տոմատները առանց դադարի, առանց նշանա-
ռության, աղմուկ հանում միանգամից, որ
տպավորություն գործեն:

— Բեխա եք վախեցնո՞ւմ, — մտածեց լեյ-
տենանտ Դանիելյանը, — ես լուեցի եմ, բարձր՛մ,

ձեզ նման ջանաւարներ շատ եմ տեսել մեր մե-
շեքում . . .

Ու հրամայեց իր գնդացրորդներին անընդ-
հատ կրակել, ինչպես նրանք, գրոհի վազելիս
էլ կրակել ձեռքի գնդացիներով. կրակել՛լ, կրա-
կել, տեսնենք նրանք ինչպես կըլիմանան: Այդ-
պէս էլ արին, գրոհի ժամանակ կրակոցի ուր-
տին միացան նաև մեր բազմազգի ժողովրդի
մարտիկների ուռայի բացահանչությունները:
Թշնամին ցույց տվեց, որ այնքան էլ ուժեղ
ներվեր ու ամուր սիրտ չունի, փախալ՝ թող-
նելով կովի դաշտում դիակներ: Գնդացրորդնե-
րից մեկի պարտականությունն էր նաև պաշտ-
պանել լեյտենանտ Դանիելյանի կյանքը. մի քա-
նի անգամ այդ երիտասարդ զեղեցիկ կյանքը
վայրկենապէս փրկվեց վտանգից: Նշանառու-
թյուն վերցնող թշնամին ինքն էր մեռնում՝
հրամանատարի կյանքը պաշտպանող գնդացրոր-
դի հերթից:

Չմեռնամուտ այդ օրը անտառում առատ
նյութեր եղան լրագրողի իմ տետրակում: Դրա-
նից հետո էլ շատ լուրեր հասան ինձ լուսեցու-
քաջագործությունների մասին: Ու մի օր էլ երբ

պատրաստվում էի կրկին նույն ստորաբաժանում
մը դնալ՝ լսեցի մի տխուր լուր․ մի նոր դրոհի
ժամանակ թշնամու ականի բեկորը փշրել էր
Արամայիսի ներքին ծնոտը։ Յավերը դսպելով
նա կարողացել է հրամայել․

— Бей врага, отомсти! Я еще вернусь!..

Նա իհարկե կրկին կվերադառնա՝ եթե բը-
ժիչկները թույլ տան ու կկոչի առյուծի պես։
Բայց բժիչկները հաճախ են բռնանում մարտի-
կի կամքի վրա։

— Դու դեռ պետք է հանդատանաս, դեռ
բուժումը չի ավարտվել, ընկերները կռվում են
քո փոխարեն...

Այսպես է բժիչկների լեզուն։ Նրանց էլ նույն
սերն է թեւադրում այդպես խոսել, որը մարտի-
կին դեպի մարտ է մղում՝ սերն առ հայրենիքը։

Այսպես են ահա կռվում քո որդիները, հա՛յ
ժողովուրդ։ Ինչպես դաշտում, աշխատանքի մեջ
դու չես խնայում քո քրտինքը դալոց երջանիկ
օրերի համար, այնպես էլ նրանք կոչի դաշտում
իրենց արյունը չեն խնայում հանուն ազատու-
թյան։ Բայց բոլորին չէ, որ կաջում է թշնամու
դնդակը․ դու շատ ու շատ որդիներ ունես, ու-

րոնց զնդակներէից ամեն օր լինկնում են թշնամու
դիակներ և իրենք մնում են ողջ ու առողջ՝ նո-
րանոր սխրագործություններ կատարելու հա-
մար: Ահա Սուրեն Աթանասյանը, դիականագետ
Աշոտ Աթանասյանի՝ Սալ—Մանի որդին, ահա
ականածիգ լեյտենանտներ Մարջանյանն ու Մա-
նուել Ասլանյանը, ահա կարմիր բանակային քաջ
Շարո կարապետյանն ու շա՛տ ուրիշներ, որոնք
հենց այս ընդհանուր կռիւ մեջ են ու ջարդելով
քրում են ողջոտ «արխացիներին»... Բայց նրանց
մասին կարտմենք հետևյալ նամակներում:

Այսօր ողևորեց մեղ, ինչպես քո հնձաններէ
դինին, քո կենաց. ու աշխատանքի վերաբերյալ
լուրը:

Կա քրդական մի իմաստուն առակ. մի քաջ
մենակ կռւում էր թշնամիներէ դեմ. վիրավոր-
վելով փորէից՝ լաց լինելով նա աղաղակում էր.

— Վա՛յ պշտե մըն, վա՛յ պշտե մըն... որ
նշանակում է՝ վա՛յ մեջքս, վա՛յ մեջքս:

Զարմացած մարդիկ նրան հարցնում են.

— Ով մարդ, չէ՞ որ փորէից ես դու վիրա-
վորվել, ինչո՞ւ ես մեջքիդ մասին աղաղակում:

— Այո՛, վերավորված եմ փորձեց, — արատասխանում է նա, — բայց մեջքս է ցրավում, թիկունքիցս է իմ պարտությունը... եթե մեջքիս կանգնած յոթ օգնական եղբայրներ ունենայի՝ չէի պարտվի և վերքի ցավ չէի զգա. ես իմ վիճակն եմ ողբում:

Քո որդիները պատերազմի մեջ վերքերից ցավ չեն զգում, սովետական հայ ժողովուրդ, որովհետև նրանց մեջքին կանգնած ես դ՞ու՛ք ո՞ր 16 ավազ ու կրտսեր եղբայրների հետ, ձեր ավազ ուս եղբոր գլխավորությամբ, որ հսկայի ուժ և առյուծի սիրտ ունի և փորձված է շատ կռիվների մեջ, եղբայրների, որոնցից ամեն մեկը պատերազմում կռվող արի զավակներ ունի: Եվ եթե Տուլա քաղաքի բնակիչը հպարտ է տուլացիներով, սիրելիցին՝ Սիրիբի զավակներով, Վոլգայի ափերից եկածն իր հայրենակիցների փառքով է պարծենում, ես էլ՝ քո հարազատ որդին, բո՛ւ քաջարի զավակների անվահերությամբ եմ պարծենում, իմ սիրելի՛ Հայաստան երկիր, իմ մանկության դյուրեթակա՛ն աշխարհ, ես էլ հայտնում եմ քեզ քո որդիների կարոտը, մեր որդիական կարոտը: Երբեք մեր մեծ հայրենիքը, դ՞ու՛ էլ

լիւլ է զղացել հայրենասեր բանաստեղծը .

Դու քաղցր ես, հո՛ղ լո՛ւ հայրենի՛,

Զկար քեզնից պայծառ անուն ,

Բայց վտանգի ահեղ ժամին ,

Երբ սպառնում է թշնամին ,

Դու ավելի՛ ես քաղցրանում . . .

Սրբազան ուխտի զննցած դավախներդ այն
ժամանակ կվերադառնան քո գիրկը, երբ իրենց
ուխտը կատարեն, երբ այս ճյուղնաժածակ, անափ
տափաստանների վրա ընկնի վերջին գլխիկը հա-
վըշտակիչների ոհմակի, երբ ոչնչանա այդ սհ-
մակն ու դաշտերը մաքրվեն նրանց լեշերի դար-
չահոտությունից, երբ աղատությունը կրկին
ճառագի աղատ ժողովուրդների դեմքին, ինչպես
ուրախ ժպտը՝ երջանիկ մոր աչքերի մեջ . . .

Աշխատենք ու կռվենք դրա համար .

Смерть немецким оккупантам!

Հունվար 1942

Գործող Բանակ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄՈՐՈՋՈՎԸ ԵՎ ՈՒՐԻՉՆԵՐԸ

Այս երկտասարդ, միջահասակ, ուռւս մարդու ուրախ դեմքով հրամանատարը, որ տեղով եռանդ է ու ձգտում, արդեն հասել է ռազմական վառքի: Չորամասում բոլորը ճանաչում են նրան, սիրում, չատերի բարի նախանձն է դրդուում, չատերն են աշխատում նմանվել նրան: Երբ խոսում են հետը, բարի, խաղաղ, կատակասեր տղա է, թվում է, թե անծանոթ են նրան զայրույթն ու ցասումը, որ նա բոլբոլվել նույնիսկ չգիտես: Այդ տպավորությունը և՛ ճիշտ է, և՛ սխալ: Նա իսկապես այդպես է, ինչպես երևում է: Բայց նա ուրիշ մարդ է դառնում, երբ դուռում են ամպերը, ռազմի փոթորիկներ են սկսվում, երբ հասնում է նրա տարերքի ժամը:

Ահա մենք հանդիպում ենք կրկին հին բարեկամների նման: Այս անգամ հանդամանքները թույլ են տալիս, որ մենք ավելի երկար զրուցենք: Ի՞նչն է մեզ հուզող խնդիրը, ո՞րն է մեր

Հարցերի հարցը—Հայրենիքը, նրա պաշտպանութ-
յան համար մարտնչողների հերոսական զործե-
րը. իսկ այդ զործերի պատմությունները միշտ
էլ հափշտակող են, հաճելի, ողևորող:

— Ես որոշել եմ նամակներ գրել Հայաս-
տան, հայ ժողովրդին, նրա որդիների մասին,
պատմել, թե ինչպես են կռվում նրանք հանուն
ազատության...

Ալեքսանդր Պետրովիչը ժպտում է իր այն-
քան համակրելի ժպիտով և ասում ինձ.

— Мы, армяне воюем неплохо...

— То есть, как вы, армяне?

Եվ այս անգամ նա պատասխանում է ինձ
հայերեն:

— Դու չե՞ս լմանում, որ ես այ եմ...

Ես ծիծաղում եմ:

— Հայերեն խոսելուցդ երևում է, որ հայ
չես, բայց ուրախ եմ, որ ոուս ժողովրդի քաջ
որդի Մորոզովն ինձ հետ հայերեն է խոսում:

— Ո՛չ, ես այ եմ, — պնդում է նա դվար-
ճանալով իր կատակով: Ապա կատակից անց-
նելով լուրջ տոնի, խոսում է իր սիրո մասին

դեպի հայ ժողովուրդը, երազանքով հիշում է հայաստանի քաղաքներն ու դյուղերը, Դիլիջանը, Լենինականը, Վաղարշապատի դիմին ու խաղողը, Երևանի երեկոները ու թխչյա աղջիկներին...

— Да, я приемный сын армянского народа,— եզրահացնում է նա, հետո ավելացնում համեատ մեղմությամբ.

— Դուք հիմք չունեք ինձնից հրաժարվելու, ես հայ ժողովրդին ամոթով չեմ անի...

Մենք ոչ միայն չենք հրաժարվի նրանից, այլ կարող ենք հպարտանալ Ալեքսանդր Մորոզովի պես քաջով, նրա մարտական ընկերներով ու օգնականներով: Նրանք այն նոր ուղիքի մարտիկներն են, որ կռիվեցին հայրենական պատերազմի մեջ, հասան վարպետության՝ թշնամու դեմ կռիվներ մղելիս, ցույց տվեցին աշխարհին, թե ինչպիսի՛ խիզախ որդիներ ունի մեր հայրենիքը:

Քաջությունը պատերազմի մեջ քիչ է, պետք է զգուշություն, պետք է հնարամտություն, պետք է մարտ վարելու դիտություն, շատ բա-

ներ են պետք: Իսկական սաղմիկը, իսկական
Հրամանատարը հաղթանակում է կռվի մտնելուց
առաջ, այսինքն՝ ճակատամարտի համար պատ-
րաստվելու ժամանակ: Նա պետք է ստուգի իր
ստորաբաժանման ամբողջ մեքենայի վիճակը և
նրա ամեն պտուտակի աշխատունակութունը,
իր զենքն ու մարդկանց, որոշի նրանց տեղը,
կանխորոշի նրանց ապահովութունը:

Այդպես են կռվում Մորոզովն ու իր օդա-
կանները՝ Մանվել Ասլանյանը, Ոգնին, Ուզու-
նյանը և ուրիշներ:

Հրաման է ստացվում, որ պետք է լուսա-
բացին սկսել կռիվը, ուրեմն ողջ գեշերը Մո-
րոզովի ստորաբաժանումը գործի վրա է:

Ականանետը հզոր զենք է, ամենախորտա-
կիչը թշնամու դեմ: Պետք է գործի այդ զենքը,
հատու ու շեշտակի, նրա կրակային դիրքերը
լինեն անորսալի թշնամու դիտակետերի համար,
նրա օդանավերի համար, որ երկնքից խուզար-
կում են դետինը, պետք է տեղանքին հարմար-
վելն ու քողարկումը կատարելության հասնեն,
լինեն անթերի:

Ու նոր կրակային դժուած արհանաճիղները
դիրք են փոքրում: Շատ աշխատանք է պետք:
Թժում է, թե մինչև լուսաբաց հնարավոր չէ
այդքանն ավարտել: Հողնած են մարտիկները,
մի պահ կանդնում են շունչ քաշելու: Մտտե-
նում է հրամանատարը, ձեռքը դնում է հողնած
դինվորի ուսին.

— Դժվար է...

— Այո՛, ընկեր հրամանատար:

— Մահու չա՞փ դժվար:

— Ո՛չ մահու չափ, ընկեր հրամանատար:

— Ուրեմն հանուն Հայրենիքի է և մեր
կյանքի ապահովութեամբ:

— Այո՛, իհարկէ:

— Դե, մի՛ դանդաղիր, լուսաբացը մոտ է,
ով կուլից առաջ քրտինք է թափում, կուլի մեջ
արյուն չի կորցնի, աշխատի՛ր, հենց այս բո-
պելին այս աշխատանքով ենք մենք հաղթելու
թշնամուն, վաղն ավելի հեշտ կլինի...

Երբ լույսը բացվում է՝ հեռվից Մորոզովը
նայում է իր կրակային դիրքերին և ոչինչ չի
նշմարտւած, ո՛չ մի բուռ թարմ հող, ոչ մի մատ-

նող բիծ, ձորաբերանը լուռ հանգչում է սանաձ-
ձյան շերտերի տակ և, ո՛չ մի կենդանի շունչ
չի զգացվում, ո՛չ մի շարժում և դա իր՝ հրա-
մանատարի աչքին, որ ուղիղ իր կետերին է
նայում:

Եվ սկսվում է մարտը: }

Երբ թշնամու հրետանին ու ականանետները
դժվարացնում, խանգարում են մեր հետևակի
դրոհը, Մորոզովը հրաման է ստանում—լուցնել
դրանք: Հնչում է սեփական հրամանը իր ականա-
ձիղներին: Գործում է ահեղ զենքը: Ականները
հակառակի շառաչով պատռում են օդային տարա-
ծությունները, պայթում թշնամու դիրքերի վրա և
ոչնչացնում նրա զենքն ու մարդկանց, օդն են
ցնդում երկաթի ու ֆաչխատական դարչելի մար-
մինների կտորտանքները: Դիտակետերից զեկու-
ցում են ռազմական հակիրճ լեզվով:

— Цель подавлена...

Ահա զեկուցում են, որ այսինչ տարածու-
թյան վրա, այսինչ ուղղությամբ տեղի է ու-
նենում թշնամու հետևակի շարժում, ուժերի

կենտրոնացում, որը նպատակ ունի ճնշում կատարել մեր զորամասի այս կամ այն թևի վրա:

Բայց կան քաջարի մեր ականաձիգները, կան վառվռուն հայրենասեր Ալեքսանդր Մորոզովը, Ասլանյանը, Ողնին. նրանք բազեի աչքերով հետևում են սոսիի բոլոր դալարումներին: Ու կրկին գործում են ականանետները: Ցաք ու ցրիվ են լինում լամբողջ դումարտակներ, ոչընչանում են ամբողջ վաշտեր, մազապուրծ եղածները հետ են սողում եկած ճանապարհով:

Ճանապարհների վրա նկատվում են թշնամու ավտոշարասյուներ, որ ռազմամթերք են տեղափոխում, ձիասայլեր, ասհնակներ: Մի քանի բոսկե հետո կրկին օդն են թռչում մեքենաների մասերը, ձիերն՝ իրենց տերերի հետ, պայթում են դինամիթերքները դժոխային ադմուկով և փոշի ու մոխիր փռում շուրջը:

Արյունարբու թշնամիները դիմում են վերջին, հուսահատական փորձին, մեր ստորաբաժանումների վրա «հողեբանական գրոհի» են դալիս, դալիս են ամբողջ հասակով «աներեր» երևալու համար: Իսկ մերոնք հրավիրում են.

«Եկեք, խնդրեմ, մոտ եկեք», և՛ ղիմալորում
են նրանց արժանալոր կերպով, քաջի պես,
ինչպես բուլլեիկներն առհասարակ դիտեն ղիմա-
լորել թշնամիներին: Երգում են գնդացիները,
ձայնակցում են հրացանների համազարկերը:
Մարդակեր դեերի շարքերը նոսրանում են, «ս-
մուր» հողերը թուլանում, ապա նրանք սկսում
են հետ-հետ դնալ, մեծանում է կարճացած
աարածությունը մեր ու նրանց միջև: Այդ ժա-
մանակ հասնում են նրանց մեր աղանները,
պայթում «պսիխների» վրա կարկտարեր ամպի
պես և փռում համատարած մահ դարչնադույն
հողիների վրա: |

Այո՛, այս ստորաբաժանման աղանաճիւղներն
սպառնալիք են Փաշխանների համար, որովհետև
նրանց մեջ քաջությունն ու խիզախությունը
զուգակցվել են իրենց ղենքը փայլուն կերպով
իմանալու և՛ մարտ վարելու հնարամտության
հետ: Ե

Շատ անգամ է պատահել, որ թշնամին ա-
մեն միջոցի ղիմել է շարքից հանելու մերային-
ներին: Բայց նրանց տեղը հայտարարելը դժվար
է եղել: Օղանալիերն անընդհատ, ամբողջ օրը

պտույտներ են դործել տեսնելու համար ակա-
 նաճիւղների փակված բույնը, բայց ոչ մի դոր-
 ծիք չի օգնել նրանց՝ նշմարելու մորոզովական-
 ներին, ուռձբեր են նետել բաց տարածություն-
 ների վրա ու վերադարձել և հետո դարմանքով
 տեսել են, որ չեն լուել մեր ականանետները,
 շարունակել են կրակը: Իսկ երբ մորոզովական-
 ներն զգացել են, որ թշնամին արդեն ղլխի է
 ընկնում, թե ո՛րտեղ են դանում իրենք, ամե-
 նաարագ կերպով փոխել են կրակային ղլխքե-
 րը, և այնուհետև Ֆաշիստներն սկսել են ան-
 ընդհատ հրետանային արկերով խփել հին ղլխ-
 քերին:

Մենասքանչելին այն է այս ստորարածան-
 ման մեջ, որ յուրաքանչյուր մարտիկ սովոր է
 իր ընկերոջ մարտավարության ոճին և պատ-
 րաստ է նրա համար իր կյանքը տալ, պատ-
 րաստ է մինչև վերջին շունչը կռվել, բայց կա-
 տարել իր հրամանատարի հրամանը, որ օրենք
 է նրա համար:

— Մի անգամ միայն նշանառու Ուզունյա-
 նը իմ հրամանի դեմ առարկեց կռվի ժամա-
 նակ, — ասում է Մորոզովը, — կրկին ժպտա-

լով, բայց դրա համար ես հետո դրկեցի ու համբուրեցի նրան... Կռվի եռուն պահին թշնամու ականի բեկորը նրան վերապորեց փորից. նա փորը բռնեց, դատին թուլացրեց, ու խիստ ցավ չգրա ու կրկին շարունակեց մարտը: Ես հրամայեցի, որ թողնի՝ հետ գնա դեպի թիկունքը:

— Չեմ գնա, ընկե՛ր լեյտենանտ, — ասում է նա ինձ հայերեն, — խնդրում եմ... թույլ տաս... ու շարունակեց կրակել... արդյունքը հիանալի եղավ: Այդ կրակից ոչնչացավ մոտ մի վաշտի չափի թշնամու հետևակ... Իր այդ հերոսական գործողությունից հետո, մարտական իր խնդիրը կատարելուց հետո նա նոր դիմեց ինձ.

— Հիմա թույլ տվե՞ք սանիտարական պունկտը գնալ, ընկե՛ր լեյտենանտ... — Ես նրան ուղարկեցի բժշկավելու:

Այսպես են կռվում այս զորամասում, առանց ասի ու երկյուղի, մինչև վերջին ուժերը: Մի ուրիշ օրինակ էլ:

Մի անգամ կռվի ժամանակ պակասեց ազանների պաշարը, իսկ թշնամին խիստ կրակի

տակ էր սրահում այն ճանապարհը, որով կարելի էր ականներ բերել: Մորոզովի հրամանով կարծիրբանակային Բերչենկոն թշնամու փոթորկային կրակի տակով հետ դնաց ականներ բերելու: Ականաձիղներն իրենց հերթին խիտ կրակով ճնշեցին թշնամուն և հարկադրեցին, որ նա իր կրակը թուլացնի: Բերչենկոն վերադարձավ, բերելով ճիսասյլի վրա 100 ական, որով ականաձիղները հետ մղեցին թշնամուն և սչնչացրին նրա մի տանկը: Բերչենկոն իր ուսը կրկնեց երեք անգամ էլ, և ստորաբաժանումն ապահովեց ականներով ու օգնեց հետևակին՝ հաջող դործողություններ ծավալելու:

Ամեն մեկը հավատում է իր ուժին ու հաղթանակին, դիտե, որ ինքը ճիշտ է դործելու և անդայժման հաջողություն կունենա: Երբ հետախույզ կասկիներ մի անգամ զեկուցեց, որ Ֆ. դյուդի մոտ հանկարծ երևաց մի քանի վաչո՛խ չափի թշնամու հետևակ, ականաձիղներից ոչ մեկի մկանը չթրթռաց. նրանք դիտեին, որ իրենց անակնկալի չես բերի և որ դերմանացիները չեն ազատվի իրենց կրակից: Անմիջապես ականանետները դործեցին: Մորոզովը այդ ժամա-

նակ հրամանատարական կետից դիտում էր կրակի արդյունքն ու հաճույքով տեսնում, որ չկամի կենդանի տեղ, որ չխփեն իր ակաճանեաները:

— Ես կարող եմ հպարտանալ նրանով, որ իմ ստորաբաժանման հրամանատարներն ինքնուրույն դործելու դեպքում դործում են այնպես, ինչպես ինքս կդործեի,— ասում է Մորուզովը:

Մանվել Ասլանյանին նա բնութագրում է սրպես քաջ հայի, որ ուսսական դաստիարակություն ունի և օսի խարակտեր, այսինքն ազատ ժամանակ կովկասյան զարմանալի ճարպիկ պարերի վարպետ է, ընկերասեր է ու լավ բարեկամ, քաջ է ու համառ՝ կռվի մեջ: Նրա ականանետային դասակը ոչնչացրել է դերմանական մի քանի վաշտ, ելք դուել ամենադժվար մոմենտներին: Մի անգամ պատուեց նա շքապատման օդակն ու իր դասակով դուրս եկավ՝ ճանապարհին թողնելով դերմանացիների դիակները: Նա դաստիարակել է գինեյորներ, որոնք մահվան նայում են արհամարհանքով: Չնայած դրան,

Ասլանյանը ոչ մի կորուստ չէ ունեցել կռվի
•րից:

Դիպուկ և խորտակիչ է սերժանտ Ողնու
կրակը, որը վրիպումներ տալու սովորություն
չունի: Մի անգամ թշնամու հարձակման ժա-
մանակ խափանվեց կապը: Ողնին իր դասակով
հետո էր, բայց հարկավոր էր, որ նա առաջինը
կրակի: Մորոզովը հետևում է նրան: Չգոր-
ծի՞ր ժամանակից շուտ • կամ չսպասի՞ եր-
կար և ուշանա: Մտի թրթռոցով սպա-
սում էր Մորոզովը:— «Դեռ շուտ է, դեռ շուտ
է»,— կրկնելով ինքնիրեն: Մոտեցավ ամենա-
հարմար ակնթարթը, և Մորոզովն ինքն իրեն
ասաց. «Ա՛յ, այս վայրկյանին եթե կրակե՛ր...
մի բույե հետո արդեն պակաս էֆեկտիվ կլի-
նի»:— Բայց նա դեռ չէր վերջացրել իր միտքը,
երբ շառաչեցին Ողնու ականանեաները:

— Բրավո՛, — բացականչեց Մորոզովն ու-
րախայած:

Ողնու կրակից ոչնչացան թշնամու ականա-
նետային մի մարտկոց և երկու հաստոցավոր
գնդացիք:



Շատ են հայ ժողովրդի приемный сын (հոգևորդի) Սլեքսանդր Պետրովիչ Մորոզովի դործունեությանը զբաղմունքը: Բոլորը պատմել իմ այս անդամվա նամակում հնարավոր է, դուք էլ երկարապատում նամակներ կարգարու քիչ ժամանակ կունենաք: Բայց այնուամենայնիվ մի «զվարճալի գեղք» կուղևի պատմել:

... Երեկոյան կողմ մարտը մեղմացավ: Յերեկը կոյի ժամանակ ելել էին համով սուղ, տիանաձիղներն սպասում էին ճաշի: Խոհանոցը դալիս էր, երբ կրկին թշնամու հրետանու արկը կողով կաթնաչին ու կերակրից մնաց միայն հիշողություն: Այն ժամանակ Մորոզովն ասաց.

— Նրանք խանդարեցին մեզ ճաշել, իսկ եթե իրենք ճաշել են, մենք չպետք է թույլ տանք, որ մարտեն...

— Есть! թույլ չտալ, որ մարտեն, կրկնեցին տիանաձիղները նրա հրամանը: Շատ ֆաշիստներ այդ օրվա կրակից հետո այլևս երբեք քաղց ու ծարավ չեն դդա, որովհետև ճաշի վոխարեն՝ դրկվեցին իրենց նողկալի ոճիրներով հարուստ կյանքից...

Վերջացրեց Մորողովն իր պատմութիւննե-
րը: Մյուսները լրացումներ արին, հիշեցին շատ
բաներ, որ նա մոռացել էր պատմել: Մենք
նստած էինք ուղիարինական մի խրճիթում:
Դրսում՝ հունվարյան սառնամանիքն էր իշխում
և ներս էր թափանցում պատերից: Տանտիրու-
հին վառեց վառարանը:

— Իսկ երաժշտական Ֆինաչն Ասլանյանի
վրա է ընկնում, — առաջարկեց Ալեքսանդր Պետ-
րովիչը: Մի բազե հետո հնչեց ուռսերեն հզոր
լեզվով խմբերգը, որի մեջ կրկնվում էր այս
տունը.

Նայեցեք դուք, իմ հարազատներ,
Նայի՛ր և դու, ջահել իմ կին,
Մենք կուվում պարտովել չգիտենք,
Մենք կուվում ջարդում ենք միայն
Թշնամիներին...

Ես մտածում էի, որ այո՛, նրանք կա-
տարյալ իրավունք ունեն այդպիսի երգ երգելու:

Այդ ժամանակ սկսվեց անակնկալ կրակ:
Թշնամու արկերը պայթեցին մեր խրճիթից ոչ
հեռու: Ականաճիգներն շտապ դուրս եկան:

— Գրի՛ր իմ կողմից էլ բարեկներ հայ ժո-

դովրդին, — ասաց Մորոզովը, — այնտեղ ինձ
ճանաչողներ չատ կան և կրնդունեն իմ բարևը, —
ու և իր խոսքը լրացրեց հայերեն, — բարև, սիրելի
Հայաստան ջան, Մորոզովից...

Գնացին նրանք հարստացնելու իրենց մար-
տական կյանքը նորանոր փառավոր դրվադներ-
ուով: Իսկ ևս նստեցի ահա այս նամակը գրելու
ձեղ: Գործում է քաջ Մորոզովը՝ այդ նախկին
անապատտանը, այժմյան անվանի ականաձիղը:
Ես ականջ եմ դնում ահա և ահեղ աղմուկների
միջից իմ լսողութունը ճանաչում է մեր ական-
ների ուժգին շառաչը: Ալեքսանդր Մորոզովը,
Ասլանյանը, Ողնին և էլի ուրիշները՝ քաջարի
ականաձիղների ստորաբաժանումից, ներկայաց-
վել են կառավարական պարզեատրության:
Նրանք մեր մեծ Հայրենիքի եղբայրական ժողո-
վուրդների հարազատ որդիներն են, Հայրենա-
կան կռվի մեջ կապված իրար նույնքան հա-
մերաչխ սիրով, որքան իրենց մայր ժողովուրդ-
ներն իրար հետ: Նրանցից ամեն մեկի հոգում
հնչում է մեր ընդհանուր մարտական դեմքը՝

— Смерть немецким оккупантам!

1942 թ., հունվար

Գործող Բաճակ

38

ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆ

1

Զինվորական թղթակից Վլադիմիր Դավիդովի հետ միասին վերադառնում էինք կրակի սուսաջավոր դժից: Իրիկնադեմ էր: Արևը պարզ հայացքով մեզ էր նայում հորիզոնի ծայրից և շտապում հանդէլ ձյունադաշտերի վրա:

— Արադացնենք մեր քայլերը, որ գիշերը վրա չհասնի, — փութացնում էր իմ ուղեկիցը, — թե որ մոլորվեցինք, դժվար կլինի այնուհետև մինչև լուսարաց գտնել ճանապարհը:

Հստանք ծանոթ անտառին, երբ արևն արդեն տափաստանին էր քսվում: Հորիզոնի մյուս ծայրին, սուսնց ակնածելու մեր համակարգության թագավորից, ասողերն արդեն մեր աչքերի մեջ էին դրում իրենց փայլիլանքը:

Մկավում էր երեկոյան պարզկան: Գնում էինք, դնում անտառի եզրով և նա չէր վերջանում: Անտառն ուրեմն մեր ծանոթը չէր: Նմանությունը խաբեց: Փռված էր դեպի արևմուտք անծայր տափաստանը: Ծնշող լուսթյուն էր սփրում, թվում էր թե ամեն կյանք մեռել է

սառնամանիքից, միայն ձյան սիթմիկ խշխշոցն էինք լսում սեփական քայլերից:

Ո՞վ է տեսել ձեզնից ուռածական ձմեռը:

Տաք շորերի վրա նաև կաշվե բրդոտ մուշտակ ես հաղնում, ձեռքերիդ այծի մորթուց ձեռնոցներ, գլխիդ ականջադուր տաք դլխարկ, բաց են միայն այտերդ ու աչքերդ, բայց էլ չունչդ սառցակալում է ուռնդերիդ մեջ, ծանրացնում սրտիդ դարկերը, աչքերիցդ սառը քամին դլսրում է արտասուքներ, որ սպիտակ հուլունքաչարի նման մնում են այտերիդ վրա:

Անտառն արդեն խորթանում էր, ինչպես այն գեղեցկուհին, որ հեռվից ծանոթ է երևում քեզ, ժպտում ես, պատրաստվում ես բարեկլու, բայց երբ մոտենում ես, ցույց է տալիս անծանոթի իր մութ հայացքը:

— Պարզ է, որ մոլորվել ենք, — անհանդիմտանում է իմ կուլեզան, — ոչ մի ծանոթ կես չի երևում:

— Այո՛, սխալ ենք եկել, — համաձայնում եմ ես:

Դուրս գալով անտառից՝ մի պահ լուռ

կանգնում ենք երկուսս էլ, զննում տա՛փաս-
տանք:

Առաջին անգամը չէ դա: Մենք վաղուց
վարժվել ենք այդպիսի անակնկալների: Դա մեր
առօրյան է: Չինվորական թղթակիցը պիտի
փնտռի հայրենական պատերազմի հերոսներին,
տեսնի նրանց, լսի նրանց պատմությունները:
Իսկ հերոսը լինում է մարտի մեջ, կրակի
զծում: Նրան դանելու համար պետք է լինում
հաճախ փորձությունների միջով անցնել, սողալ
թշնամու կրակի տակով մինչև դերբերը, իսկ
այնտեղ նրա հետ պաշտպանվել թշնամու հար-
ձակումից, զնալ դրոշի սևփական հերոսի հետ
միասին, բաժանել հաղթանակի խնդությունն ու
ձախորդության դառն զգացմունքը: Քիչ չի պա-
տահում, որ արագ փոխվում է սխտուպիան և
նա չկարողանալով դռնել իր փնտռածը՝ մոլոր-
վում է անձանոթ տարածությունների մեջ: Այդ
դեպքում պիտի հույսը դնի իր հետախուզական
ընդունակությունների վրա, որ ձեռք է բերել
կոփմներում և ձորտի նմանվել այն մարդկանց,
որոնց գործերն է փառաբանում...

Բայց սա չէր իմ ասելիքը: Շեղվեցի պատ-

մությունիցս: Ես պիտի պատճելի, թե ինչպես
այդ օրը սկիզբ առավ մի գեղեցիկ բարեկամու-
թյուն: Անհասարակ այդ զգացմունքը երբ ծըն-
վում է փորձությունների մեջ, մեծ գործերի
օրերին, երբեք չի մեռնում:

Գիշերը կես էր եղել արդեն: Եվ ոչ մի ծա-
նոթ նշան չէր բուսնում մեր հայացքի առաջ:
Միայն գիտեինք, որ ճիշտ է մեր բռնած ուղղու-
թյունը: Դա ասում էր մեզ աստղագաղղ եր-
կինքը, Հարդադողի ճամբան՝ Ծիր կաթինը:
Հաստատ գիտեինք մի բան, որ պիտի գտնենք
«մեր» փոքրիկ խուտորը, և այնպես բարի պա-
ռավ Յուլիանե Իվանովնայի տնակը: Նա սպա-
սում է մեզ գիշերվա այս ուշ ժամին և ան-
հանդատանում է մեզ համար, անհանդատանում
է հարազատ մոր, սիրող դայակի պես: Ես ինք-
նաբերաբար արձասանում եմ.

Подруга дней моих суровых,
Голубка, дряхлая моя...

Դավիդովը կանգ է առնում, դարձյալ ա-
կանջ դնում: Շուրջը լռություն է տիրում: Նա
հարցնում է.

— Ո՞ւմ կարող ենք հանդիպել այս գիշեր,
բարեկամի՞, թե՞ թշնամու:

— Բարեկամի՞, — ասում եմ ես, — եթե ըն-
կել ենք թշնամու գրաված դռտին, ասյա գիշեր-
վա այս ժամին անտառի տերը ոչ թե նրանք
կլինեն, այլ պարտիզան Շ-ն, իսկ նրան հանդի-
պելն այսօրվա մեր արկածների ամենադեղեցիկ
Ֆինալը կլինենք... դուցե հենց նրան հանդի-
պենք...

— Տեսնում եմ, բարեկամ, որ ուզում ես
նրա խմբի կոմիտարը դառնալ, — երդի՞նում է
Դավիդովը:

— А что-ж!, վատ չէր լինի...

Ու սկսում ենք խոսել պարտիզան Շ-ի մա-
սին: Նա անանուն շրջանի պարտիազան կոմիտեի
քարտուղարն է և լեզենդար պարտիզանի անուն
է հանել: Նրա խումբն սպառնալիք է դարձել
հալիչտակիչների համար: Շ-ն դարնան ամպի
պես դոռում է թշնամու մրա ձմռան այս օրե-
րին և ահ ու սարսանի տարածում, հայտնվում
է այնտեղ, ուր երբեք նենդ թշնամին նրան չէր
սպասում, մահ է տանում նրանց անակնկալ,

ինչպես եթե պարզ երկնքից կայծակը հանկարծ
խփի ու անհետանա տափաստանի մեջ:

Մենք խոսում ենք Շ-ի մասին ու լռելով
երազում: Տեսնում ենք նրան մեր աչքերի ա-
ռաջ, մտնում նրա խումբը, հարձակվում թշնա-
մու վրա, ջարդում արյունարբունների ցեղի
մարդկանց, շրջապատում շտաբներ, դերի վերց-
նում բլից-դեներալներին: Ի՞նչ ճամբաներով ա-
սես չի անցնում մարդու երեակայությունը:

Բայց ո՞ւր ենք դնում: Ահա շան հաջոց է
լսվում: Ուրեմն մոտերքում գյուղ կա: Գնում
ենք հաջոցի ուղղությամբ, թվում է թե մոտ
է, բայց ինչքան դնում ենք, հաջոցն այնքան
թուլանում է ու հեռանում: Դուրս է եկել
լուսնյակը, լուսավորել է դաշտը: Հանկարծ մեր
աչքերի առաջ երևում են տնակների կոնաուր-
ներ: Ուրախանում ենք: Դա մեր խուտորն է:
Ճշգրիտ ենք որոշած եղել ուղղությունը: Ահա
և մեր բարի Յուլիանե իվանովնայի տունը:
Ծեծում ենք: Լռություն է տիրում: Չէ՞ որ նա
անմիջապես բացում էր ուրիշ անդամ: Ծեծում
ենք կրկին:

— Ո՞վ է, — հարցնում է ներսից ծանոթ,
սիրելի ձայնը:

— Մենք ենք, մայրի՛կ, բաց արեք դուռը:

— Ա՛, դո՞ւք եք...

Բացում է, ներս ենք մտնում:

— Այսօր ուրիշ հյուր էլ ունեմ, — ասում է
նա մեզ միջանցքում:

Ներսում, սուտահան վառարանի վրա նստած,
երկար միբուքավոր մի մարդ ճամբորդական
պարկ է կարում: Նա պատասխանում է մեր
բարեխին և շարունակում իր դործը:

Սկսվում են «մեր դայակի» դուրդուրանք-
ներն ու փայփայանքը: Մոռանում են այդպիսի-
սի ժամանակ ամեն ձախորդություն, քեզ զգում
ես տանը, հարապատ մորդ մոտ:

Խոսում, ծիծաղում ենք:

— Հեռվի՞ց եք գալիս, — հարցնում է մի-
բուքավորը մի պահ ընդհատելով աշխատանքը և
մանրիկ աչքերը հատելով մեզ վրա:

— Այնտեղից, ուր որ գնացել էինք, — պա-
տասխանում է Դավիթովը:

— Իսկ չի՞ կարելի իմանալ, ուր էիք գնա-
ցել. — հարցնում է կրկին նա:

— Մեր սիրուհիները մոտ, — պատասխանում
եմ այս անգամ ես:

Մերուքավորը ժպտում է մի ժպիտով, որ
դժվար է ասել, ինչ ուներ էր մեջ, լուռում և
դլուխը կախելով՝ շարունակում է իր աչքա-
տանքը:

Դավիդովը թղթի կտորի վրա դրում է ինձ.
«Ինչ մարդ է սա, չե՞ս կասկածում որևէ
բան»: — Ես պատասխանում եմ. «Քո արդարի
հարցից հետո անսովոր կասկածել եմ սկսում»...

Ի վանդանս դնում է մյուս սենյակը: Նրա
ետևից դնում եմ ես էլ, հարցնում թե՛ ինչ
մարդ է նրա հյուրը: Նա խորամանկ ժպտում է.

— Լավ մարդ է, վատ մարդ չի, հարևան
դյուղացի է, դործով եկել էր, ուշ էր, չվերա-
դարձավ...

Ու ավելացնում է.

— Ես վատ մարդկանց հյուր չեմ ընդու-
նում...

Ուրիշ ոչինչ...

Ոչինչ չասող այդ հանձնարարականները
Դավիդովին բնավ չեն բախարարում և նա հա-
մառում է, թղթի կտորների վրա դրելով, թե

դերմանացիներն այդպես ցուակն են լինում, այդպիսի ծնոտ ունեն, այդպիսի ճակատ. «Ապա ուշադիր նայիր դեմքի՛ն. մի՞թե կասկածելի չի դրա մոտեթիւր, դրա տերտերական միւրուքը: Թե որ ազնիւ մարդ է, ինչու չի գտնվում բանակում, երկար միւրուքով թաքցնում է իր երկտասարդական հասակը, եւ այլևս չեմ կասկածում, որ այդ ծպտյալն «արիացի» է, հակառակը պնդելու հիմք չունեմ»:

Դավիդովի պատճառաբանություններից ոչ մէկն էլ ինձ հիմնաւոր չէր թվում, բայց նա այնքան հաստատուն կերպով էր կասկած հայտնում, որ ինձ էլ ներշնչեց: Իվանովնան իհարկե ազնիւ սիրտ ունի, բայց նա կարող է խաբւել, միամտորեն կարող է սխալվելով, օձ սնուցել իր սաք ծոցում:

Ու ես սկսում եմ հարց ու փորձը, առանց տոնի մասին մտածելու:

— Ի՞նչ եք անում դուք կես-դիշերով այստեղ:

Նա հանդիստ պատասխանում է.

— Ծամբորդական տոպրակ եմ կարում:

— Իսկ ի՞նչ մարդ եք, ի՞նչ ճամբորդութեան եք պատրաստվում:

— Գնալու եմ այնտեղ, ուր պիտի դնամ. աստծու ստեղծած մարդկանցից մեկն էլ ես եմ...

«Իրոնիայից դուրկ չէ», — մտածում եմ ես և որոշում ինքս էլ այդ ձևով խոսել.

— Ինչո՞ւ համար է ձեր այդ միբուքը. նա օգնո՞ւմ է ձեզ որևէ բանում...

— Բայց ձեզ էլ չի խանդարում կարծեմ:

— Իբր դեղեցկությամբ ուշադրություն է դրավում:

Նա կշտամբանքով դուրսը թափահարում է:

— Է՛, կովկասցի՛, կովկասցի՛, չե՞ս կարող հարգանքով խոսել օտարական մի մարդու հետ, ինչո՞վ է նա արժանի քո ծաղրանքին:

— Ո՞վ ասաց թե ես կովկասցի եմ:

— Մի՞թե ես չեմ ճանաչում մարդկանց. ճանաչում եմ ես և չեմ ծաղրում...

— Ես էլ չեմ ծաղրում, հետաքրքրվում եմ, թե ինչո՞ւ երխաասարդ մի տղամարդ ցանկացել է իբր ջահելությունը ծածկել բոյարական այդ փառահեղ միբուքով...

— Բոյարապետն... չլինել՞ մկրտաւ եք փրչնա-
տում միրուքս կարելու, ինչպէս Պետրոս առա-
ջինն էր կարում բոյարներէ միրուքները...

Ու ծիծաղեց լիաթոք, առողջ ծիծաղով,
որք, չդիտեմ ինչու, դուք եկալ ինձ, բայց ըն-
կերոջս հալածներն դրդուեց, որովհետեւ նա դի-
մեց ավելի սուր լեզվի.

— Դա նպատակահարմար կլիներ, — ա-
սաց, — այն ժամանակ կերևակայելիք դուք ձեր
խկական դեմքով...

Օտարականը առանց նրան նայելու՝ շարու-
նակեց խոսակցութեանն ինձ հետ:

— Да! տեսնում եմ, որ իմ դեմքը դուք է
եկել ձեզ, խկ իմ ուշադրութեանն էլ, ճիշտն
ասած, ձեր ոտքերը դրաւեցին. չե՞ք մըսում
սաղողներով՝ առանց վալենկաների, այսօր 35
ստալինն ցուրտ էր դըսում...

«Յորամանկն է, չի բռնվում», — մտածում եմ
եւ: Երեւում է, որ ավելի ամբացել են Դավի-
դովի կասկածները: Նա ներվային շարժումներ
է անում՝ տեսնելով, որ ես սկսեցի կատակով և
այդպէս էլ շարունակում եմ:

Միրուքավորն ասում է.

— Եթե ընդունեք իմ օգնութիւնը՝ ես կարող եմ առաջարկել այն ձեզ...

Որոշում եմ թույլ տալ, որ նա ինքը խոսակցութիւնը վարի, տեսնենք ի՞նչ է դուրս գալիս:

— Իսկ ինչո՞վ եք ուզում օգնել, — հարցնում եմ ես...

— Ինչով որ կարող եմ, դուք կովկասցի եք, ինչպես տեսնում եմ, դեռ մեր ցրտից ձեր աչքը վախեցած չէ, բայց ձմեռն այստեղ կատակ չի անում, կարող եք ցրտահարվել, այն ժամանակ ոչ մի օդուտ չեք բերի ոչ ոքի...

— Ձեմ բացառում այդպիսի հնարավորութիւն:

— Hy! տեսնում եք... եթե թույլ եք տալիս, ես վաղ առավոտյան կփնտռեմ, ձեզ համար թաղիքի կտոր կճարեմ, սմուր բրեզնետ և իվանովնայի հետ միասին ձեր սապոգների համար տաք չեխոլներ կկարենք... Եղա՞վ... ա՛յ, դա դորժ կլինի, ձեր ոտքերն այլևս չեն մրսի, թե չէ, որ դուք իմ միրուքը ծաղրեք, ես էլ ձեր սապոգները (որոնցով կարող եք լավ չերքեզկա սլարել, բայց սառնամանիքին դիմանալ

կրթեք չեք կարող), բանի նման չի լինի... Հե-
տո դուք էլ, ես էլ կզղջանք, որ այդպիսի լեզ-
վով ենք խոսել իրար հետ...

Ինչ մեղքս թաքցնեմ, նրա խոսքերը հնչում
էին այնքան անմիջական, այնքան անբռնադժո-
տիկ, որ այդ մարդը սիրելի էր դառնում նույ-
նիսկ: Համենայն դեպս պարզ էր, որ նա հետա-
քըրքրական անձնավորութուն է՝ օժտված խել-
քով ու խոսելու շնորհքով: Նայում եմ նրա դեմ-
քին: Բարի, քրիստոսանման է, խաղաղ, ինչպես
սրբասպասիկեր: Միբուրքը լավ զարդ է տղամարդու
համար, սիրուն է, երբ մազոտ դեմքի վրա վայ-
լում են դեղեցիկ աչքեր՝ լի կյանքով ու աշխու-
ժով:

Բայց դե՛, այդ բոլորը միայն տպավորու-
թյուններ են: Դավիդովն արդեն ակնհայտ գլխ-
դոհություններ է ցույց տալիս, որ ես դադա-
րեցի կասկածել, որ չեմ ստուգում այդ մարդու
ինքնությունը:

— Քնեցեք, ընկերներ՝, լուսաբացը մոտ
է, — ասում է անծանոթը, — տեսնում եմ, որ
չատ եք հողնած...

— Շնորհակալությունն ձեր հողատարությանն համար, — ասում է Դավիդովը:

Նա պատկում էր քնելու: Անձանոթը մյուս սենյակին է անցնում, պտուղալ իվանովնայի ննջարանը: Նա աչնակի պիտի քնի: Նա մեզ բարի դիչեր է մտղթում, ապա դուռը ծածկում իր վրա:

Դավիդովը բռնում է կողքի, վազում, «հիմնավորում»: Ապա կատակում է.

՝ — Ահա արկածների հաջող Փինալ, ուզում էիր պարտիզան Ծ-ին հանդիպել ճանապարհին, բայց այս աղվեսին հանդիպեցիր...

Ու էլի լուրջ տոն ընդունելով՝ հարցնում է.

— Բայց մի՞թե դժվար էր վաստակաբեր զարգանալ:

Իրավացի է նա: Նվ դնում, ինքը ծեծում է դուռը:

— Քաղաքացի՛, ցույց տվեք ձեր վաստակաբերը:

— Ահա թե ինչ, բայց ինչո՞ւ այդքան ուշ եք հարցնում:

— Դա մեր գործն է, — ասում է Դավիդովը:

Անձանոթը դալիս է մեր սենյակը, քանդում
 ծոցը և ոչ թե Դավիդովին, այլ ինձ է պարզում
 մի քառածալ թուղթ: Բացում եմ: Ձինվորական
 մի բժշկական հանձնաժողովի վկայական է, որ
 հաստատում է, թե՛ Նիկոլայ Վասիլևիչ Բա-
 բենկոն (այսինչ շրջանի, այսինչ դյուզագի),
 ազատված է գլխավորական ծառայությունից
 ծանր ուսման ժամանակ, տուբերկուլյոզի և կարճատև
 սության պատճառով, լմանում ենք նաև, որ նա
 1900 թվի ծնված է, աղբությամբ ուղրաինացի:
 Վկայականի վրա նրա լուսանկարն է, նույն
 կերպարանքով, ինչպես հիմա կանդնած է մեր
 աչքերի առաջ: Վերադարձնում եմ իրեն:

— Բավարարված էք, — հարցնում է նա:

— Պետք էր նայել, — ասում եմ ես:

— Ճիշտ է:

Միջամտում է Յուլիանե Իվանովնան:

— Լավ մարդ է Նիկոլայ Վասիլևիչը,
 լավ, մի՞ք կասկածի. դուք ուրեմն չհավատա-
 ցի՞ք պառավիս. կարծում եք թե կարող եմ
 դավաճա՞ն էլ դառնալ...

Նորից պատկում ենք: Դավիդովն այլևս ոչ
 չինչ չի ասում: Կ

Կարծես նոր էր, որ աչքերս փակել էի, երբ
զգացի, որ մեկն ինձ շարժել սկսեց:

— Վե՛ր կացե՛ք, բարեկա՛մ, վե՛ր կացե՛ք...

Աչքերս բացեցի: Նորածանոթն էր:

— Վե՛ր կացե՛ք, սկսվել է մարտը...

Շտապ հազնվեցինք, դուրս եկանք բակը:
Լուսանում էր: Լսվում էր հեռվից հրետանու
որոտը, հորիզոնի վրա սպիտակ փայլով պայ-
թում էին հրթիռներն ու հանդուհում:

— Այդ մերոնք գրոհի գնացին, — ասում եմ
ես, — դնա՛նք, Դավիթո՛վ...

— Շտապո՞ւմ եք, — հարցնում է Նիկոլայ
Վասիլևիչը, — եթե մի ժամ սպասեք, ձեր սա-
պողների տաք չեխոլներն արդեն պատրաստ կի-
նեն, կարում եմ, համարյա վերջացնելու վրա
եմ:

— Երեք ժամ հետո պիտի շարժվենք, — դի-
մելով ինձ՝ ասում է Դավիթովը, — դեռ հող-
վածներ պիտի մշակենք, թողնենք լամբադրու-
թյանը...

Ներս ենք դնում: Նիկոլայ Վասիլևիչն արդեն
ափարտել է: Չափում է ոտքերիս վրա: Գրկում
է կոչիկս, դնում կրծքին, նշանակում ավելին,

պահասը. մեկը մի քիչ նեղ է, մյուսն՝ ընդհա-
կառակը: Քանդում է կարածը, կտրատում մըկ-
րատով: Կրկին սկսում է կարել:

— Ուզում եմ մ' հարմար լինի քայլելու հա-
մար, և՛ տաք, մի քիչ էլ, թեկուզ դեղեցիկ,
թղթակիցներ եք, ամոթ է...

Նրան օգնում է ի վանովնան:

Մինչ մենք կալարտեինք հողվածները, ար-
դեն վալենկաները պատրաստ էին: Հազա, փոր-
ձեցի քայլել, լավ էր: Ուրախացա: Ձերմ խոս-
քերով շնորհակալություն հայտնեցի:

— Ինչո՞ւ, ինչո՞ւ... Միթե՞ ձեզ համար էր
լավ աշխատանքը և ոչ թե ինձ համար... էլ ո՞րն
է իմ դործը, ինքս չեմ կուլում, ոչինչ չեմ ա-
նում, դուք պատերազմի մեջ եք... Օգնելով
ձեզ՝ ես օգնեցի ինձ, իմ երեխաներին, պառավ
Յուլիանեին, որին դուք էլ եք սիրում, ինչպես
տեսնում եմ...

Անկեղծ էր խոսում.

— Իհարկե այդպես է, — ասում եմ ես, —
բայց դե մի ուրիշը կարող էր հանձն չառնել
այդքան չարչարանք, դիչերով թաղիք ու բրե-
դենս չվնասել:

— Բանն էլ հենց այդ է, որ ես չէի կարող չանել,— ասում է նա մի հեղ ժպիտով:

Նրա մանրիկ աչքերը շողում են լինքնազոհ:
Ձերմ մնաս բարով ենք ասում:

— Գուցե երբեք հանդիպենք, բարեկամներ, ևս ձեզ չեմ մոռանա, դուք էլ աշխատեցեք հիշել ինձ... Գրեցեք ճշմարտությունը, ա՛յն, ինչ մարդիկ զգում են իրենց հոգում. լավ ծառայեցեք հայրենիքին...

Ինձ թվաց, թե նա հայլիվ է զսոսում իր արտասուքները:—

«Եթե կեղծ են այս բոլորը,— մտածում եմ,— ուրեմն այս բրդոտն առաջնակարգ մի դերասան է. բայց ինչո՞ւ հավատ չունենալ դեպի մարդը»:

Երկուսս էլ քայլում ենք լուռ: Երբ արդեն հեռացել էինք, ևս հարցնում եմ Գավիղովին:

— Hy! Ի՞նչ ևս մտածում այդ մարդու մասին:

— Լավ բան չեմ մտածում,— ասում է նա,— դու առհասարակ դժուրահավատ ևս, զգայուն, ինչպես բանաստեղծները. իսկ իմ կարծիքով նա կեղծավորի մեկն էր և վարպետորեն

խորամանկ... ունեցողն աշդպես արագաչարժ չէր լինի, առբերվողուլյոցով չի վանդին էլ աչքերի արտահայտությունից եմ ճանաչում, նա երկաթի կուրծք ուներ և առողջ էր եղան պես. վերջապես մի՞թե չէիր նկատում, թե ինչպես արագ էր կարում, ինչպես ճարպկուրեն էր դործածում բիզն ու ասեղք, կարճատեսն աշդպես չէր աշխատի...

— Կույրերն էլ են աշդպես արագաչարժ ու ճարպիկ կարում, — առարկեցի ես:

— Դյուրահավատ ես, դյուրահավատ, — կրկնեց նա:

— Իսկ դու կասկածամիտ ես չարից ավելի. ես չեմ թաքցնում, որ լավ տպավորություն թողեց աշդ մարդն ինձ վրա, նույնիսկ ինչ-որ լավ դրացմունք եմ տածում ես դեպի նա:

— Դա նրանից է, որ ոտքերդ չիմի տաք են, չեն մրսում, — սրախոսեց Դավիդովը, — քո ուժանտիկ վերաբերմունքը դեպի աշխարհը կարող է ցեխին էլ ծխածանի դույներ տալ...

Ինձ միտում էր նույնպես սրամտությամբ պաշտպանվել: Օղնության եկավ ծեր Տուրգենևովը: Հիշեցի նրա խոսքը.

՝ — Ի սե՛ր աստուծո՛ւ, Արկաղէ՛ր, մի՛ խոսիր
այդպէս դեղեցիկ... .

Այդպիսով մեր վեճը դադարեց:

2

... Այդ օրվանից անցել էր մի ամսից ավելի, իսկ ամեն նոր օրը ճակատում բերում է տասնյակ նոր դեպքեր և ակամա անցածը մոռանում ես, թարմ, հաճախ ցնցող տպավորութիւնները դրայվում են հնի տեղը: Իսկ ժամանակն անցնում է և դու ուշադրութիւն չես դարձնում նրան:

Կրկին չարժվում ենք դորամասից-դորամաս, ստորաբաժանումից-ստորաբաժանում, մեկից հեռանալով՝ մյուսին ենք փնտրում: Կրկին նույն ձմեռը, նույն միօրինակ դաշտերը, ձյունով ծածկված նույն նոճիները, ու եղևնիների անտառները հավերժորեն կանաչ, նույն արևը, նույն լուսինը հավասարապես պաղ ու ցուրտ: Չես դգում դու բնութիւն խիստ խաղերը: Մենք սովոր ենք մտածել, որ սառնամանիքը թչնամուհամար է միայն: Մենք լավ ենք դգում մեղ,

մանավանդ որ ետ ենք չպրտում նրանց և առաջ
ենք դնում մեր հարազատ դաշտավայրերում:

Այստեղ, ահա, երեկ նրանք էին: Այսօր ար-
դեն հեռու են և մեր զորքերը կրկնակոխ հետե-
վում են նրանց, զորքերի հետ լուսանկարիչներ,
թղթակիցներ, դրողներ: Ու էլի, ես և զինվորա-
կան թղթակից Վլադիմիր Դավիդովը: Աջ ու
ձախ մեր շուրջը հիտլերական ասպատակու-
թյունների հետքերն են, աղեխարչ պատկերներ:
Թշնամին գլխակորույս փախչում է՝ հրի ու բո-
ցի մասնելով ոուս բարի, սիրելի մարդկանց
տներն ու ընտանիքը, դնդակահարում պառավ-
ներին ու ծերերին, սվինահարում պատանիներին
ու երեխաներին, փախչում է թողնելով ջարդված
տանկեր, մեքենաներ և կանաչավուն ուսաղիւր-
ներով սառած դիակներ: Յերեկը երեկինք է
բարձրանում վառվող դյուղերի ծուխը, գիշեր-
ները հրացուլքը լուսավորում է հորիզոնը:

Մի դյուղի մոտ թշնամին ակտիվ դիմա-
դրություն ցույց տվեց: Առավոտից երեկո տեղի
ունեցան ուժեղ կռիվներ: Թվում էր թե ամենու-
րեք հողի վրա պայթում են ականներ: Որոտում
էր մեր հրետանին՝ ահեղ աղմուկների մեջ

խլացնելով թշնամուն: Դիտակետերից կարելի էր տեսնել, թե ինչպես ոչնչանում են թշնամական ամբողջ խմբեր, քար ու քանդ լինում դիրքերը, ռազմանյութ կրող դերմանական մեքենաները պայթում են մեր արկերից և դժոխային կրակ ու բոց թափում դաշտերի ու մարդկանց վրա: Իրիկնադեմին թշնամու կրակը թուլացավ, մերոնք, ընդհակառակը, ուժեղացրին: Այսօր էլ կրկին մի խիզախ դրոհ էր պատրաստվում:

— Նայի՛ր, բարեկամ, ահա քո վեպի հերոսը, — կանչեց հանկարծ Դավիդովը թևիցս քաշելով, — նրան բռնել են մերոնք...

Ես նայեցի դեպի ձախ: Երկու բանակային առաջներն առած, բերում էին մեր ծանոթին, նրան, որ չեխոլներ կարեց իմ սապոդների համար և իմ ու Դավիդովի վեճի առարկան դարձավ: Նույն շեկ, երկար միրուքն էր, նույն խաղ ու անվրդով դեմքը, միայն շորերն էր փոխել: Բայլում էր արագ, թեթև, տասնվեց տարեկան պատանու պես: Եվ ինքնավստահ: Նա մեզ չնկատեց, իսկ մենք զարմացած նայում էինք նրան:

Բանալսած ինչ դեպի շտաբ էին տանում:

— Տեսնում ես, սիրելի՛ս, — ասաց Դավիթը, — երևում է, որ քո բարեկամը ունի աստիճանով է տառապում, որ կարճատես է... Իմ զգացողությունը երբեք ինձ չի խաբում, նա դերմանական լրտես է, կարողացավ քեզ խաբել, և ես էլ թույլ դտնվեցի ասի ժամանակ, չբանտարկեցի նրան. ինքնեքոս զբում ենք աչալքջության ու զգոնության մասին և ահա չկարողացանք մեզ հանդիպած թշնամու դիմակը վար սունել...

Ես որևէ բան ասել չէի կարող: Նա իրավացի էր: Զգացի խղճի խայթոցներ, հոգիս լցվեց անախտորժ զգացումներով: Ինձ զգում էի մեղավոր ասի սուրբ զործի առջև, որի համար պատրաստ էինք կյանքներս տալ:

— Գնանք նրա հետևից, — ասացի Դավիթը, — նրան շտաբ են տանում:

— Ինչո՞ւ դնանք, տեսել ենք արդեն այդ լրտեսի մոտութը: |

— Կրկին տեսնենք, չէ՞ որ մենք կարող ենք օգնել, որ շտաբ բան պարզվի:

— Ծճարիտ է, — համաձայնեց նա:

Հեիհե հասանք շտաբ: Խնդրեցինք զեկուցել,

որ պետք մեզ ընդունել: Ներս մտանք, բարեկե-
ցինք:

— Ի՞նչ է ձեզ պետք, ընկե՛ր թղթակից-
ներ...

Զինվորական լեզվի հակերճությամբ դեկու-
ցեցինք եղելությունը:

— Սպասեցեք, — ասաց նա և կարգադրեց
ներս բերել բռնվածին:

Ներս բերին: Ինձ թվաց, թե շտաբի պետը
նրան տեսնելով՝ հանկարծակիի եկավ: Բռնվածի
դեմքն էլ փոխվեց, երբ տեսավ մեզ այդտեղ:

Պետք հրամայեց բանակայիններին դուրս
դնալ: Եվ երբ նրանք ծածկեցին դուռն իրենց
ետեից և երբ մենք դեռ չար հայացքներով մեր
ծանոթին էինք նայում, հանկարծ տեղի ունե-
ցավ անսպասելին: Մեր ծանոթն ու շտաբի պետը
գրկախառնվեցին տարիներով իրար չտեսած եր-
կու եղբոր պես: Նրանք համբուրվում էին ջերմ
ողջագուրանքով, իսկ մենք շժամ նայում էինք:

— Ա՛յս լրտեսի հարցաքննությանն էիք ու-
ղում ներկա լինել, — դարձալ պետը մեզ, —
ներկա եղեք, շատ հետաքրքրական բաներ կարող
եք լսել:

— Բարեկամներ, բարեկամներ, նորից
Հանդիպեցինք իրար,— բացականչեց Նիկոլայ
Վասիլևիչը և մոտեցավ ու անդմեց մեր ձեռքը:
Դասվիդովին ասաց,— այս անգամ էլ դուք ինձ
լրտեսի տեղ դրիք, ինչպես առաջին օրը, դուք
կարծում էիք ես չէի հասկանում, թե ինչ եք
դրում ընկերոջը. «այս մարդը կասկածելի է
երևում, լրտես կլինի...»: էի դո՛ւ, կողա՛կ...

Հանկարծ նրա հայացքն ընկավ ոտքերիս:

— Ինչ եմ տեսնում, նոր վալենկաներ եք
ստացել, լա՛վ է, լա՛վ, իմ սարքած բաներն ու-
րեմն պետք չեկա՞ն. ՝

— Ինչպե՞ս չէ, պետք եկան, Նիկոլայ Վա-
սիլևիչ, շատ շնորհակալ եմ... ՝

— Լա՛վ է, լա՛վ— կրկնեց նա: ՝

— Ամենալավն այն է, որ դուք մեր մարդն
եք,— ասացի ես,— շատ ուրախ եմք, որ սխալ-
վեցինք, Նիկոլա՛յ Վասիլևիչ... ՝

Շտաբի պետը ծիծաղեց:

— Նիկոլայ Վասիլևիչ, այդ ի՞նչ անուն
ազգանուն է. ՝

՝ — Թող այդպես ասեն, անո՛ւնը չի կարկո-
րը... ՝

Պետը սրայուտակից հանեց քարտեղն ու թըլ-
թեր :

— Դե ուրե՞մն սկսենք, թղթակիցներն էլ
թող լսեն, — ու դարձավ մեղ, — ընկերներ, ա-
հա հայրենական պատերազմի հերոսներից մեկը,
դուք դործ ունեք հայտնի պարտիզանական խմբի
ղեկավար ընկեր Շ-ի հետ...

Իմ մարմինը սրավաց անակնկալից, ինչպես
լինում է արտակարգորեն լայ, ցնցող լուր լսե-
լիս :

— Ի՞նչ... — համարյա միասին բացականչե-
ցինք ես ու Դավիդովը :

— Այո՛... .

Նրան ներս բերելը, ողջադուրանքն ու այն
ամենը չտեսցին այնքան ժամանակ, ինչքան որ
կարող է տեսլ դրա նկարագրության ընթերցումը :

Պարտիզան Շ-ն սկսեց պատմել : Ուշադիր
լսելով նրան՝ ես միաժամանակ ծոցատետրիցս մի
կտոր թուղթ պոկեցի ու դրեցի Դավիդովին .
«Իմ զղացողությունը երբեք ինձ չի խարում, նա
մեր մարդն է, դու անտեղի կասկածեցիր լե ես
էլ կարճատես դռնվեցի, համեստ մարդու մեջ
չտեսա իսկական հերոսին»...

Նա պատասխանեց .

— Վրեժխնդի՛ր Եղար . . .



Են վերադառնում էր հետախուզությունից :
Մի ամիս շարունակ զործել էր թշնամու թի-
կունքում , հարձակվել նահանջող ալտոշարան-
ների վրա , ոչնչացրել վաշտեր , խլել ղենք ու
մթերքներ , ազատել դ՛նդակահարությունից տղա-
մարդկանց , կանանց ու երեխաների , վրկել ազ-
նիով քաղաքացիների կյանքը , ժողովրդական իր
արդար ձեռքով պատժել դավաճաններին ու ծախ-
վածներին , զրկել նրանց կյանքից , ինչպես մարդն
իր սեփական մարմնի վրա երևացող թարախի բըշ-
տիկն է կտրում : Գիշերով մտել է նա գերմա-
նական շտաբներն ու դաշունահարել սպաների ,
որ հավետ քնած մնան , չսպանեն ու չթալանեն
այլևս և վերցրել է փաստաթղթեր , ուղարկել
բանակի հրամանատարությանը . . .

Մենք լսում էինք այդ պատմությունները և
թվում էր թե մեկը բարձրաձայն կարդում է մեզ
համար արկածային մի վեպ , որի հերոսները

դործում են անհավանական քաջություններ, կատարում են անխնայ դործություններ, որոնք կարող են դրվել դրքերում ու պատմվել հեքյաթներին մեջ, բայց կյանքում կհամարվեն անհնարին յև հավատարի չեն լինի: Նա ապա շտաբի պետին պատմեց թշնամու գործասերի տեղի, նրանց դասավորության, թվի, ոտքամթերքի չափի, տրանսպորտի մասին: Պատմեց թե ի՞նչ ուժեր ունեն այս դժի վրա մեր գործասի դեմ պաշտպանվող գերմանացիները, այդ ուժերը ո՞ր կողմից, ի՞նչ քանակով են դասավորված, ի՞նչ զենքեր ունեն:

Ինձ զարմացնում էր, թե ինչպիսի՞ ճշգրտությամբ էր նա իմացել այդ ամենը և ինչպե՞ս է մտքում պահել այդքան թվեր ու մանրամասնություններ: ՝

— Ինչպե՞ս եք այդ բոլորը հիշում,— միջամտելով հարցրի ես:

— Պետք է հիշել, դրա համար էլ հիշում եմ,— պատասխանեց նա ինձ ու շարունակեց իր պատմությունը:

Դրսից լավում էր մեր հրետանու հետզհետե ուժեղացող կրակը: Թշնամու արկերն ստեպ-

ստեպ էին պայթում մեզ մոտիկ տարածութիւնն
ների վրա: Կողքի սենյակում տիրում էր աշ-
խույժ անցուդարձ, հեռախոսային խոսակցու-
թիւններ, հրամանների փոխանցում ստորաբա-
ժանումներին: Մի արկ պայթեց մեր խրճիթի
մոտ, բեկորներից մեկը ջարդեց լուսամուտը և
չառաչունով կպավ դիմացի պատին՝ անցնելով
Ծ-ի գլխի մոտով:

Ոտքի կանգնեցինք:

— Դուրս գանք, կարող է կրկնվել.— ասաց
պետը, ապա դիմեց մեզ, — լուսաբացին դրոճի
ենք գնալու, ընկերներ, եկեք մեզ հետ, լակ
այժմ Ծ-ի հետ դնում ենք գործով, հետո կհան-
դիպենք...

Ծ-ն մոտեցավ ինձ:

— Անպայման կհանդիպենք, ես ու դու խո-
սելու նյութ կգտնենք, ես շատ եմ հիշել ձեզ
այս ամսվա ընթացքում, հիշում ու ծիծաղում
էի, թե ինչպես պիտի բռնել էիք միբուքիցս,
բաց չէիք թողնում: Յտեսութիւն, եթե չհան-
դիպենք, ողջուններ Կովկասին, կտեսնենք մի
օր ձեր Կովկասը, կապրենք կտեսնենք, մենք
ապրող ժողովուրդ ենք...

Սահնակը թեթև աահեց, ապա թոյրեց նը-
րանց դեպի այն կողմը, սրտեղից լսվում էր
ուաղմի որոտ ու ճարճատյուն:

Պարզիկա էր և լուսնիկա: Ռուսական հուն-
վարյան երեկո, որ իր դաժանության մեջ ան-
հուն հմայք ունի:

3

... Մենք հողվածներ ենք պատրաստում
վերջին օրերի դեպքերի մասին: Դուռը ձեռնեցին:
Տանաիրուհին դուրս եկավ և վերադառնալով ա-
սաց, որ մի հենակավոր մուժիկ ինձ է հարց-
նում:

Ո՞վ կարող է լինել, որ անուն ազդանունով
ճանաչում է ինձ այս անձանոթ տեղերում, ուր
երեկ դեռ վայրենացած դերմանացին էր և մար-
դիկ նոր ևն սթալիսում դաժան մղձավանջից:

Դուրս եկա:

Դուան չեմի մոտ, մի սևի ճանրությունը
հենակին դրած, մյուս ձեռքով նա իր դապա-
րոժյան բեխերն էր ոլորում: Օ՛, մեր բարեկամն
է, մեր Շ-ն: Սիրաս թրթռաց, չէ՞ որ ես սիրա-

Հարվել էի այդ մարդուն, չէ՞ որ սիրում էի նրան, երբ դեռ նույնիսկ չէի տեսել, երբ միայն երազում էի նրա մասին:

Պատմեց, որ ոտքը վերաՎորվել է իր սաղմահան վերջին գործողության ժամանակ, որ հիմա արդեն բժշկվել է, երեք օր հետո նորից գնալու է գործողության: Երբորդ անդամն էր վերաՎորվում ու բժշկվում:

— Գնանք ինձ մտա, — առաջարկեց նա, — սպրում եմ խաղաղ մի անակում, ոչ ոք չկատանի:

— Գնա՛նք...

... Նստած ենք դեմ-դիմաց: Նա ինձ չի նայում, նայում է առաստաղին, կարծես ինչ-որ կետ նրա ուշադրությունը դրախել է: Բայց խոսում է ինձ հետ. աչքերի մեջ լռին մի թախիժ:

Ես հարցնում եմ, թե ինչպես կարողանում է ամեն օր մի նոր կերպարանք ստանալ: Այս անգամ մերուքը չկա և դրա փոխարեն գլնի զապարոթյան բեղեր, նման այն դյուցազուններին, որ թուրքի սուլթանին նամակ են դրում Ռեպինի հայտնի նկարում:

— Հաճե՛լի չի ծպտվելը, — պատասխանում է

նա, — ինչո՞ւ պիտի հարկադրված լինեինք մեզ
անճանաչելի դարձնել, չքայլել ազատ և սեփա-
կան մորթով... Բայց դա էլ պետք է և դրա
համար էլ դժվար չէ... գեղեցիկ էր մեր հայ-
րենիքը. շատ վայելքներ ճաշակեցինք, կյանք է,
միշտ խաղաղ ու երջանիկ աշխատանքի մեջ չես
լինի... ճաշակեցինք հաշտության ու համերաշ-
խության քաղցրությունն ազդերի ու մարդկանց
մեջ, դարձանք եղբայրներ մեկս մեկու համար,
հարազատներ, կառուցեցինք մեր գեղեցիկ աշ-
խարհը... և դեռ ինչե՞ր չէինք անի: Ու ահա
այսպես... դժվար չէ՞, ասում եք, ինձ համար...
նույն հարցը կարող եմ ես ձեզ տալ... Ամեն
մեկը կարծում է, թե իր արածը մեծ ու արտա-
կարգ չէ, սովորական է, այդպես էլ պետք է
լիներ... դժվար բան չկա, երբ պարզ է նպա-
տակը, երբ գիտես ինքդ ո՞վ ես, որտեղից եկար,
ո՞ւր ես գտնվում և ո՞րտեղ պիտի գնաս...

Լուեց նա: Երկար լուեց: Ապա նայեց ինձ,
ձեռքը փաթաթեց մեջքիս.

— Գիտե՞ք, ձեզ շատ էր սիրում պառավ
Յուլիանեն, պատմել էր ինձ նախքան ձեր գալը
այն երեկո և ես էլ սիրեցի ձեզ... Ձեր մեջ

դզացի հարդանք դեպի մարդը, համարյա սեր,
դուք սիրում եք կյանքը... դուք կլմանաք, թե
ի՞նչ բան է բարեկամությունը...

— Ինչո՞ւ եք այդ բոլորն ասում, ի՞մ բարեկամ...

— Չգիտեմ. թեթևանում է սիրտս, երբ ժամանակ է լինում չաղակրատել մտերիմ մարդու հետ, ցանկանում եմ քնքուշ խոսքեր ասել, դրկել, համբուրել.

Ես տեսնում էի, որ Ծ-ն այս անգամ առաջին օրվա մարդը չէ, հանդիստ իրոնիայով խոսող այն առեղծվածային անձանիթը:

Խնդրեցի որ պատմի իր կյանքը:

— Ի՞նչ կարող եմ պատմել, մեր կյանքը մեր ռեվոլյուցիան էր և այսօրն է, տարբեր տեղերում, բայց ապրել ենք մենք բոլորս. էլ միևնույն խորհուրդն ունեցող կյանքը...

Խոսքերը դուրս էին դալիս ծանրությամբ, կցկատուր: Հուզմունքը խանդարում էր:

... Տասը տարեկան դեղջուկ մի տղա էր նա, ծնվել էր այնպիսի խրճիթներից մեկում, որոնց պես հազարներ եմ տեսել ես և որոնք ի-

բար այնպէ՛ս նման են թվում անձանոթ մարդու
աչքին ։

Վաղ մանկության օրերին զբիւլեց ծնողնե-
րից : Մեռան նրանք, թողնելով նրա հետ փոք-
րիկ, շատ փոքրիկ քրոջը : Նա ինքն աշխատեց
ուրիշներէ մոտ, կերակրեց ու մեծացրեց քրոջը,
նույնիսկ կրթութիւն տվեց, ժամանակ չգտալ
ամուսնանալու, բայց քրոջն ամուսնացրեց և սի-
րեց նրա ընտանիքն ու երեխաներին :

... Ու նրանք, ահա, այլևս չկան : Նրանց
բռնեցին դերմանացիները, տանջեցին, խոչտան-
դեցին, ծակծակեցին սվիններով, որ քույրն իր
կղբորը մատնի, հայտնի նրա տեղը : Երիտա-
սարդ կինը հերոսաբար դատարկեց փորձության
բաժակը և մեռալ հերոսուհու մահով : Արհա-
մարհանքով դերմանական սպային նա ասաց .

— Միւսուսն է, ձեր ձեռքը նրան չի հասնի... .

Ասաց ու ընկալ իր աղջկա հետ միասին
դնդացիների հերթից : Փոքրիկի ձեռքն ընկել
էր մօր դեմքին, իսկ դեմքը սառույցի վրա, շի-
կալուն մազերը թափվել էին արյունով ներկված
ձյուներին... .

Նույն դիշերը հողմի նման դյուղ հասալ

Ծ-ի խումբը: Պայթեցին նոնակներն այն անե-
րում, ուր սպաներ էին տեղավորվել, դուրս
քշելով բնակիչներին: Տների շեմերի վրա կանդ-
նել էին ավտոմատներով զինված պարտիզան-
ներ, որ դուռն ասաջ գետնին էին դըրում դուրս
փախչող ամեն գերմանական զինվորի: Բարբա-
րոսները խոնջում-կոնջում էին մորթվող խո-
ղերի նման, դուրս փախչում գիշերային հա-
յուսաներով, որ մինչև լուսարաց դիակ դառնան
սպառնալից: Հարյուրից ավելի արնախումներ
այդ գիշերը հավեա գրկվեցին նոր ոճրագործու-
թյուններ հեղինակելու հնարավորությունից:
Սուր փերցնողը սրից է ընկնում: Երեք սպայի
Շ-ն այդ օրը գերի բռնեց և թշնամու խոր թի-
կունքից դուրս բերելով՝ հանձնեց զինվորական
չտարին:

— Դուք հարյուրապատիկ վրեժ եք լու-
ծել,— ասացի ես,— դա պետք է ձեզ հանդըս-
տացնի...

— Ես հանդիստ եմ թանկագինս,— ասաց
նա,— հանդիստ եմ այն զիտակցությամբ, որ
մենք հարյուրապատիկ վրեժ ենք լուծում և դեռ
կլուծենք արյունարբու թշնամուց, և մենք էլ ժու-

զովքդական վրիժառուներ չէինք լինի, ևթե
 չպատժեինք այդ դադաններին... դա՛ չի բանը :
 Եթե միայն իմ քույրը լիներ... Մի՞թե միչև
 այդ օրն սպանվածներն իմ քույրերը չէին, այ-
 սօր և վաղը նահատակվողները նույնպես հարա-
 դասներ չե՞ն մեզ... Ինձ ասում են, թե քո չըր-
 ջանն արդեն ազատագրվել է, պիտի մնաս չըջա-
 նում աշխատելու, բավական է, ամեն պարտի-
 զան, ասում են, պիտի իր չըջանում դորժի...
 ...Չէ՛, եղբա՛յր, ներեցե՛ք, ես փոքրիկ մի չըր-
 ջանի բնակիչ չեմ, այլ Ուկրաինական Սովետա-
 կան Սոցիալիստական Ռեսպուբլիկայի քաղաքա-
 ցի, ոչ էլ այդպես, ես զավակն եմ Սովետական
 Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միության,
 քանի ազատ չէ Միությունն ամբողջովին, ին-
 չո՞ւ պիտի վտանդի մեջ լինեն ուրիշները, իսկ
 ես թիկունքում...

Ծանր շնչեց : Լուց : Ծիածորճը դիտիվայր
 բանելով՝ խփեց սեղանին, որ մոխիրը թափվի :
 Հանեց դրպանից մախորկայի տոպրակը, ծխա-
 մորճը լցրեց, սեղմեց բութ մատով, լուցկին
 վառեց, բայց չկպցրեց : Դարձավ ինձ .

— Իայց ծանր է այնուամենայնիվ . նրանից

ոչ մի հիշատակ չի մնացել մոտս, նույնիսկ նրա
և երեսնայի լուսանկարը... ամեն ինչ տանն էր,
ամեն ինչ մոխիր դարձավ, այրեցին «կուլտուր-
տրեգեդիաները»...

Լուցիկին վառեց մատերը: Անտարբերու-
թյամբ դեն դեցեց, վառեց նորը, ծխամորձը
կպցրեց:

— Ծուռով այս բոլորը կանցնի, կոչնչանա
թշնամին, կփնտռենք, կգտնենք իրար... այն
ժամանակ ինձ հյուր կդաս, կիմանաս, թե ի՞նչ
բան է Ուկրաինան... Ես գյուղացի եմ ոչ միայն,
այսպես ասած, սոցիալական դրությամբ, այլև
հոգով: Ես հողի ու դաշտի մարդ եմ... կդաս
ինձ մոտ պատերազմից հետո. օ՛, ի՞նչ գեղեցիկ
կլինի ամեն ինչ, դու պատկերացնել չես կա-
րող... Դուրս ես գալիս դաշտ, քամուց խշուժ
են ցորենի ծաղկած արտերը, ակիքները դնում են
մինչև հորիզոնի ծայրը: Քայլում ես, քայլում
ես թվում է թե ողջ աշխարհը կանաչ ցորենով
է ծածկված և վերջ ու ծայր չկա... Օ՛խ, գե-
ղեցիկ է... կդաս այն ժամանակ, երբ ծաղկեն
խնձորենին ու բալենին, երբ բուրի դարունը
Ուկրաինայում...

Շ-ի աչքերը վառվում էին կրակով: Նա երազում էր կարծես ինքն իր հետ: Ինձ թվում էր թե բնութենապաշտ բանաստեղծ է խոսում կողքիս նստած, ցնորուն հայացքը լի սիրով ու ուժանտիկայով, ազդային զգացմունքներով մի բանաստեղծ՝ Տարասի նման, զարարոժցու կերպարանքով:

— Չգիտեմ, կարո՞ղ է որևէ մարդ երկրագործի նման երջանիկ լինել,— շարունակեց նա,— գիտնականն ու գյուտարարն իրենց ստեղծածից դու՛հ են մնում, բայց ասում են, թե երբևմն էլ տանջվում են, որ գրել են այսինչ—այնինչ գիրքը, որովհետև մարդը վտխվում, զարգանում է, խկզիքքը նույնն է մնում, ինչպես տղվել էր... Մեր ստեղծածից մենք դու՛հ ենք մնում միշտ, մեր կյանքի բոլոր շրջաններում: Անցնում ես ահա, տեսնում կարմրող խնձորը ծառի վրա, ունենում ես հաճելի զգացում, որ դու ես այդ ծառը անկել—խնամել, հիշում ես, որ տարիներ առաջ նա դալար մի շիվ էր միայն, անցնում ես քո մշակած փթիթող դաշտերով, հողիդ վառավորվում է... ինչքա՛ն աշխատում էի ես, ինչքա՛ն աշխատում... իմ սերն էր ինձ դեպի դաշ-

տերը մղում, ոչ թե պարտականությունը, որի նկատմամբ նույնպես միշտ ակնածանք եմ ունեցել, մոռանում էի ինքս ինձ, երեկոյան դալիս անկողին էի մտնում հողնած մարմնով, բայց խղճով ու հոգով խաղաղ ու հանդիստ... ինձ արժանի դարձրին Լենինի շքանշանի, դոկեցին թերթերում, շատ շատերը դալիս էին ինձ մոտ, որ բացատրեմ հողի լեզուն: Իսկ երբ ինձ տարան շրջանի պարտիական կոմիտեում աշխատելու, անկեղծ եմ ասում, տխրեցի... Բայց էլի դաշտերից չէի կտրվում... Ասում են Լեյ Նիկոլակիչ Տոլստոյը հանդսաացնում էր իր հողին դրքերից ու փելիստիայություններեց՝ երկրադործության մեջ, ծառեր էր տնկում ու խնամում, անխոնջ հնձվոր էր, թափառում էր դաշտերում, ճանաչում էր խոտերի ու ծաղիկների բոլոր տեսակները...

Կրկին լռեց, որ քիչ հետո շարունակի:

— Շատ են դոյում կովկասը, մեր Հայրենիքի մարդարիտն է... ափսոսում եմ, որ չեմ տեսել, ցանկանում էի դալ, այնպես էլ չհաջողվեց...

Հանեց դրականից ժամացույցը, նայեց:

— Ու՛շ է, սխտի բաժանվենք, դրեցեք իմ հնարավոր հասցեները, թողեք ձեր տան և գին՝ վորական հասցեն... թողեք ինձ որևէ հիշատակ, և թե ունեք...

Ոտքի կանդնեցինք:

Ի՛նչ կարող էի թողնել ևս նրան: Ուզում էի ամեն ինչ տալ այդ մարդուն: Ոչինչ չկար մոտս:

Մի միտք ծագեց մեջս հանկարծ:

Հանեցի ծոցիցս կնոջս և իմ դստեր լուսանկարը, ինձ համար ամենաթանկագին սուվենիրը պատերազմի ճակատում:

— Ահա քեզ հիշատակ, սիրելի՛ Շ.— այնպես կարծիր, թե սա քո քրոջ լուսանկարն է իր վտարիկ աղջկա հետ...

Արագ ձեռքիցս վախցրեց: Նայեց: Այտի մկանները թրթռացին: Մանրվի աչքերում շողաց արտասուքը... Մոտեցավ, մի ձեռքով ամուր գրկեց ինձ, մյուսով լուսանկարը պահելով հայացքի առաջ:

— Եղբայրի՛կ իմ, եղբայրի՛կ... Սա ամենասուրբ նվերն է ինձ, մեր բարեկամության նվիրական նշանը... Դու հատկացար ինձ, չնոր-

Հակալ եմ... կազատագրվի մեր Հայրենիքը և ես կզամ ձեզ մոտ և նա ինձ կընդունի հարազատ քրոջ պես, հավատացած եմ... Ձէ, դուք կգաք միասին ինձ մոտ, ես ցույց կտամ ձեզ Ուկրաինան, մեր Հայրենի հողը... այո՛, հողը... իսկ հիմա, եղբայրի՛կ, բաժանվենք... հարցրու իմ մասին, շուտով կլսես, թե ինչպէս վրեժխնդիր կլինեմ ես թշնամուն, երբ լսես՝ իմացիր, որ դա կլինի հավերժացումն մեր այս բարեկամութեան ուխտի... Մնա՛ս բարով... Ողջունենեք քրոջս ու երեխային, ես ինքս էլ կզրեմ նրան... Մնա՛ս բարով.

Смерть немецким оккупантам!



Երեկ վաղիվից Դավիդովն ինձ մոտ վազեց ու ասետեց, որ Շ-ի պարտիզանական խմբի քաջերից մեկն այս բոպելին մեր շտաբումն է: Փութացիներ տեսնել: Բայց նա արդէն չկար, անմիջապես վերադարձել էր: Շտաբում պատմեցին այն դյուցազնական դործերը, որ պարտիզանների պետ Շ-ն կատարել է վերջին օրերս թշնամու թիկունքում, դժվարին, ահալոր դործեր, որ

Համլիտենական փառքի լուսասպասկով կարող են
ղարդարել նրա ճակատը և ժողովրդական երդ ու
առասպելի նյութ դառնալ: Ես լսում էի այդ
պատմությունները խորին հուղմունքով և թվում
էր, թե ինձ է պատկանում այդ փառքի կեար,
թե հարադատ եղբորս սիրագործություններն են
պատմում ինձ... Աչքերիս առաջ էր նրա բարի,
անմոռաց դեմքը, բարի ու խաղաղ, ինչպես
սրբանկար, և սիրով ու կրակով լի, երբ երա-
զում էր իր հայրենիքի վաղվա մասին: Ես ապ-
րում էի հպարտության ու երջանկության զղաց-
մունքներ մեր բարեկամության համար, չէի մո-
ռանում, որ նա իր հերոսական դործերի վայր-
կյաններին իր ծոցում, իր սրտի վրա է ունեցել
իմ փոքրիկ դստեր, իմ չքնաղ Մերիի լուսանկա-
րը... Բարեկամություն... Այո՛, այդ զղաց-
մունքը երբ ծնվում է փորձությունների մեջ,
մեծ և սուրբ դործերի օրերին, երբեք չի մեռ-
նում...

Երեկ ողջ օրը հուղված էի ևս և որոշեցի
զբել մեր բարեկամության այս պատմությունը:
Հունվարի 30. 1942.

Գործող Բանակ

ՀԵՐՈՍՆԵՐԻ ԺՆՈՒՆԳԸ

Երբեք մարդու հոգու առաքինություններն աշնակա արագ չեն ծաղկում, ինչպես իր հայրենիքի համար անարդ թշնամու դեմ կռվի ելնելիս: Հայրենական պատերազմը մարդ-քաղաքացու համար մի սքանչելի փորձություն է, որ սենսողենյան ճառագայթների պես բացում ու կարդում է աշն բուր լավն ու վեհը, որ նա ունի իր մեջ և ինքն էլ չի տեսնում ու դիտակցում:

Տարիներ շարունակ մայր երկիրը դաստիարակում է իր որդիներին, տալիս է նրանց իր խոհերն ու մտածումները, իր դաղափարներն ու ուժը, սովորեցնում է նրանց իր պատմությունն ու ներշնչում իր դեղեցիկ երազանքներն ազադայի հանդեպ: Այդ ամենը, այսպես ասած՝ միջին մարդու մեջ չես տեսնում ու շոշափում խաղաղ ժամանակ, պարզ օրերին: Դրանք մայր բական կաթի նման լուծվում են նրա արյան ու դիտակցության մեջ ու դառնում անտեսանելի, ինչպես մոր կաթը: Բայց երբ սկսվում է ամպրոպն ու փոթորիկը, փթթում են այդ բարձր ա-

նաքինությունները, ինչպես ալալյան գոտու կա-
նաչն ապրիլյան անձրևներէց հետո :

Մեր այսօրվա կյանքը լի է աշղախի օրի-
նակներով :

1.

...Նա խաղաղ ժամանակ ինխտխտուանե-
րում գիտություններ էր սովորել երկրագործու-
թյան մասին : Մշակում էր հողն ու քննում նրա
դադանիքները : Նա բարձր ձայնով չէր դռում
իր սիրո մասին դեպի հայրենիքը, կուրծք ծե-
ծելով երգումներ չէր անում, ոչ ոք նրանից չէր
լսել գեղեցիկ խոսքերով զարդարված հանդիսա-
վոր խոստումներ : Նա աշխատում էր համեստ
ու նվիրված էր իր գործին : Երբ երկրի վրա
հարձակվեցին թշնամիները՝ նա զենք վերցրեց
ու ճակատ եկավ միլիոնների հետ միասին, կըր-
կին լուռ, առանց աղմուկի, սուրբ պարտքի
լռին գիտակցութեամբ, ինչպես ճշմարիտ ուխ-
տավոր : Մեր թերթի ընթերցողներից չատերը
կճանաչեն դուրդատես Դավիթ Ալեախյանին,
որ աշխատում էր Սիսիանի շրջանում : Իսկ այ-
սօր արդեն պարտավոր են ճանաչել նրան ամեն-
քը, նա արժանի է երգվելու բանաստեղծների

կողմից, ինչպես երգվել են մեր նախնի Դավիթ-
ները:

Ռազմական տաղանդը ծաղկեց նրա մեջ
հանկարծ, աննկատելիորեն, «միջին» մարդը
դարձավ հերոս, դարձավ հիացմունքի ու ակ-
նածանքի առարկա:

Առաջին փառավոր հաջողությունները, որ
ունեցավ նա թշնամու դեմ մղած կռիվների մեջ,
չչմեցրին նրան: Զսպված հերքին լրջությունը
նրան սովորեցնում էր ողջախոհություն մարտա-
վարության մեջ, սովորեցնում էր հնարամտու-
թյուն, համառություն, դառն ձախողություն-
ներից չհուսահատվելու հոգեկան արիություն:

Պատմել բոլոր գործերի մասին, որ կատա-
րել է քաջ Դավիթը, հնարավոր չէ. հիշենք մի-
այն երկու անմոռաց դրվագ նրա մարտական
գործունեությունից:

... Զորամասը դրոհում էր թշնամու վրա
համազարկերով, նռնակներով ու սլիններով,
դուրս քշում նրանց դյուղերից, կրակի ու բոցե-
րի միջից ազատում կանանց և երեխաներին,
փրկում մարդկանց կյանքն ու պատվը: Մեր
ստորաբաժանումներից երեքը, որոնցից մեկի

հրամանատարը Դավիթ Ալեկտիսյանն էր, ձեռքերով թշնամու պաշտպանության գոտին, ուժգին կերպով մեխակցին նրա մարմնի մեջ, հասան նրա թիկունքը:

Իջավ երեկոն: Օրվա ճակատամարտերը մեղմացան: Գերմանացին դիչերվա մթից վախենում է, ինչպես սատանան լույսից: Պետք է մինչև լուսաբաց նրան պարտության մատնել: Բայց ամեն ինչ կռվի մեջ չի լինում այնպես, ինչպես նախօրոք գծում են թղթի վրա: Թշնամու միտքն էլ է գործում: Վաս է այն ռազմիկը, որը չի ձգտում կռահել թշնամու խարդախությունները և միայն իր գծումներով է տարվում:

Ալեկտիսյանն առաջարկեց վերջին անգամ հետախուզությամբ պարզել թշնամու ուժերի դասավորությունը, սպա նոր գործողության որոշում ընդունել: Հետախուզությունը գործեց: Վերադարձավ: Պարզվեց, որ գերմանացիները կարելի են ստորաբաժանման թիկունքը և մերոնց անջատել գլխավոր ուժերից: Մերոնք ուրեմն շրջապատման մեջ էին: Կես դիչերին գերքերի մեջ հավաքվեցին ստորաբաժանումների հրամանատարներն ու քաղաքական ղեկավարները՝

խորհրդակցելու ելքի մասին: Եղան զանազան
առաջարկներ, բոլորն էլ բանական ու համոզե-
ցուցիչ, բայց բոլորն էլ ուղում էին Դավթի
խոսքը լսել:

— Դուք ի՞նչ կասեիք, ավա՛ղ լեյտենանտ, —
դիմեց նրան ավաղ քաղղեկ Յանովսկին:

Դավթիթը մի պահ լռեց: Թվում էր, թե նոր
է որոշում ասելիքը:

— Ես առաջարկում եմ, — սկսեց նա ծանր
ու դանդաղ. — առաջարկում եմ թույլ տալ ամ-
բողջ պատասխանատվությունը ինձ վրա վերց-
նելու...

Այսպե՛ս նա այնպիսի տոնով, որ ցույց էր տա-
լիս, թե նա վաղուց է մտածել նախքան այդպի-
սի որոշում ընդունելը: Բոլորը թեթև չունչ քա-
շեցին: Նրանք ճանաչում էին Դավթին: Դա ա-
ռաջին փորձությունը չէր: Եթե նա, Դավթիթը
հավատում է դորժին, ուրեմն անհաջողություն
չի լինի: Միաձայն հայտնության արժանացա՛յ
նրա առաջարկը: Գիտե՞ք, թե ինչ է նշանակում
այդպիսի բոլի՛ն ցանկանալ պատասխանատվու-
թյունն իր վրա վերցնել... Դա հերոսության
սկիզբն է:

— Այսպիսով ընդհանուր հրամանատարը ես եմ, — ասաց նա. — Բոլորն ինձ են ենթարկվում. ուրախ կլինեմ, որ մեր շարքերում ոչ մի վախկոտ չգտնվի:

Եվ նա շարադրեց իր առաջին հրամանը: Չպետք է հետ դառնալ ու կոպիլ բռնվել թիկունքն անցած դերմանացիներէ հետ: Նրանք սպասում են դրան և պատրաստվել են: Նրանք կարծում են, թե մենք դա միակ էլքը կհամարենք: Այդ դեպքում բոլոր կողմերից էլ կխփեն մեզ, մենք կընկնենք խաչածե հարվածներէ տակ: Պետք է թիկունքն անցած թշնամուն թողնել իր ուլաններէ վրա հիանա մի քանի ժամ և շարունակել հարձակումն առաջ: Նրանք չեն կարծում, թե հնաքավոր է այդպիսի խիզախության դիմել: Մենք մեր դիմացը եղողներէ հետ հաշիւները կմաքրենք, ձախ կողմից կձեղքենք, դուրս կըդանք մեր թիկունքն անցածներէ թիկունքը: Լուսարացին, երբ նրանք դեռ նոր պիտի պատրաստվեն դոքժողության, մենք կայծակի պես կպայթենք նրանց դիւին...

Ամեն ինչ կախված կլինել մարդկանց քաջությունից: Նա այդ բանը բացատրեց ոչ միայն

հրամանատարներին, այլև բոլոր կարմիրքանակա-
կախներին:

— Եթե պիտի մեռնենք՝ լավ է քաջությամբ
մեռնենք, քան թուլություն ցույց տանք թշնա-
մուն...

Ամենքն էլ երդվեցին լինել այնպես, ինչպես
Դավիթն է պահանջում: Գիշերվա սև խավարի
մեջ ստորաբաժանումները տեղից չարժվեցին:
Առաջնորդում էր Դավիթն իր զորքին՝ հաջող ել-
քի կատարյալ հավատով: Թշնամին հանկարծակիի
եկավ, երբ սկսվեց դիշերային հարձակումը:
Դյուցազուհները նրանց ոչնչացնում էին համա-
զարկերով, նռնակներով, հրացանների կոթերով
փշերով, գանգերով, սվինով խոցելով, դաշույնով
մորթելով կանաչ հագուստների մեջ սարսափից
դողդողացող «արխացիներին»: Թշնամին գլուխը
կորցրել էր և չէր հասկանում, թե ինչ է տեղի
ունենում: Խոզի նման կռնչում էին սվինահար-
վող դերմանացիները: Դավիթի խումբը ձախ կող-
մից դերմանացիների սուռոցների ու տնքոցների
միջով ճեղքեց դուրս եկավ, ճանապարհին թող-
նելով թշնամու դիակներն ու կեղտոտ արյուներ:

Ֆաշիստական դերձաբեզու տխարները ճղճղոցով
լաց էին լինում :

Հիմար արդեն պետք էր թիկունքն անցածնե-
րին պատժել, ցույց տալ, որ նրանց այդ բլից-
ալանաշուքան խորտակիչ է հենց իրենց համար :
Դավիթը մի քանի խիզախների ուղարկեց հետա-
խուզության և հրետանախորհրդի հետ կապ հաս-
տատելու :

Լույսը բացվում էր, բարի լույս՝ մերոնց
համար և դժոխք՝ դերձանացիներին : Լեռնային
հեղեղի պես ուժգին նրանց վրա թափվեց Դավ-
թի խումբը : Թշնամու գլխի վրա շառաչում ու
պայթում էին մեր հրետանու արկերը, երկինք
թոցնելով Ֆաշիստական դարչելի մարմինների
կտորատանքները : Թշնամին վախուժատի գլմեց :
Սովետական դյուցազունները սապոդները տրո-
րում էին հիալեբյան սպաների մունդիւրներն ու
նրանց դիակները վրայով առաջ դնում : Այդ գի-
շեր և առավոտ կռվի դաշտում վռվեց դերձա-
նական մարդակներների մոտերեք հարյուր գլակ,
կռվի դաշտում մնացին տասնյակ վերախորհրդեր և
չատ-չատերն էլ իրենց վերքերը վրդելով, արյան
հետքեր թողնելով ճյան վրա՝ վախան դեպի ի-

րենց խոր թիկունքը: Դրանցից շատերի հետևից
հասնում էին Դավիթի զինվորներն ու մահ պար-
զեում նրանց:

Դժվար էր ասել, թե ով աչքի շնչկալ այդ
հերոսական կռվի մեջ: Բոլորն էլ կռվում էին
չտեսնված քաջությամբ, մոլորացքով, փոթորկ-
ված կրքերով, հարբած՝ հայրենիքի սիրով և
սրբազան ստեղծությամբ նրա թշնամիների դեմ:
Կռվում էին, ինչպես ինքը՝ Դավիթը:

Գրոհը թշնամու վրա՝ շարունակվեց:

...Մի ուրիշ անգամ, ամուր պահելով իր
զծամասը՝ Դավիթը պարզեց, որ թշնամին գրո-
հի է պատրաստվում իր վրա:

— Շատ լավ, եկե՛ք, — ասաց նա ինքն իրեն
և իր քաղցեկին կանչեց խորհրդակցելու: Թշնա-
մու ուժերը երեք անգամ գերազանցում էին իր
ստորարածանմանը: Բայց դա ոչինչ չէր նշանա-
կում: Մեկը կարող է տասի դեմ էլ դնալ, և թե
քաջ է: Գիշերով Դավիթը հրամայեց զիրքեր
փորել, մեծ ու խոր գիրքեր: Երբ մի երկու ժամ
հետո հրամանն արգեն կատարված էր, և երբ
արգեն սկսել էին քողարկել թարմ հողը, Դավի-
թը հրամայեց.

— Քողարկումը կատարել վատ... }

— Ի՞նչպես թե.

— Պարզ, ուսերեն լեզվով եմ ասում, քողարկումը կատարել վատ, թողնել ղերքերի առաջ թարմ հողը...

Շատերն այնուամենայնիվ չհասկացան, բայց հրամանատարն անձամբ ստուգեց բոլոր ղերքերը, ճշրտորեն կատարել տվեց իր հրամանը:

— Այժմ առաջ դնալ հարյուր մետր տարածություն դեպի թշնամին, իսկ այս ղերքերը թող այստեղ մնան:

Կատարվեց այդ հրամանն էլ:

— Փորել նո՛ր ղերքեր, արա՛դ, խո՛ր, լա՛վ...

Վերջին հրամանն էլ կատարվեց:

— Քողարկել այժմ այնպես, որ հինգ մետր հեռավորությունից էլ ոչինչ չերե՛վա...

Ողջ գեշեր մարդիկ աշխատեցին: Խիստ հողնեցին: }

— Հանդստանալ՝ երկու ժամ հետո թշնամուն գլխավորելու համար, այս հանդստությունը փրկում է մեր կյանքը և մահ է թշնամու համար, — ասաց Գալիլթը:

Խամբեցին աստղերը պարզկա երկնքում : Լուսաստուղն էլ դունաթափակց : Թշնամին աշխուժացավ : Հին դիրքերի միջից Դավթի զինվորներից մի քանիսը, որոնց նա այնտեղ էր թողել, մի քանի բազե ուժեղ կրակ բացեցին թշնամու վրա և դուքս դալով դիրքերից՝ առաջ սողացին ու յուրայիններին հասան : Թշնամին այնպես էլ հավատաց, թե հին տեղումն են ամբացած մերոնք : Հեռագրիտակներն առհասարակ չատ են խարում դեմանացիներին : Ինչե՛ր ասես, որ չեն տեսնում նրանք հեռագրիտակների վողերից... Երևի ինդացին օրեր-լեյտենանաները, որ բուլչեվիկներն իրենց դիրքերը քողարկել չգիտեն : Ու սկսեցին ահեղ կրակ : Կրակում էին հին դիրքերի վրա : Արկերի ու աղանների բեկորները շառաչով աղոցում էին օդը :

Դավթի զինվորները հանդիստ նստել են նոր, ավելի ապահով դիրքերի մեջ և դվարճանում են թշնամու հիմարության վրա և հպարտ են իրենց քաջ հրամանատարի հնարամտությամբ : Կռիվների մեջ կոխված կորյունների մի խումբ էր դա, որոնցից ամեն մեկը բերել էր իր հետ իր ժողովրդի սևն ու հավատը՝ ուղբեկների, թուրք-

մենների, վրացիների, աղբբնջանցիների, ուս-
 ների, հայերի հավատն ու ուժը: Ամեն մեկն իր
 ժողովրդի պատգամն ունեւր իր սրտում: Թշնա-
 մին գործում էր կատաղի: Կրակն ու ծուխը պա-
 տել էր շուրջը: Քար ու քանդ էին եղել հին
 դիրքերը: Արկերի ու ահանների բեկորներից
 ճարճատում էին մտաիկ ծառերի ճյուղերն ու
 բներից տաշեղներ թռչում, սուլելով օդի մեջ:
 Այդպես տեւց մի քանի ժամ: Թշնամին կարծեց,
 թե մերոնցից այլևս ոչինչ չի մնացել կենդանի
 ու մարտունակ: Այն ժամանակ հիտլերյան հե-
 տեվաին ու ավտոմատավորները դիմեցին գրոհի:
 Գերմանացիները գալիս էին իրենց սերած մեթո-
 դով, «պսիխիկ» գրոհով, որ միայն նրանց հու-
 սահատական ջղաճղության նշանն է: Գալիս էին
 մի քանի հարյուր մարդ, ամբողջ հասակով, եր-
 թային քայլերով: Լսվում էր նույնիսկ հրամա-
 նատարի կոմանդան: Գալիս էին և ոչ ոք կրակ
 չէր բացում: Տիրում էր մի ծանր լուսթյուն:
 Այդպիսի ժամանակ պետք է ունենալ ամուր ու
 հանդիսա ջղեր, արի սերտ, քաջ ոգի: Իսկ Դա-
 վիթն ու իր ղեկավորներն ունեին այդ բոլորը:

Տարածությունը թշնամու դոռոգ շարքերի

և դէրքերում հաստատուն կամքով սպասող մե-
 րայինների մեջ դնալով կարծանում էր: Ահա
 արդեն հարյուր հիսուն մեարի վրա են, ահա
 արդեն հարյուր մեար դարձալ տարածությունը:
 Ոչ ոք չի փորձում կրակել: Սպասում են Դավթի
 հրամանին: Եթե ինքը չի սկսում կրակել, ուրե-
 մըն հրամայում է լուռ մնալ: Հանդիստ չնչելով,
 սպասում են ծանր գնդացիներին մտա դնու-
 ցրորդները, պատրաստ ամեն ակնթարթ գնդակ-
 ների կարկուտ թափելու թշնամու վրա, պատ-
 րաստ սպասում են սնայակերները՝ ամեն վայր-
 կյան ձգելու ձգանը, պատրաստ են դրականների
 արկերը, լիմոնաձև նոնակները:

Ահա նրանք վաթսուն մեարի վրա են: Ե-
 րևում են նույնիսկ սպայական աստիճանների
 նշանները: Լսվում է քայլերի թնդյունը:

— Լսո՛ւ են դալիս . . .

Ասում է Դավթին ինքն իրեն ու սկսում
 առաջին համարակը: Դա ազդանշանն էր: Գոր-
 ծեցին մեկին բոլոր հաստոցավոր ու ձեռքի դըն-
 դացիները, միաժամանակ կրակ սկսեցին բոլոր
 հրաձիղներն ու սնայակերները: Թափվում էին
 դերմանացիներն ինչպես չորացած հասկերը

կարկուտից : Շարքերը երերալով առաջ էին գալիս : Կրակն ուժեղ էր փոթորկից էլ, թջնամին դիակներ էր թողնում իր հետեից, բայց դեռ առաջ էր նայում : Արդեն երեսուն մետրի վրա են : Այդ ժամանակ ահեղ թնդյուններով պայթեցին կանաչ շինելավորների վրա ձեռքի կլոր նունակները : Հիտլերականները ցրվել եկան : Շատերը հետ դարձան ու փախչել սկսեցին : Գերմանական զինվորի փախչելու ընդունակութունն այնուամենայնիվ չի գերազանցում գնդացրային գնդակների արագությանը :

— Ուժեղ, ուժեղ կրակ, — հրամայում է Դավիթը :

— Այլևի՛ ուժեղ...

Անհետացան հիտլերականների դոռոզ շարքերը, կենդանի մնացածները խոհեմութուն համարեցին դիակների պես փռվել դետնին, հուսարով ազատվել կրակից : Գտնվեցին պնդածակատներ էլ նրանց մեջ, որ դեռ առաջ էին դալիս : Դրանք մի քանի սպաներ էին, որ ընկան նախքան դիրքերին հասնելը, իսկ մի հատուկի Փաշիստ սպա, ճարպոտ փորին ավտոմատի կոթը դրած, անկանոն կրակ շաղ տալով դեռ դալիս

էր: Դավիթը վերցրեց բաքվեցի քաղղեկ Պողոս-
յանի ձեռքից դեռ չլցված պոչավոր նռնակն ու
այնպես դիպուկ, այնպես ուժգին նետեց նրա
վրա, որ նռնակը կպալ հաստլիկի քունքին ու
նա ընկավ իր մահը դանելով հակայի հարվա-
ծից:

Ոչ մի դերմանացի չկար ոտքի վրա կանդ-
նած, դժվար էր որոշել թափվածներէն որն
է սպանված, որը՝ կենդանի: Տայց հենց որ մե-
կը տեղում խլլում էր, այնտեղ թափվում էին
գնդակները: Պետք է թույլ չտալ ոչ մի Ֆաչիստ
փորձի կրակ բանալ մերոնց վրա: Ի՞նչ անել հի-
մա, — մտածում էր ամեն մարտիկ ու սպասում
հրամանի:

Դավիթն անհրաժեշտ համարեց, որ ստորա-
բաժանումը հետ սողա դեպի հին դիրքերը, տա-
րածությունը լայնացնելու համար, որ դերանդին
լավ վերցնի հոնը և լասերը փովեն դետնին:
Մարտիկներն իրենց ղենքերով ետ սողացին,
խիկ ինքը երկու քաջի հետ միասին գնդացրային
կրակով ստիպեց թշնամուն չչարժվել տեղից,
պառկած մնալ: Երբ արդեն խումբն ամրացել էր
հին դիրքերում, Դավիթն իր հաղթական ուսե-

ըին դրեց զնդացիին ու ինքն էլ այնտեղ հասալ :
Այնու կրակ չէր տեղում դերմանացիներէ վրա :
Սկսեցին շարժվել : Բայց նրանք չէին կարողացել
դիտել, թե ինչ տեղի ունեցալ : Զղացին միայն
ինչ-որ փոփոխություն : Մտածեցին երեւի նրանք,
որ փամփուշտներ չեն մնացել այլևս մերոնց
մոտ : Մեկ-մեկ սկսեցին ոտքի կանգնել : Ոմանք
հեռ էին փախչում, ոմանք առաջ էին դալիս հու-
սահատ ստնոցներով : Իսկ կրակ զեւ չկար : Բո-
լոր կենդանի մնացածներն արդեն ոտքի վրա
էին :

Փոթորկալի կրակը երկրորդ անգամ հան-
կարծակիի բերեց նրանց : Գնդացիներէր վը-
ռում էին գետնին, ինչպես գերանդին՝ վարժ
հնձվորի ձեռքում՝ կարճ դադարից հետո : Թըչ-
նամին այդ օրը կրեց լիակատար պարտություն :

Այսպես է դործում ահա այն մարդը, որ
կրում է մեր աղգային հերոսների փառավոր ա-
նունը, այսպես է դործում մեր նոր քաջ Դավի-
թը : Նրա մարտական կյանքի ամեն մի օրն ունի
սքանչելի հերոսություններ :

Հիմա Դավիթը մեզ հեռ չէ : Նրան ասացին .
«Դու գյուղատնտեսական դիտություններ ես սո-

վորել խիստուաներում, այժմ դնա Ռազմական
Ակադեմիայում սովորելու, քո մասին լսելով
այդպես է կարգադրել բարձր հրամանատարու-
թյունը»...

Մենք նրան սիրով ճամբու դրինք: Գնաց նա
իր խիղախությանն ու հերոսական ոգուն դու-
մարելու ուղիական բարձր գիտությունը: Մի
քանի ամիս հետո կվերադառնա նա և կկոչի
թշնամու դեմ որպես մեկն այն տաղանդավոր
ուղիակ հերոսներից, որ ամեն օր, ամեն ժամ
ծնվում են հայրենական պատերազմի ահեղ բո-
ցերի մեջ...

2.

...նա բարձրահասակ է, հաղթանդամ,
թխահեր, մեծ ու խելացի աչքերով: Ասենք ի՞նչ
եմ նկարագրում Ռարթուղին, երևանցիներից ո՞վ
չի տեսել նրան, ո՞վ չի հիշում մեր համաքաղա-
քացու պարթև հասակը:

Ահա նա վերադառնում է մարտից: Բարի
ասնտիրուհին ուրախ դիմավորում է նրան.
«Կովկասցին» բարևում է, հանում դաշտային

պայուսակը, որ նման չի սովորական հրամանա-
տարական պայուսակներին, արձակում է ատըր-
ճանակը, որ նման չի մեր ատրճանակներին,
սանրվում է, խակ երբ նստում է ճաշի, բացում
է դաշտային ծալովի գդալն ու պատառաքաղը:
Նրա մոտի իրերից յուրաքանչյուրն ունի իր
հետաքրքրական պատմությունը, որոնցով զբաղ-
վելը մեզ հեռու կտաներ: Բարթոլո Պետրոսյանը
պահում է այդ իրերը և հետո էլ կպահի՝ որպես
սուվենիրներ հայրենական պատերազմից:

Դժվար է գրել Բարթոլոյի մասին լրագրի
սեղմ էջերում: Վեպի ժանրը միայն կարող է
նկարագրել նրա լրիվ կերպարը, եթե հարկավ
չնորհքով օժտված հեղինակ փորձի այդ բանն ա-
նել: Մեր խնդիրը համեստ է՝ տասնյակ դեպքե-
րից ընտրել մի երկուսը և պատմել դրանց ար-
տաքինը, գործողությունը, այն էլ արագ, թը-
սուցիկ՝ հույեբանական հարուստ նյութը թողնե-
լով վաղվա հեղինակին...

... Դա դեռ աչնան օրերին էր, երբ մենք
ժամանակավոր անհաջողությունների դառն
զգացմունքները կուլ տալով՝ ետ էինք գալիս
դեռ: Գալիս էինք ամեն թիղ հող պաշտպանելով

մեր արյունով ու կյանքով, թշնամին սողում էր առաջ իր սևփական դիակներե վրայով: Ահա այդ խամանակ մի անգամ Բարթուղը խնդիր ստացավ իր հետ վերցնել մի դասակ, անցնել թշնամու թիկունքը և համարձակ դործողություններով խանդարել նրան հարձակման դիմելու, օգնել զորամասի աստրաբաժանումներին հակադրոհներե դիմելու: Գիշերով Բարթուղը իր հետ վերցնելով քաջերի մի դասակ, զինված ծանր ու ձեռքի դնդաղիւրներով, անցավ թշնամու թիկունքը: Մինչև լուսադեմ նա սպարզեց իրերե դրությունը: Լուսաբացին վարպետորեն քողարկվելով արևածաղիկներե արտի մեջ՝ նա թույլ սովեց, որ դերմանական դումարտակն առաջ անցնի իրենց մոտից: Գումարտակը գնում էր լրացնելու ճակատում կովոդ դերմանացիների նոսրացած շարքերը: Գնդաղիւրները տարբեր տեղերում էին կրակի կետեր ընտրել: Հրամանատարն սպասում էր հարմար մոմենտին: Հասավ այդ մոմենտը և Բարթուղը հրամայեց. «Կրակե՛լ...»:

Ճարձատեցին դնդաղիւրները տարբեր ուղղություններե: Գերմանացիները խուճապի մատն-

վեցին: Դա նրանց անհասկանալի էր թվում. չէ՞ որ դեռ հեռու էին կրակի դժից: Գերբեւեւյան զառանցանքներն այն ժամանակ նոր ճակատ եկող գերմանացուն երևի ճշմարիտ էին թվում, թե ուսները միայն նահանջում են... առաջին համազարկից մի տասնյակից ավելի Փաշիստ ընկավ: Չանազան կետերում քողարկված դնդացիքներից տեղացող կրակն այն սպավորութունն էր ստեղծում, թե շատ են մերոնք և չըջապատել են նրանց: Գերմանացիները թվով 25—30 անգամ գերազանցում էին սովետական խիզախ հայրենասերներին: Դասակի հրամանատար Ալյոշա Սաղատյանը թողնում էր հլալերականներին մոտենալ մինչև 65—70 մետր և բառացիորեն հրնձում էր նրանց դնդացիքով: Ավելի մոտ թողնելը շատ հուճճ կտար, բայց շուտ կմասներ դաղտնիքը, նպատակահարմար չէր: Այդպես էր պատվիրել սվադ Լեյտենանտ Բարթոլդ Պետրոսյանը:

Կռիվը տևեց տասներեք ժամ: Թշնամին հարկադրված եղավ հրաժարվել այդ օրը դրոհից այդ գծամասի վրա:

Իջավ մուխ, անձրևային գիշերը: Անվահեր-

ները դուրս եկան թշնամու թիկունքից, այդ կռվի ընթացքում անարդ կյանքից զրկելով մոտ 120 զերմանական զավթիչի: Մերոնցից հերոսի արբաղան մահով ընկան միայն հինգ հոգի:

Մի քանի օր հետո Բարթուղն ստացավ մի նոր, ավելի զժվարին մարտական խնդիր: Հանձնարարվեց նրա ստորաբաժանմանը մինչև ատամները զինված թշնամու՝ թվով զերազանց ուժերի դեմ երկու օրվա ընթացքում պաշտպանել Սատառի եզրը: Գիշերով իր ստորաբաժանման հետ զիրքեր փորեց նա, ամբացավ նրանց մեջ ու քողարկվեց: Առավոտյան սկսվեց մարտը: Անընդհատ կրակում էին թշնամու հրետանին ու ականանետները, երկնքից անվերջ ուժեր էին թափում Փաշխատական ուժակոծիչները, կործանիչներն իջնում էին ցած, գնդացիներին չամազարկեր թափում այնտեղ, որտեղ սովետական զինվորներն էին ամրացել: Ահեղ աղմուկից գետինը ցնցվում էր, ինչպես երկրաչարժից: Հրետանու, ականանետների և ավիացիայի ինտենսիվ գործողություններից հետո, Փաշխատական հետեվակը դիմեց գրոհի: Բայց նրան զիմավորեցին մեր քաջերը չտեսնված կրակի փոթորկով: Ցա-

չխաներն ստիպված եղան նահանջել: Մյուս օրն
ամեն ինչ կրկնվեց նույնությամբ և սովետական
դժուրագոյունները ոչ մի քայլ չնահանջեցին: Այնու-
հետև Ֆաշիստական տաք գլուխները մի քիչ
սառեցին, իրենց հաշիվ տվին ու լռեցին այդ
հատվածում: Մի քանի օր հետո, երբ էլի կրկն-
եցին, արդյունքն էլ նույն կերպ կրկնվեց: Մե-
րոնք կպել էին հողին և պոկ չէին դալիս: Երկու
օրվա փոխարեն Բարթուղի ստորաբաժանումը
տաաներիւ օր պահեց իր դժամասը և օգնեց
հրամանատարութեանը լուծելու զօրամասի առաջ
դրված մարտական խնդիրները:

Նույն այդ օրերին էր, որ գիշերով դարան
պահելով թշնամու թիկունքում, նա գերի բռնեց
մի հիտլերական դինձորի: Գերին կծկվում էր
հսկայակերպ հրամանատարի հայացքի տակ, ան-
հասկանալի լեզվով խնդրում, որ իր կյանքը
խնայի: Երբ թարգմանեցին, Բարթուղը բարկա-
ցավ ու իր մեծ թաթով բռնելով նրա ծոծրակից,
բարձրացրեց օդի մեջ: Ֆաշիստը ոտքերը թափա-
հարում էր, ինչպես կախաղանից կախվածը:
Դրեց գետնին:

— Իսկ դուք խնայո՞ւմ եք, հա՞, սրիկանե՛ր...

Այդ խոսքերին հետևեցին կարճո քարքառի լենտի բառերն էլ, որ պատերազմում գործածել կարելի է, բայց թղթի վրա չեն գրում:

— Руски незнай, руски, незнай!

Թոթովում էր հիտլերական այլազակը:

— Ես հայերեն եմ խոսում, ոչ թե ուսերեն, — պատասխանում էր Բարթոլդը, — ... Եթե սիրող էդ է, ինչո՞ւ ես կռվում...

— Незнай, руски, незнай, — կրկնում էր սարսափած Փաշխտը:

Այդ օրերին մի հերթական ճակատամարտի մեջ Բարթոլդն առնական ճայնով քաջության էր կոչում իր զինվորներին: Փաշխտական սնայակների զնդակը կպսվ նրա ոտքին: Այստեղ հերոսութուն գործեց զանգեղուրցի սերժանտ-սնայպեր Մաթևոս Դավթյանը: Իսկ թե ինչպե՞ս, հետո, երբ կխոսենք նրա մասին...

Բարթոլդը երկար չմնաց հիվանդանոցում: Հինգ օր հետո նա այնտեղից դուրս փախավ և հասավ իր ստորաբաժանմանը: Զինվորները ցըն-

ծությամբ ընդունեցին իրենց ավարը լեյտենանտին :

— Ես սիրում եմ ձեզ, ընկերներ, չեմ կարող առանց ձեզ ապրել, սովորել ենք իրար հետ միասին կռվել թշնամու դեմ, կարոտեցի ձեզ, եկա, ձեր կյանքը թանկ է ինձ համար...

Ուրիշ անգամ Բարթուղն աղալիսի խոսքեր չէր ասում իր մարտիկներին: Հաճախ ավելորդ են խոսքերը, երբ զգացմունքներդ ամեն մարդ էլ կարդում է: Այս անգամ կարոտն ստիպեց: Դա հասկանալի զգացմունք է պատերազմում բարեկամեցած մարդկանց համար:

— Ձեր կյանքն էլ մեզ համար է թանկ, ընկե՛ր հրամանատար, լավ կլիներ կարգին բժշկվելիք:

— Ոչինչ, արդեն օպերացիա են արել, կապել, կռվի մեջ կլավանա, աշնտեղ պառկելն ու սպասելը ծանր էր ինձ համար, չունչս կտրվում էր...

Նա ինքն էլ դուրեւ չմտածեց, թե ինչքա՞ն մեծ բարոյական ազդեցութիւն կունենա այդ վարմունքն իր զինվորներին վրա: Երբ հետեյալ օրը նա պատահամբ լսեց նրանցից երկուսի խո-

ստեղծութիւններ, նոր հայեակացաւ. նրանցից մեկն
ասում էր. |

— Մեր հրամանատարը այնպիսի մարդ է,
որ վիրավոր ոտքով ետ եկաւ կռւելու, մենք
ուրեմն պիտի արժանի լինենք նրա բանակային-
ները կոչվելու, այդպիսի մարդու ղեկավարու-
թյան տակ միշտ կհաղթեաւ...

Եվ նրանք հետագա բոլոր կռիւների մեջ
Բարթուղի մարտական, անդամաճան օգնական-
ները դարձան, նրա հետ միասին գործեցին շատ
քաջութիւններ, որոնց մասին ամեն օր դրում
են զինվորական թերթերը, խիզախ արծիւներին
կոչելով «Петросяновцы»...

Ահա այդ սխրագործութիւններից մեկը:

Թշնամին լուսադեմին պաշարեց Պ. դյուղը,
որը հանձնված էր Բարթուղի տորաբաժանման
պաշտպանության: Գերմանացին եկաւ գողի
պես, տմարդի, ինչպես միշտ, բայց անակնկալի
բերել չկարողացաւ: Վայրկենապես մեր քաջերը
պատրաստվեցին կռւի: Կռիւլը տաքացաւ: Հրա-
մանատարն այնտեղ էր, ուր ամենից վտանգավոր
էր: Մի գնդացրորդ սպանվեց թշնամու զնդա-
կից: Երկու գերմանացի վաղեցին, բռնեցին

զնդացիքն ու քաչ տալով սկսեցին տանել: Բարթոլոմէոսը տեսավ: Կռփի սկզբէն նա ոչ մի հրացան չէր թողել թշնամուն, հիմա զնդացի՞ր տա: Դա խայտառակություն կլինի:

— Չուճպաւ, փրկի՛ր զնդացիքը, — հրամայեց նա ուղբէկ քաջ սնայալերին ու ինքն առաջ վազեց նրանից, — արի իմ հետեւից...

Գերմանացիներէից մեկն ընկաւ Չուճպաւի դիպուկ կրակից, իսկ մյուսը, որ սպա էր, Բարթոլոմէոսը նետած նռնակի պայթյունից փչրված գանդը թողեց սաղալարտի մեջ, իսկ մարմինը կտոր-կտոր եղաւ: Միակ բանը, որ անփնաս էր մնացել հիտլերյան սպայից, նրա ատրճանակն էր, որ ահա, քիչ առաջ Բարթոլոմէոսը արձակեց իր վրայից... Բայց մենք խոտացանք նրա իրերի պատմութեամբ չզբաղվել...

Գերմանացիների այդ օրվա ամանոյութան ողբալի արդյունքներն ունեցաւ նրանց համար: Նրանք ցանկանում էին ավար տանել մեր զնդացիքը, թողեցին իրենցը, թողեցին նաև ականներ, հրացաններ, փամփուշտներ, ռազիտապարտ, թողեցին 47 սպանված և 60 վիրավոր:

Այս բոլոր գեղքերը, այսպես առած, մար-

տական անցյալ են այսօր Բարթուղ Պետրոսյանի
համար: Դրանից հետո եկան հայրենական պա-
տերազմի նոր, վառավոր օրեր, հասավ արդար
հատուցման ժամը, արդար վրեժխնդրության
ժամանակը: Հայրենական պատերազմի ամեն մի
մասնակից ցնծությամբ դիմավորեց նոր շրջա-
դարձը, լի սրտով դիմավորեց ժողովրդի ու բա-
նակի առաջնորդի հրամանը պաշտպանական
պատերազմից հարձակման անցնելու մասին:
Մի երեկո հավաքելով իր ստորաբաժանման բո-
լոր բանակայիններին ու հրամանատարներին՝
խոսեց Բարթուղը իր սովորական, հանդիսո
տոնով. «Վաղը հարձակման ենք դնալու: Յոթ
ամիս էր, ապաստմ էինք այս օրվան: Դժվար
կլինի հարձակումը, թշնամին ամբացել է իր
դիրքերում, բայց մեր պարտքն է՝ կամ մեռնել,
կամ դուրս քշել նրան դիրքերից: Ես պատրաստ
եմ մեռնելու հայրենիքի համար, ես մահից չեմ
վախենում. ո՞վ է ինձ հետ»...

— Բոլորս, բոլորս — ձայնեցին ամեն կող-
մից մարտիկները:

— Բոլորս էլ ձեզ հետ կլինենք...

Դա էլ հենց համարվեց միտինգը՝ հարձա-

կումից առաջ: Բարթոլոմէոսը բացատրեց ամեն մեկի խնդիրը, ամեն մեկի հետ առանձին զրույց արեց, սրտադին զրույց: Մյուս օրն առաւիտոյան սկսվեց հարձակումը: Պետրոսյանի ստորաբաժանման խնդիրն էր՝ դուրս քշել Կերմանացիներին Ռ. ավանից և Կրավել աշն: Թշնամին կառուցել էր պաշտպանութեան ամբուլթյուններ: Ամբողջ տեղանքը դռնվում էր հրետանու, ականանետների և զնդացրերի կրակի տակ: Պետք էր գրոհի գնալ բաց տարածությունների վրայով: Ոչինչ սարսափելի չթվաց մարտիկներին: Իրենց հրամանատարի պես արհամարհելով մահը՝ նրանք կրակի ու արկերի պայթյունների միջով հասան թշնամու դիրքերին: Հնչեց հրամանատարի հուժկու ձայնը, որ առյուծի մոնչոցի պես հասավ բոլոր մարտիկներին, հասավ նաև թշնամուն:

— Հանո՛ւն հայրենիքի, հանո՛ւն Ստալինի, առա՛ջ, առա՛ջ...

Բոլորը խոյացան դեպի թշնամին, կրկնելով կոչը: Գերմանացիները սարսափում են սովետական զինվորների ձայնը լսելիս, նրանք դողում են, երբ հայրենիք և Ստալին բառերը կանչելով՝

դեպի իրենց են վազում Կարմիր Բանակի մարտիկները: Հիտլերականները դուրս փախան իրենց ամրացած դիրքերից՝ թողնելով դիակներ, զենքեր և ցավից ու վախից ճչացող վիրավորներ: Գրավելով թշնամու ականանետները՝ Պետրոսյանականները դարձրին դրանք Ֆաշիստների դեմ ու հարյուր ական արձակեցին, մերոնք նրանց դեմ դարձրին նաև նրանց գնդացիները...

Խնդիրը կատարվեց ճշգրտութամբ: Թշնամին թողեց այդ փոքրիկ հատվածում դիակների կույտեր: Ոչ մի զավթիչ սպանված չէր միայն մի գնդակով, այլ մի քանիքից էր ընկել: Մերոնք բոլորն էլ կռվում էին հերոսաբար, մարդկանց դեմքն այրվում էր կրակով: Միայն կոմերիտական Խուրժիլովը ձեռքի գնդացրով ոչնչացրեց 18 Ֆաշիստ, սնայպեր Չումպակը՝ 15, Խայդարովը՝ 8: Ստորաբաժանումը թշնամուց ավար վերցրեց 2 ծանր և 3 ձեռքի գնդացիք, 2 թնդանոթ, երկու ականանետ, հակատանկային զենք, ուղղամթերք:

Այդ օրը ամեն մեկը գոհ մնաց իրենից, որովհետև բոլորի գնդակներից էլ հայրենիքի թշնամիներ էին ընկել, որից՝ չատ, որից՝ քիչ:

Գոհ էր իր դործողությունից նաև Բարթոլո-
 Պետրոսյանը, նրա գլխարկն ու հագուստները
 ծածկվել էին դնդակներից ու ականների բեկոր-
 ներից, բայց նա կենդանի ու առողջ էր մնացել
 և որ գլխավորն է, պատվով էր կատարել իր
 խնդիրը: Երբեք նա իրեն այնքան երջանիկ չէր
 զգացել, ինչպես այդ օրը: Հոգին երդում էր,
 քնքուշ երգեր էր երգում սիրո և հայրենիքի մա-
 սին: Հենց այդ ժամանակ ճակատային նամակա-
 բերը մատուցեց նրան մի փակ ծրար ծանոթ
 ձեռագրով: Հուզմունքից դողաց հերոսը: Բացեց
 նամակը: Տողերը խառնվում էին իրար: Մի պահ
 փակեց աչքերը: Ահա հարազատների կերպա-
 րանքները, երեխաների՝ Մայիկի, Մարտիկի,
 Կիմիկի, Մելսի, ահա սիրելի կնոջ Քնարիկի
 մտերմական ժպիտը: Նա տեսնում էր երեակա-
 յության աչքերով նաև իր նորածին Սամվել
 որդուն, որի առաջին ճիշը դեռ չէր լսել:

Նա նամակը կարդաց արագ, կլանեց միան-
 դամից: Հիշողության մեջ մնացին առանձին
 մտքեր ու նախադասություններ: Ապա կրկին
 սկսեց սկզբից: Երբորդ անդամ ավելի ուշադիր:
 Նախաբանից և առողջության վերաբերող տեղե-

Կություններից հետո կինը նամակով խորհրդա-
 ծում էր ճակատում կռվող ամուսնու հետ-
 «... Բարթուղ ջան, այո՛, ճիշտ եմ ասում:
 Հայրենական պատերազմը ջոկում է իրարից
 մշակույթներին, ու հերոսներին: Հայրենա-
 կան մեծ պատերազմը մի յուրատե-
 սակ ստուգում է մարդու նվիրվածության,
 ազնվության, կամքի և ուժի, նա մղում է սո-
 վետական քաղաքացուն անօրինակ սխրագործու-
 թյունների: Ես քեզ ճանաչում եմ, դու ճիշտ է
 չես գրում ոչինչ, բայց ես հավատացած եմ,
 որ հերոսի պես ես կռվում, որովհետև հայրե-
 նիքի պատիվն ու նրա կյանքը թանկ է քեզ
 համար, քո սեփական կյանքից: Լավ իմա-
 ցիր, որ դու իմ պարծանքն ես, ես քեզա-
 նով հպարտանում եմ, քո անունն ինձ ուժ
 ու համբերություն է տալիս, ուր էլ լինում եմ:
 Հիշում եմ քո խոսքերն ու խրատները, ուր որ
 գնում եմ, քո մասին են հարցնում: Քո ընկեր-
 ները՝ Ավագը, Գարեգինը, Ազիզյանը, Սմբատը,
 Մաթիկը միշտ հետաքրքրվում են քեզնով, ինչ-
 պես նաև Հայկ Միքայելյանը և Ակոպովը, որ
 միշտ գալիս են ինձ մոտ քեզնից տեղեկություն-
 ներ իմանալու: Ես գիտեմ, թե ինչու եմ քո ըն-

կերներն այգֆան սիրում քեզ, որովհետև դու
աղնիվ ես եղել նրանց հանդեպ, ինչպես քո ըն-
տանիքի հանդեպ ես աղնիվ եմ ինչպես քո հայ-
քենիքի: Բարթուղ ջան...»:

Նամակը երկար էր և շարունակվում էր
նույն ոգով: Կինը խնդրում էր հայտնել, թե
ո՞ր օրը և ո՞ր ժամին է վերապրվել ամուսինը,
որ իմանա, թե այդ օրն ու այդ ժամին, այդ
րոպեին ի՞նչով էր դրադված ինքը և ի՞նչ էր
մտածում:

«Հուզված է եղել նամակը գրելիս...»—
մտածեց Բարթուղը և ինքն էլ տարվեց հիշողու-
թյուններով: Հայրենի երկիրը, մտերիմ ընկեր-
ներն իրեն չեն մոռանում, հիշում են: Բարեկե-
ղն Ավագը, Գարեգինը... ինչպե՞ս արագ անցավ
ժամանակը, անցել է քսաներկու տարի, բայց
թվում է, թե երեկ էր, որ նրանք միասին,
զենքը ձեռքներին կռվում էին նույն այս օրվա
դործի համար, կռվում էին հանուն հայ ժողո-
վրդի ազատության, հանուն բողջեթիկյան հաղ-
թանակի: 18—19 տարեկան պատանիներ էին այն
ժամանակ... Հիշողությունները տարան նրան
մինչև մանկությունը, երգրում քաղաքը հիշեց

կրկին՝ ցավադին հիշողությամբ սղոցագործի
այն ընտանիքի ողբերգությունը, որ տասնյակ
հազարների ողբերգությունն էր... այդ ընտա-
նիքի ծնունդն է ինքը: Վերջին քսան-քսանհինգ
տարվա կյանքը անկանոն երազի պես անցավ
նրա մտքի էկրանի վրայով: Հիշեց նաև իր
«անձնական» թշնամիների մասին կնոջ դրած
խոսքերն ու մտածեց. «մենք մեր դարձն ենք
պաշտպանում, այն դադարախնդրը, որին նվիր-
ված ենք, իսկ եթե նրանք խղճի խայթ են ըզ-
րում, թող ալլահը ների նրանց իրենց անամո-
թությունը»...

Այդ ժամանակ մոտեցավ նրան շտաբի աշ-
խատակիցն ու ղեկուցեց.

— Ընկեր ավադ լեյտենանտ, զորամասի
հրամանատարը հրամայեց, որ հենց հիմա ներ-
կայանաք իրեն...

Երեկոյան հայտնի դարձավ մարտիկներին,
որ իրենց հրամանատարին փոխադրում են այլ
զորամաս, նրա հրամանատարության տակ են
ղնում մի քանի անգամ ավելի մեծ ստորաբա-
ժանում: Մարտիկներն ուրախացան հրամանա-
տարի հաջողության համար, բայց տխրեցին, որ

պետք է բաժանուի են: Եվ ճամբու դրին նրան
 դնդացրային հանդիսավոր ՝ հերթ արձակե-
 լով, հանդիսավոր սալյուտով: Բարթուղի
 համար էլ դժվար էր բաժանումը: Գիտեր, որ
 նրանցից որին էլ ինքը դեպի ակնհայտ մահ ու-
 դարկեր, կզնային: Այո՛, նա դաստիարակել էր
 անձնակեր դյուցազուհներ: Դրանցից մեկն ահա
 Մաթևոս Դավթյանը, որի մասին այժմ տեղն
 է, որ պատմենք...

3.

...Քաջ տղա է Սյունյաց աշխարհի ժառու-
 պանժ հերոսների արժանավոր ժառանգ սերժանտ
 Մաթևոս Դավթյանը: Իր ժողովրդի անունն ու
 պատիվը նրա համար ամենից բարձր բանն է և
 ավելի թանկ, քան կյանքը: Եվ նա այդ պատիվը
 միշտ անաղարտ է պահում ամենադաժան
 կռիվների մեջ՝ դերմանական զավթիչների դեմ:
 Անվախ է Դավթյանը, խիզախ է ու կայծակնա-
 յին, ինչպես հայրենի լեռների արձիվը: Նա
 տիպարն է այն նոր մարդու, որին խաղաղ ժա-
 մանակ փնտռում էին զրոյները՝ երգելու և հա-
 ճախ չէին դառնում: Ամենասքանչելի հատկու-

Թյունը նրա մեջ սերն ու նախընթացըն է
դեպի ընկերը, դեպի հրամանատարը: Դա դեպի
հայրենիքն ունեցած սիրո արտահայտություն-
ներից մեկն է: Մշտական ձգտում՝ օգնել ընկե-
րոջը, պաշտպանել հրամանատարին կռվի մեջ,
մշտական արթնություն՝ կանխելու թշնամու
հարվածը, համառ ու անկոտորում կամք՝ ծանր
կռիվների մեջ—ահա՛ Մաթևոս Դավթյանի այն
հատկությունները, որ օգնեցին նրան ռազմի
վարպետության հասնելու դարչնագույն վայրե-
նիներից մեր կյանքը, մեր պատիվն ու արժա-
նապատվությունը, մեր հայրենիքը պաշտպանե-
լու վեհ ու սրբազան դործի մեջ:

...Փաշտոտական սնայակերի գնդակից ոտքից
վիրավորվում է ավագ լեյտենանտ Բարթոլո-
Պետրոսյանը: Սերժանտ Դավթյանը սողում է
նրա մոտ, արագ կապում վերքը: Դա տեսնում է
մի քանի բոլակ:

— Դու հանդիստ եղիր, ընկե՛ր հրամանա-
տար, — ասում է նա, — չեմ թողնի դերմանա-
կան շները քեզ մոտենան... միայն մի քիչ սպա-
սիր, հանդստացիր... սպասիր ինձ...

Ու անհետանում է թվերի մեջ: Գետնին

ծեփված, սողում է նա առաջ, սողում է մա-
յստնեքի միջով, ծածկվում թմբեքի սակ: Ծունչ
է առնում, մի վայրկյան հանդստանում, լարում
իր սուր լսողությունը՝ համազարկերի միջից
որսալու թշնամու սնայակերի ընդհատ-ընդհատ
կրակոցները: Ու կրկին սողում է, սողում է նրա
կրակոցի ուղղությամբ: Երբ արդեն մոտ է, զդուշ
զննում է այն կասկածելի փոսն ու թումբը,
թիերն ու ճյուղերը, որ կարող են թաքստոց
լինել թշնամու սնայակերի համար: Երկար է
զննում, ապա նշմարում է թաքնված ֆաշիստին,
որ պատրաստվում էր նշան բռնել...

Արագանում են Մաթևոս Դավթյանի սրտի
զարկերը... Ո՞ւմ վրա էր նա նշան բռնել, ո՞ւմ
հարազատ, սիրելի կյանքի վրա: Այդ ո՞ր կյան-
քն էր, որ փրկվեց ու անխոս մնաց ծառայե-
լու համար սիրեցյալ մայր հայրենիքին... Ետ
սողալիս, այդ մասին էր մտածում Դավթյանը:
Նա չէր կարող որոշել, թե ում է փրկել մահից,
բայց այն զխոսակցությունը, որ ինքը գործեց
այնպես, ինչպես պետք է գործել, որ մի ակը-
թարթ շուտ հասավ և կանխեց հիտլերական
սնայակերին, զխուսկ զնդակով փչեւոյ նրա

դանդը, այդ դիտակցությունն ուժ ու թե էր
տալիս նրան: Ինչքա՞ն ազնվանում է մարդու
հոգին, երբ խղճի ձայնը կշտամբանքի փոխարեն
խրախուսում է. «Դու կատարեցիր քո պարտքը,
լավ կատարեցիր»... Մարդու հոգին լցվում է
վեհ դրացմունքներով, զգում ես քեզ հսկա, ա-
մուր կանգնած քո մայր հոգի վրա: Այդպիսի
դրացմունքներ Դավթյանը չափ անդամ է ունե-
ցել և ունեք այդ օրն էլ:

— Հիմա կարող ենք քեզ սանդում արտակ
տանել, ընկե՛ր հրամանատար, — ասաց նա վե-
րադարձին:

Պետրոսյանը ոչինչ չհարցրեց նրան: Հասա՞վ
սերժանտն իր նպատակին, թե չէ: Հրամանա-
տարը ճանաչելով իր քաջին՝ դիտեր, որ եթե
Դավթյանը վերադարձել է, ուրեմն կատարել է
այն, ինչ ուզում էր կատարել: Դա երևում էր
նրա ուրախ, երջանկությունից շողացող դեմքից:
Ինքը Դավթյանն էլ ոչինչ չզեկուցեց: Կարծես
դա առօրյա, սովորական ու հասկանալի բան էր,
որ լինում է ու պիտի լինի:

Եղավ մի օր էլ, որ ստորաբաժանումը շըր-
ջապատման մեջ ընկավ: Թշնամին պատրաստ-

վում էր սեղմելու օղակը, նա դյուցազուններին
վրա տանկեր էլ էր բերելու: Օղից ուժեղ ուրմ-
բակոծություն սկսվեց: Ստորաբաժանումն զղաց
հակառակորդի թվականն ու տեխնիկայի դերա-
կըջությունը, պատրաստվեց հերոսական դի-
մադրության:

— Մի խիզախի դործողությունը կարող է
մեր պատվի հետ միասին փրկել նաև մեր կյան-
քը. ահա հերոսություն ցույց տալու հնարավո-
րություն: Ո՞վ է ցանկանում ինքը լինել այդ
հերոսը...

Պետք էր թշնամու դնդացրային ու ալտո-
մատային կրակի տակ դտնջող միակ բաց ելքից
դնալ կարգվել մեր զորամասի հետ, հայտնել
թշնամու ուժերի, նրա կրակային կետերի ու
դիրքերի դասավորության մասին և մերժոնց
կրակի օղնությամբ ճեղքել շրջապատման օղա-
կը: Գերմանացիներն այնպես էլ ցանկանում
էին, որ մերոնք դիմեն այդ փոքրիկ ելքին ու
ոչնչանան:

Դեռ հրամանատարը չէր ավարտել իր խոս-
քը, որ Դավթյանը բացականչեց.

— Ես եմ ցանկանում, ընկե՛ր հրամանա-
տար, խնդրում եմ թույլ տալ ինձ գնալու...

Նա միակը չեղավ: Բոլորն էլ ցանկություն
հայտնեցին: Բայց հրամանատարն այդ պատվին
արժանացրեց նրան, ով առաջինն էր ցանկու-
թյուն հայտնել:

Եվ դնաց համարձակը: Գնդակները թափ-
վում էին շուրջը, սուստ անձրևի կաթիլների
պես շատ, ծակում էին հագուստները, գլխից
վայր դցում գլխարկը, պայթում էին դեմքի ա-
ռաջ, թշնամին արձակում էր նաև պայթուցիկ
գնդակներ, որոնք սուլելով անցնում էին ոտքե-
րի միջով: Կռվի մեջ չեղած մարդուն դա կարող
է անիրական թվալ. ի՞նչպես է, որ ոչ մի գը-
ղակ չի կպչում, անհավատարի չէ՞, — կհարցնե-
նա...

Բայց մենք չչեղվենք պատմությունից:

Կրակների փոթորիկի միջով անցավ հան-
դունդն սյունեցին և վերահաստատեց զորամասի
հետ խափանված կապը: Մինչ թշնամին պատ-
րաստվում էր սեղմել հարձակման օղակը, դղբը-
դաց մեր հրետանին, շառաչեցին ականները...
Ջարդ ու փշուր եղավ «օղակը», մսերի կույտի

վերածվեց : Ստորաբաժանումը հնարավորութիւն
ստացաւ ազատորեն դործողութիւն ծավալելու :
Մարտից հետո ընկերները սերժանտին ձեռքերի
վրա առան ու վերվեր թուցրին :

Մի ուրիշ անգամ կռվի թունդ ժամանակ
Դավթյանը հրամանատարից թույլտվութիւն
ինդրեց ձեռքի դնդացրով՝ սողալով թշնամու
թիկունքն անցնել :

— Գործի՛ր, — ասաց Պետրոսյանը :

Այդ բանը չիմացան և չտեսան հրամանա-
տարներից ու մարտիկներից շատերը : Նրանք
միայն մի ժամ հետո հանկարծ թշնամու թի-
կունքից դնդացրային հերթ լսեցին և տե-
սան, որ դերմանացիները հանկարծակիի դալով,
խառնվեցին իրար : Դա արդեն խուճապի նշան էր
նրանց մեջ, որ ողի ներշնչեց մերոնց . բայց ո՞վ
է այնտեղ դործում, չէ՞ որ մեզնից ոչ մի դորա-
մաս չկա այնտեղ :¹

— Դա սերժանտ Դավթյանն է դործում, —
ասաց հրամանատարը :

Իսկ նա, սերժանտ Դավթյանը՝ դործում էր
ստեպ-ստեպ : Գնդացրի մի հերթին մյուսը
հետևում էր մի քանի բոպե հետո միայն : Ինչո՞ւ

է այդպէս լինում, ինչո՞ւ ասլէլի արադ ու վրձ-
ուական չի դործում, մտածում էին շատերը:
Բայց չնայած դրան, գերմանացիներէ խուճապը
կատարյալ էր: Գաղտնիքը պարզվեց հետո: Հե-
տո դա պատմում էր ինքը սերժանտ Դավթյանը:
Նա ցանկացաւ տպավորութիւն ստեղծել, որ
գերմանացիները կարծեն, որ ոչ թէ մեկ, այլ
շատ գնդացիներ են անցել իրենց թիկունքը և
այլևս իրենց համար փրկութիւն չկա, «կա-
պո՛ւթ»... Ու, այդ պատճառով էլ մեկ-երկու
համազարկից հետո փոխում էր տեղը, սողալով
անցնում հիսուն, հարյուր մետր հեռու ու այն-
տեղից սկսում, որպէսզի քիչ հետո էլ մի այլ
տեղից համազարկ արձակի: Այդպէս ապահով
էր նաև իր համար: Ու նա հասավ իր նպատա-
կին, հիմարացրեց օրեր-թալանչիներին ու տըխ-
մար եֆրեյտորներին: Թշնամին այդ օրը նույն-
պէս պարտութիւն կրեց, կորցնելով 85 զինվոր
և երկու սպա:

Այդ դեպքից շատ օրեր չանցան, երբ Դավ-
թյանին բախտ ընկավ մի նոր հերոսութիւն
փառքով պսակել իր անունը:

Լավ զինված թշնամին, մոտ երկու վաշտի

չափ, երեք կողմից հարձակվեց ստորաբաժան-
ման մարտական պաշտպանության վրա, որ
գտնվում էր սերժանտ Դավթյանի հրամանատա-
րության տակ: Գերմանացին որոշել էր հան-
կարծակիի բերել, անակնկալ հարվածով ոչըն-
չացնել մարտական պաշտպանությունը և հետ
ևս չելնել ն. գյուղը, որ նախորդ օրը վերցրել էինք
մենք:

Դավթյանի ջոկի քաջերը պատրաստվեցին
պատասխան-կրակ բաց անելու: Շրխկացին վա-
կադակները, ժապավենները պատրաստվեցին
ձգվելու: Բայց հնչեց սերժանտի հրամանը.

— Ո՛չ մի կրակ, չկրակել, թողնել սրիկա-
ներին մոտ գան և ոչնչացնել բոլորին մինչև
վերջինը, ոչ մի քայլ հետ չենք դնալու...

Նրանք ընդամենը... հինգ հոգի էին: Հինգ
գյուցազուն, սնված, մեծացած մեր պարտիայի
գաղափարներով, ինչպես կորյունն՝ իր առյուծ
մոր կաթով: Հինգ հերոս, մոտ 300 վայրենա-
ցած գերմանացու դեմ: Բայց նրանցից ոչ մեկը
չմտածեց հետ քաշվելու մասին: Նրանց աչքերի
առաջ էին հերոսական քանուկների կերպարանք-
ները, որոնք չդողացին ահեղ տանկերի դեմ

անգամ: Սերը դեպի Հայրենիքը ուժեղ է կրակից ու մահից:

— Կուզե՛լ մի՛նչն: օգնութ՜յուն ստանալը, — ասաց Դավթյանը: Գերմանացիներն այն ժամանակ կարող են դրավել մեր այս դիրքերը, երբ մեր դիակներն ընկած լինեն այստեղ...

Դա ընդհանուր որոշում եղավ: Հինգն էլ ճանաչում ու սիրում էին իրար: Շատ դժվար տեղերում էին եղել միասին, դժվար մարտերի մեջ, բայց միշտ էլ հաղթանակով էին դուրս եկել: Հավատում էին, որ այս անգամ էլ չեն պարտվի:

Գերմանացիներին այնքան մոտ թողեցին, որ շատ էր հարմար հնձի համար: Ու մեկին սկսեցին գնդացրային հերթեր տեղալ: Փովեցին դիակները: Շարքերը խառնվեցին իրար: Դա ծանոթ, կրկնված տեսարան էր: Գերմանացու դոռող կեցվածքը վայրկենապես փոխվում է, երբ անհողդողդ ուժի ու կրակի է հանդիպում: Տատանվող շարքերն առաջ էին դալիս օրորվելով: Բայց երբ տեսան, որ ընդամենը մի քանի հողի են սովետական քաջերը, ուժ առան:

— Ռուս, կապո՛ւթ, կապո՛ւթ, — նվում էր

մեկը: Որպես պատասխան Հնչեցին Դավթյանի լիարերան Հնչոցները. ընկերները չէին հասկանում, թե ինչ է ասում սերժանտը, բայց դիտեին, որ արժանի պատասխան են այդ խոսքերը գերմանացիների համար, որ ասում է նա մայրենի լեզվով:

Փաշխտաներն առաջ էին դալիս, թեև տասնյակ դիտիներ էին ընկել արդեն: Բայց ահա վերջացան փամփուշտները: Հերոսներեց երկուսն էլ ծանր վիրավորված են: Մի վայրկյան սարսուռ անցավ Դավթյանի մարմնով: Բայց նա ակնթարթի արագությամբ իրեն գտավ:

— Կապու՛ւթ, կապու՛ւթ, — լավեց վերջին անգամ գերմանացու ձայնն ու խլացավ նոնակի պայթյունի մեջ: Սյնուհետև այդ ձայնն այլևս չէր լսվում: Երեքն սկսեցին իրար հետևեց նոնակ նետել թշնամու կույտերի մեջ, ոչնչացնել դարչնադույն ավազակներին: Բայց, ահա մնացին երկուսը: Ռերեմն՝ պետք է դործել ավելի եռանդուն, լարել, լարել ուժերը, մի ակնթարթի դանդաղությունը կարող է բերել մահ ու պարտություն:

Դավթյանը թշնամու վրա նետեց տասներ-

րեք նոնակ և երբ հուսահատորեն ձեռքը տարալ վերջին նոնակին՝ դարձանքով տեսալ հանկարծ, որ դերձանացիներն սկսեցին խուճապով փախչել: Լսեց մարտական ընկերների ուռայի ձայնը— օգնությունն էր հասնում: Պայծառ, երջանկության ժպիտը երևաց նրա դեմքին: Ու նա նետեց վերջին նոնակը թշնամու վրա...

Այսպէս էր դործում երիտասարդ սյունեցին, Դավիթ բեկի հայրենակից՝ սովետական հերոսը: Վերջին մեր հարձակման ժամանակ նա, ինչպէս միշտ, դնում էր առջևից և քաջարի ընկերներին դրոհի տանում հայրենիքի թշնամիներէ վրա: Գերմանացին փախչում էր մեր ուժի առաջ, փախչում էր սարսափած Մեծ Սովետական Մության բռնոր ազգերի լեզուներով լսվող բացականչություններից: Հայ ժողովրդի հին հզոր ու նվիրական լեզուն հնչում էր դրոհի դնացող նրա որդիների բերանում, հնչում էր ազատագրական մեծ կռվի մեջ անմահ լեզուն այն ժողովրդի, որ իր հաղարամյա կյանքի ընթացքում երբեք սուր չի բարձրացրել խաղաղասեր և արդարագործ

հարեմանի վրա և երբեք դիւլիսը չի խոնարհել
ուժեղի ու բռնակալի առջև :

Մատթեոս Դավթյանն այժմ բռնկւում է
վերքից : Շուտով կվերադառնա նա դեպի շար-
քերը և կրկին կկոպի սովետական հրաշք դժու-
րագործնի նման :

...Ահա այսպես են ծնվում հերոսները :
Ճշմարիտ է, նրանց ծնունդը տեղի է ունենում
փոթորիկների ու ամպրոպների մեջ, տեղի է ու-
նենում դժվարին, ծանր երկունքով, բայց ծանր
երկունքից ծնվածն էլ ուժեղ է լինում : Ասում
են, երբ երկնում է մայր առյուծը, նրա մոնչո-
ցից դողդողում են դաշտ ու անտառ, հերոսա-
կան, սրբազան երկունքով՝ առյուծն առյուծ է
ծնում . . .



Վերջացնում եմ երկարապատում իմ նամա-
կը : Ուզում եմ շատ-շատ նամակներ գրել Հա-
յաստան, պատմել մեր սիրելի հայ ժողովրդին
նրա որդիների քաջագործութունները : Բայց
դեպքերն այնքան կայծակնալին արագությամբ
են հաջորդում իրար, որ մինչև դրում, վերջաց-
նում ես, տեղի են ունենում նոր, այլևի հրա-

չադործ բաներ և անխոստում ես, թե ինչու չըս-
տասեցիր դա էլ ավելացնելու նամակիդ մեջ:
Բայց դրանից հետո էլ նորն է ծնվում ու այս-
պես շարունակ: Հենց հիմա, երբ վերջացրի այս
նամակը, հասավ ինձ իմ պաշտոնակիցը և
հայտնում է, որ քաջ մայրը Սամվել Բարսեղ-
յանի զորամասը հերոսական դրոհներով առաջ է
դնում, գրավել է նոր դյուղեր, ոչնչացրել է
450 Ֆաշիստական զինվոր, դերի է վերցրել 29
հոգի և շատ ուղմամթերք: Առաջինը՝ ազատա-
դրված դյուղն են մտել ավազ քաղղեկ Գրիգոր-
յանը, խիզախ հրամանատար Բարթուղ Պետ-
րոսյանի ստորաբաժանումից...

Ես սրանով ընդհատում եմ ու շտապում
այնտեղ: Ինձ այնտեղ է մղում իմ պարաքը:
Հետո՝ ավելի մանրամասն:

Յգրուեթյուն.

Смерть немецким оккупантам!

Փետրվարի 28, 1942 թ.

Գործող Բանակ

ԹՂՆԱՄԻՆ ԱՆՉՆԱՏՈՒՐ ՉԵՂԱՎ ԵՎ ՈՉՆՉԱՑՎԵՑ

Իմ նախորդ նամակն ավարտեցի ավագ քաղղեկ Գրիգորյանի քաջության լուրը ձեզ հաղորդելով: Հիմա՝ ավելի մանրամասնաբար ու հանդամանորեն:

Գրչերը, երբ զորամասը կրկին սլաութատվում էր նոր գրոհի դնալու՝ ստորաբաժանման հրամանատար Բարթուղ Պետրոսյանը կանչում է իր զորամասի քաղաքական ղեկավարներին ու հրամանատարներին, բացատրում է նրանց խընդիրը, քննության առնում ամեն հնարավոր անակնկալ, պահանջում հերոսության օրինակներ կռիվների մեջ փորձված իր ընկերներից: Ահա այդ ժամանակ ներս մտավ ավագ քաղղեկ Կյուրեղ Գրիգորյանը, կարճահասակ, սև դեմքով մի հայ, մի քիչ կարծես դանդաղաչարժ ու քնատ աչքերով: Հրամանատարը նրա հետ էլ զրուցեց, հարցրեց այս ու այն քաջ մարտիկի տրամադրությունը, առողջությունը և ի վերջո խոսքը վարձրեց հայերենով.

— Մի խոսքով, քեզ տեսնե՞մ, կու՞յի մեջ
Հայերի անունը չխայտառակես...

Կյուրեղը մի քիչ վերալորվեց և ասաց.

— Էնպես բան ես ասում, ընկե՛ր հրամա-
տար, ամոթ չէ՞...

Մենք ծիծաղեցինք նրա գյուղացիական
պարզ տոնի համար:

— Ո՞վ դիտի, — ասաց Պետրոսյանը.

— Դե՛, կտեսնենք, — պատասխանեց նա
նույն հաստատ հավատով, — գիշերը կգնանք,
կիմացվի...

Եվ ահա թե ինչ տեսանք:

Գիշերը գնաց գրոհի կյուրեղ Գրիգորյանի
ստորաբաժանումը:

Խնդիրը պարզ էր ու հաստատ: Ինչ գնով էլ
լինի, գրավել N գյուղը, ոչնչացնել ու դուրս
չպրտել թշնամիներին:

Իսկ նրանք այնտեղ ամրացել են, և դուրս
քշելով բնակիչներին՝ կառուցել են ստորերկրյա
երկարաձև կրակային դիրքեր ու կետեր, տները
վեր են ածել ԴՁՕՏ-երի: Ու գիւնված են մինչև
ատամները: Գիշերով սովետական դյուցազու-
ները մոտենում են դյուղին: Ամենքից առաջ

քաջ ու անվնճեր՝ քայլում է ավագ քաղղեկը, մեր մեծ պարտխայի հավատարիմ զավակը, սովետական հողի հարազատ որդին:

Գերմանացիները ցույց տվին կատաղի դեմադրություն: Տեղանքը նրանք լուսավորում էին հրթիռներով և մաղում ահանների փոթորկային կրակ: Թվում է թե ոչ մի մետր գետին ազատ չի մնում կրակից: Բայց ոչ մի բան, ոչ մի ղեկավարն ուժ ու կրակ չէր կարող կասեցնել մերոնց հաստատուն դրոհք: Երբ հաղթահարելով գերմանացիների կրակը, ստորաբաժանումը հասավ դյուղի առաջին տնակներին՝ հնչեց կյուրեղ Գրիգորյանի հրամանը.

— Իմ ետևի՛ց, ընկերներե՛ր, հանո՛ւն Հայրենիքի, հանո՛ւն Ստալինի, առա՛ջ, դրո՛հ...

Հայրենիք, Ստալին բառերը երբ հնչում են ահեղ կոմիւն, կրկնապատկւում և բարձրագույնովում են մարդկանց ուժերը, խիզախություն ու արթություն են տալիս թուլին էլ, իսկ քաջին՝ հսկայի ուժ ու անպարտելություն:

— Հանո՛ւն Հայրենիքի, հանո՛ւն Ստալինի, — արձագանքեցին ջահել արժիւններն իրենց

քաղաքներն ու ազգի աղաղակներով դժուր մը-
տան :

Առաջինը Գրիգորյանը նոնազ նեաեց տնե-
րում դարանակալած Ֆաշիստներէ խմբի վրա :
Նրա օրինակին հետեցին մյուսները : Դիմա-
դրող թշնամուն մերոնք ոչնչացնում էին զնդա-
կով, սվինով, նոնակով, հրացանի կոթով, բա-
նը հասնում էր հաճախ երկաթե զնդի սկս-
ծանք բռունցքին : Դա փառապանծ հերոսութեան
մի սքանչելի տեսարան էր : Ինչքան լայլ ու վեհ
բան որ ուներ իր մեջ սովետական մարտիկը,
երևում էր նրա այդ անօրինակ անճնարհոսութեան
մեջ՝ զեպի իր հայրենիքը, նրա սրբազան դաշ-
րութի ու ցասման մեջ՝ հայրենիքի թշնամինե-
րի նկատմամբ :

Այդ խորական գոտեմարտին ընդհանուր զի-
րիթյորական տակտ էր տալիս ԿՅՈւրեղ Գրիգոր-
յանը, կովկասցու առողանութեամբ կանչելով
ուսերեն :

— Бей, бей фашиста, бей!

Լուսաբացին դժուրը դրավված էր : Թշնամին
դուրս էր շարաված : Բայց շունչ առնելու ժա-
մանակ չէ : Եվ ստորաբաժանումը մարտական

նոր խնդիր ստացավ՝ դիչերը Հասնելուն պես մտնել թշնամու թիկունքը, շրջանցել նրան ու վճռական ծանր հարվածներ հասցնել Փաշխտական թուլացած մեջքին:

Գիչերով, առանց ձայն ու ծպտունի, համբ, սպիտակ ուրվականների պես առաջ են շարժվում քաջերը: Նրանց դարձյալ իր ետևից է տանում ավազ քաղղեկ Գրիգորյանը, քաջ հրամանատար Մաչկովի հետ միասին: Այսօրվա խնդիրն ավելի դժվար է, պահանջվում է ավելի վճռականություն, ավելի ուժ: Այլ բանք բացատրել են Մաչկովն ու Գրիգորյանը բոլոր բանակայիններին և Գրիգորյանը հայտարարել է որպես ընդհանուր սրույում. «Իժվար է, բայց Հայրենիքը պահանջում է կռվել այնպես, ինչպես վայել է սովետական հրաշք-դյուցադուհներին»:

Ու դնում են: Այնքան զգուշ, որ հապիվ է լսվում ստամբ ձյան ճոճոցը նրանց սոքերի տակ: Լուսարացին սկսվում է դրոհը դյուղի վերա: Երեկվա հերոսական ճակատամարտի հաղթանակով ոգևորված ու թե առած, բոցավառ հայրենասերները դրոհն սկսում են ավելի հասուն կերպով, փոթորկուն կրճքով:

Գերմանացիներին դա հրաշք թվաց: Նրանց մտքով չէր անցնում, թե մերոնք կարող են երևալ հանկարծ այդտեղ: Շատերը փակեցին դռներն ու լուսամուտները ու թաքնվեցին ներսում: Հնարամիտ համարվող գերմանացիները ջայլամի խելքի օղնուկթյանը դիմեցին: Դրանով իհարկե չես ապաստվի: Գործեց «գրպանի հրետանին»: Պայթեցին լիմոնաձև նռնակները: Լսվեցին առաջին վիրավորների կանչերը, ապա դյուղը լցվեց գերմանացիների սարսափահար խառնիճաղանչ ձայներով: Պարզկա գիշեր էր: Երկնքի լուսատուներն էլ կարծես հիացմունքով էին դիտում հերոսների արդար վրեժի հատուցման պատկերը: Հաղթանակ էին փռում իրենց շուրջը մերոնք, ինչպես երեկ լուսաբացին: Եվ վերստին, ինչպես երեկ, լսվում էր ծանոթ ձայնը՝ կովկասյան ծանոթ առողանուկյամբ.

— Бей, бей фашиста, бей!

Աւալոտյան քաջերը շրջապատեցին երեք զինված գերմանացու և Գրիգորյանը դռաց նրանց վրա.

— Նեմե'ց, անձնատուր եղիր...

Գերմանացիները դողդողացող ձևքերով նե-

անցին դենքերը՝ վախեցած անընդհատ կրկնելով,
— Рус! Не стреляй, не стреляй...

Ինչպե՞ս վտխվել է «խմպերիական» բանակի
դինյոթներին՝ սուսերեն լեզվի լեքսիկոնը: Մի
ժամանակ դռնոցացած հիտլերականները սովո-
րեցին լիտիարար միայն մի նախադասություն
ասել. «Рус, сдавайся!»: Ամենարութ աշակերտն
էլ ժամանակի ընթացքում մի բան սովորում է,
երբ սխալ բաների համար անընդհատ խփում ես:
Այդպես էլ հիտլերականները: Նրանց շատ խփե-
ցին սովետական դեղացրորդներն ու սնայպեր-
ները, հրետանայորդներն ու ականաձիգները և
ի վերջո՝ հաստազուլիս Ֆրեյցներից շատերը հաս-
կացան, որ ուրիշ նախադասություն պիտի սո-
վորել: Ու նրանցից շատ-շատերն արդեն սերտել
են այդ նոր նախադասությունը: Ու լավ էլ
կրկնում են.

— Рус! не стреляй, я плен, плен...

Տեսնում են համ էլ, որ օդոտակար է դա,
քանի որ կենդանի են մնում այդ միակ նախա-
դասությունն արտասանելու հետ դենքը ցած դը-
նելով:

Այդ օրն էլ այդպես եղավ:

— Доставить их в штаб, — հրամայեց Գրիգորյանը և դերձանացի ղինվորները սովետական զենքի տակ զեպի մեր թիկունքը քայլել սկսեցին:

Բայց դեռ բոլորը չէ, որ հասկացել են այդ բանը: Նրանց էլ ա՛յլ վերաբերմունք է սպասում: Նույն օրը Կյուրեղի քաջերը չըջապատեցին դերձանացի ղինվորների երկրորդ խմբին: Նրանց դրուժյունն իրենց համար անհուսալի էր: Թվով՝ 17 հոգի էին:

— Նեմե՛ց, անձնատուր եղի՛ր, — կանչեցին մարտիկները, բայց տաքազուխ Փաշխաները շարունակեցին դիմադրությունը:

Թե ինչ պետք էր անել, պարզ էր: Մեր հայրենական պատերազմի սրբազան օրենքն էր, բոլոր ժամանակների արդար պատերազմի օրենքը՝ եթե թշնամին անձնատուր չի լինում, նրան ոչնչացնում են:

Այդ խմատունն խոսքերը հիշում են բոլոր մարտիկներն ու հրամանատարները: Եվ հիշում էր ինքը՝ սվադ քաղղեկ Կյուրեղ Գրիգորյանն էլ:

— Կրա՛կ, ոչնչացնող կրա՛կ, — հրամայեց նա :

Եվ մեր կրակի տակ ոչնչացան տասնյոթն էլ մինչև վերջինը :

Այո՛, հերոսաբար կռվեցին սովետական քաջերը, կռվեցին այնպես, ինչպես պահանջում է սովետական ժողովուրդը, ինչպես վայել է սովետական դյուցազուներին : Ողևորում էր նրանց ահեղ կրակի մեջ և իր անձնական օրինակով հերոսության մղում հայ քաջ ժողովրդից սերված Կյուրեղ Գրիգորյանը : Նա սեփական ձեռքով այդ երկու օրում ոչնչացրեց 11 Փաշխատ, նրանց, որ սուր են բարձրացրել մեր Հայրենիքի վրա և ցած չեն դնում այդ արնոտ սուրը :

Լենինականի շրջանի սովետական հայրենասերներ. դա ձեր Կյուրեղն է, համեստ ու բարեխիղճ բանվորը, կոմունիստը : Դուք կարող եք հպարտանալ նրանով : Թող հպարտանա Կյուրեղով հերոսի սիրելի ընտանիքն էլ, որ ապրում է Աշտարակի շրջանի Ոսկեվազ գյուղում :

— Դե, կտեսնենք...

Այսպես ասաց մեզ կյուրեղը դրո՛հի նախօր-
յակին :

Ահա պատմեցի ես այն, ինչ տեսանք մենք
Ճակատում, տեսեք դուք էլ՝ թիկունքից :

Սրանով վերջացնենք այս անդամվա նամա-
կը : Յղբություն :

Смерть немецким оккупантам!

Մարտ, 1942 թ.

Դորձոզ Բանակ.

ՄԱՐԴԸ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԸ

Արևը չի տաքացնում : Յուրտը կարծես հենց
նրա շողքերի մեջ է : Օրը պարզ է, արևոտ. բայց
սառնամանիքը կտրատում է մարդու դեմքը :
Համատարած ձյունը փայլիլում է և արատասուք-
ներ պոկում աչքերիցդ : Մոտիկ տարածությու-
նից լսվում է կռվի որոտը : Դղբդում է հորեղո-
նը հրետանու և ականանետների կրակից : Չայ-
ները լսվում են այնքան հստակ, որ կարելի է
հաշվել ճարձատող դնդացիբրների հերթերի
թիվը :

Այնտեղ ահեղ, գոռ կռիվներ են տեղի ունե-

նում: Իսկ այս փոքրիկ գյուղակը «խաղաղ է»,
միայն սակայ-սակայ հեռաձիգ թնդանոթի արկերն
են պայթում նրա շուրջը: Պատերազմի պատկեր-
ներ էլ համարյա չկան այտեղ, եթե նկատի
չունենանք մի քանի ձիերի ստոած դիակներ և
երկու օր առաջ թչնամու հրետանու կրակից
փլված մի երկու խրճիթ... Պատերազմ է, ոսկե
անձրև չի տեղա երկնքից...

Գյուղակի միջով արագ իրար ետևից անց-
նում են ավտո-մեքենաներ, սահնակներ, սայլեր
և դեպի կրակի դիժն են գնում: Նրանք հանկարծ
են երևում աչքերիդ առաջ ու անհետանում շողքի
պես: Ամեն իր ու առարկա ներկված է սպիտակ
գույնով:

Սա մերձճակատային թիկունք է, կռվող զո-
րամասի թիկունքը, որ իր ուրույն կյանքն ու-
նի, իր մարտական առօրյան:

... Գյուղակի միջով անցնող մեքենայի
հոնդյունը խաղոտում է հանկարծ ու խեղդվում
է մոտոռը: Մեքենան կանգ է առնում: Յած է
իջնում շոֆերը, մի վայրկյան ախրադին նայում
մեքենային, ինչ-որ բաներ է ստուգում ու
հուսահատ թափահարում ձեռքը.

— Ի՛նչ առաջ չի դնա...

— Ի՞նչ անել, — հարցնում է ընկերը:

Շոֆերը մտածում է մի պահ ու ասում ընկերոջը.

— Սպասիր ինձ մեքենայի մոտ:

Վազում է նա դյուղակի լուռ փողոցներով և կանգ առնում մի տան առաջ, որը չորս կողմից թաղված է ձյան կույտերի մեջ ու չի երևում հեռվից: Արագ, առանց ձեռնարկի բաց է անում դուռը ու ներս ընկնում: Ներսում՝ դործիքներ են աղմկում և մրոտ դեմքերով մարդիկ կան:

Ի՛նչ գործասի ամսու-վերանորոգման շարժական արհեստանոցն է, որ ամեն անգամ մի աննկատ անկյունում հաստատվում է ու դործում:

— Թույլ ամեք դիմելու ձեզ, ընկե՛ր գինտեխնիկ, — դիմում է նա միջհասակ, թավրեխերով, կովկասյան շարժ ու ձևերով մի հրամանատարի: Թույլտվություն ստանալով՝ նա գինտեխնիկին հարցրել է, որ ինքը գինամթևքներ է տեղափոխում կրակի գիծը, որ մարտի մեջ եղողները իրեն են սպասում հիմա,

բայց հենց այստեղ մեքենան խալիանվեց... օդ-
նություն է պետք...

— Պա՛րզ է, — պատասխանում է զինվորա-
կան տեխնիկն ու ձեռնոցները քաշում ձեռնե-
րին: — Դե՛, վաղենք, տեսնենք ինչ է եղել...:

Շոֆերի դեմքի վրա շողում է ուրախ ժպի-
տը: Դուրս է դալիս նա զինվորական տեխնիկի
ետեից, հաստատ հավատով, որ ամեն ինչ հա-
ջող կընթանա...

Թավ բխավորը զննում է մեքենան, ուշա-
դիր, մանրամասն, բայց շտապ, արագ, ինչպես
բաղամաղբաղ բժիշկն իր հերթական հիվանդին:
Նայում է մասերն ու պտուտակները և կարգա-
դրում:

— Վաղեք ավտոպարի և հայտնեցեք, որ ևս
կարգադրել եմ բուքսիւր ուղարկել, ձեր մեքենան
պիտի արհեստանոց տեղափոխվի...

— Բայց ևս շտապում եմ, սաղմամթերք եմ
տանում, — ասում է շոֆերը:

Զինվորական տեխնիկը ժպտում է:

— Հասկանում եմ, այսպես դու չես գնա
երբեք, իսկ արհեստանոց տեղափոխելով՝ երկու
ժամ հետո կչարունակես ճամբան:

Երկու ժամ հետո շոֆերն ուրախ դեմքով սեղմում է զինվորական տեխնիկի ձեռքն ու բարձրանում մեքենայի կարիճը:

— Շա՛տ շնորհակալ եմ...

Մեքենան արագ սլանում է դեպի այն կողմը, որտեղից լավում է կռվի երաժշտությունը: Ձինվորական տեխնիկը մի րոպե դոհ ինքն իրենից՝ նայում է մեքենայի ետևից և արհեստանոց մտնում: Բայց մի րոպե հետո՝ մի ուրիշը:

— Թույլ տվե՞ք զիմե՛լ ձեզ, ընկե՛ր զինվորական տեխնիկ...

Գարձյալ համանման պատմություն: Ռազմամթիբքով բարձած մեքենան թաղվել է ձյան մեջ, դուրս չի դալիս...

— Ինչքա՞ն է հեռու այստեղից...

— Մեկ ու կես կիլոմետրից ոչ ավելի...

Բեխավորը նայում է ժամացույցին:

— Տրակտորիստ, 30 րոպե հետո այդ մեքենան պիտի իր ստորաբաժանումը դնա, չուս հասիլը տրակտորովը, հանի՛ր ձյան միջից...

Եվ կրկին ազատ շնչում է շոֆերը, դնում իր պարտականության ետևից: Ու այսպես շարունակ: Մեկը զիմում է նրան.

— Ընկե՛ր զինտեխնիկ, իմ մեքենայի ակ-
կումուլատորը հրաժարվեց աշխատելուց...

Մյուսը.

— Իմ մեքենայի ռադիատորը՝ փչացավ՝

Երրորդը՝

— Ընկե՛ր զինտեխնիկ, խնդրում եմ նայե՛ք
իմ մեքենայի մոտորը...

Ու բեխավորն ամենքին հասնում է, ամեն-
քին բավարարում, ամենքին օգնում, որ ե՛՛ ժա-
մանակին, ե՛՛ լավ կատարեն իրենց պարտակա-
նու թյունները:

Կրակի դժից լավ աեղեկություններ են դա-
լիս: Կոյում են մեր ստորաբաժանումները հե-
րոսաբար, դուրս են քշում դյուղերից ու ավան-
ներից հայրենիքի վայրագ թշնամիներին: Հա-
զորդում են, թե ինչպես ժամանակին հասնում
է ուղղամթերքը, թե ինչպես դերմանացիների
վրա թափվում են մեր արկերն ու աղանները:
Ու գորամասի ամեն մի «թիկունքային» ունե-
նում է երջանկության զգացմունքներ, զգում է,
որ այդ գործի մեջ կա իր մասն էլ:

Սյդպես էլ զինվորական տեխնիկը: Բեխա-
վորը լուսաբացից մինչև կես գիշեր, հաճախ

լուսարացից լուսարաց ոտքի վրա է, նորոգում է սարքում, կարգի բերում, գոռում է մեկի վրա, որ մեքենան լայլ չի քողարկել, մերթ հայհոյում է մյուսին, որ մի քանի կաթիլ բենզին է թափում գետին՝ մեքենան բենզին լցնելիս:

— Խիղճ չունե՞ս դու, ջո՞ւր է դա, որ այդպես ես վարվում... :

Երրորդին նկատողություն է անում, որ անգլուշուկներն է ունեցել բենզինի ցիտակներն էր մոտ ծխախոտ վառելու:

Ասում են՝ կապը զորամասի ներքին է, զինվորական տրանսպորտի մասին էլ կարելի է ասել, որ նա զորամասի արնատար անոթների սխտեմն է: Ինչքան լայլ աչխատեն այնպիսի մարդիկ, ինչպես մեր բեխավորը, լայլ կգործեն այդ արնատար անոթները:

Մեր ծանոթն արտակարգ, շքեցնող հերոսություններ չի անում, նա իր մարմնով չի փակել թշնամու ամբրազուրներն ու երկրին հայտնի դարձած հերոսների նման հավիտյան անթառամ փառք չի վաստակել: Նա ունի իր պարտականությունների սահմանը և բարեխիղճ է իր գործի մեջ: Նրա նման տասնյակ հազար-

Երբ կան բանակում : Դժվար է ասել առհասարակ . եթե բաժանեն՝ ո՛ւմ ինչքան կհասնի բանակի ռազմական փառքից : Նա պատմում է ահա , որ երեք օր առաջ մի դիշերում իր շոֆերներից մեկը՝ Յուլակ Սիմոնյանը չորս ութսուկատարեց խոր թիկունքից մինչև կրակային գիծը : Տարավ երեք անգամ ավելի արկ ու ահան , նրունակ ու փամփուշտ , քան կարող էր տանել մեկ շոֆեր իր մեքենայով : Այդ դիշերը , երբ լուսացավ , թշնամու վրա տեղաց դժոխային կրակ , քանդվեցին ամբողջյուններ և ԴՕՏ-եր : Գերմանացիները պարտություն կրեցին : Կովի մեջ ծնվեցին նոր հերոսներ : Բայց միթե՞ նա էլ կրակի առաջին դժի իր ընկերների պես չհաղթահարեց մեծամեծ դժվարություններ : Իսկ նա բխավորի գինգոբն է , որի մեքենայի աշխատունակությանը ամեն օր հետևում է գինգոբական տիմնիկը : Ազնիվ և իր պարտականությունը հարգող բժշկի նման նա բոլոր ավտոմեքենաների առողջությանն է հետևում : Շատ է պատահել , որ պատերազմի մեջ երկաթի կույտերի վերածված բռնատարները մեկ-երկու օրում սարքվել են այդ ճակատային մասնադետի ձևո-

քով, մյուսը կրկին աշխատել է և կապույտ ծուխ թողնելով՝ հրանոթների ու ականանետների համար սնունդ տարել կրակի գիծը:

Այո՛, զինվորական տեխնիկը սովետական տեղական «միջին մարդն» է: Կարծում եմ, ո՛ր միջին մարդիկն են որոշում կյանքի մեծ հարցերը, կամ՝ համենայն դեպս վճռական դեր են կատարում այդ հարցերի լուծման գործում: Նրանք շատ են և միշտ կան ու անմահ են: Հերոսը հայտնի է դառնում աշխարհին նրանց օգնությամբ, բայց նրանք մնում են անհայտության մեջ. չեն փայլում, բայց միշտ կան. շատ զիտասողեր են երևում երկնակամարի վրա, շողչողում ու հեռանում մեր տեսողությունից, իսկ ծանոթ բույլերը միշտ մնում են: Ես հաճախ եմ մտածել այդ «միջին մարդու» մեծ դերի մասին թե՛ խաղաղ ժամանակների և թե՛ պատերազմի օրերի համար, և այսօր որոշեցի որևէ մեկին դրանցից վերցնել քննության առարկա դարձնելու իմ օրագրում: Հենց այդ մեկն էլ թող լինի բելխավորը՝ երկրորդ կարգի զինվորական տեխնիկը: Նրան ես լավ եմ ճանաչում: Մանոթ եմ նրա ողջ կյանքին: Նա իմ

ընկերն է ու հարեանը: Եթե միայն անունը հիշեմ՝ Պետրոս Պետրոսյան, բալական է ինձ համար շատ բան մտաբերելու, բայց օրագրիս ընթերցողներին քիչ բան կասի դա: Գուցե հիշեն այդ անունը նաև Սովետական Հայաստանի՝ Պարտիայի Պատմութեան Ինստիտուտի դիտական աշխատողները: Բայց դա էլ քիչ է:

Պատանի էր նա դեռ, 21—22 տարեկան պատանի, երբ նրան ծնող ժողովուրդը ճակատագրական դալարումների մեջ ազատագրական ելք էր փնտռում: Պետիկն ինքն էլ ելք էր մտածում: Անհանգիստ, որոնող միտք ունեւր պատանին, մեկը Հայաստանի առաջին շփերներէից, ու միացավ նա այն մարդկանց, որոնք ամենից շատ էին տառապում իրենց ժողովրդի բախտով: Միացավ ու եռանդազին աշխատեց: Այնտեղ էլ նա «չարքային» մնաց: Բայց ակտիվ ու բարեխիղճ: Պարտիայի Պատմութեան Ինստիտուտի դիտական աշխատողները տարեդարձերի ժամանակ հոգիվածները դրելիս, երբ պատմում են թերթերում, թե ինչպես է անցել 1920 թվի Մայիսյան ապրտամբութեան դեմոնստրացիան Երևանում, Ալավերդյանի հայտնի ճառը հիշելիս նախ դրում

են, որ «Փանախանի բուլվարում ուսուցիտն ճառով հանդես եկավ քանի որ բուլչեիկներից մեկը»... կամ՝ «մի կոմունիստ շոֆեր անարգանքի այունին դամեց հայ ժողովրդի դավաճան դաշնակների քաղաքականությունը»:

Ամեն մեկը դրում է իր ձևով: Եվ շատ են դրել, քանի որ շատ տարեդարձեր ենք տոնել և թերթերի ու հոդվածագիրքների թիվն էլ եղել է պատկառելի: Բայց մեզանից քչերն են որոնել այդ բանվոր բուլչեիկներից մեկին, այդ մի կոմունիստ շոֆերին, քչերն են հետաքրքրվել, թե ի՞նչ է անում նա հիմա, ինչո՞վ է դբաղվում, ի՞նչ է մտածում ու զգում: Չէ՞ որ հայտնի անուններն այդ անանուն հերոսների մասսայից կտրված՝ անուժ ու անօղնական կլինեին: Ես էլ, որ հավակնություններ ունեմ հայրենական պատերազմի մեջ մեր զորամասի կատարած դերի պատմաբան լինելու, կարող էի օրագրիս մեջ գրել. «կոմունիստ ղինվորական տեխնիկներից մեկը միշտ առողջ, միշտ ուրբի վրա էր պահում սպորտ-տրանսպորտը, տասնյակ փչացած մեքենաներ էր կարգի բերում ամեն շաբաթ: 1941-ի աշնան մեր նահանջի օրերին հաճախ է հետա-

խուզութեան դնացել թշնամու թիկունքն ու ցե-
խերի միջից հանելով, կարգի բերելով խափան-
ված ավտոներ՝ հասցրել զորամասն ու զործա-
ծութեան դրել...»:

Ամեն առարկա, երբ քննութեան ես ենթար-
կում, ստացվում է հետաքրքրական արդյունք:
Այսօրվա իմ օրադրիս հերոսը՝ «կոմունիստ
դինվորական տեխնիկներից մեկը» 1920 թվակա-
նի աշն բանվոր բուլչեիկներից մեկն է, աշն
«մի կոմունիստ շոֆերը», որ առաջին հրապա-
րակալին ճառն ասաց Փանախանի բուլվարում...
Ով որ խորապես չի հասկանում կյանքը, նրան
«հետաքրքրական» չի թվա այս փաստը: Բնա-
կան ու շատ սովորական է դա:

Թե ինչպես արագ է անցնում կյանքը,
դրադված մարդը չի զգում: Թվում է գուցե
մեր հերոսին, թե 1920 թվականից մինչև այսօր,
միևնույն զործով է դրադված և ոչ մի փոփո-
խություն չի եղել կյանքում: Այն ժամանակ
սպասանի էր ինքը, հիմա ընտանիքի հայր է,
անդրանիկ որդին նույնիսկ ուղղման նավա-
տորմիդում ծառայութեան մեջ է: Բայց այդ
բուրբը չեղան միանգամից և դրա համար էլ

Թվում է, թե միշտ էլ ինքը ընտանիք է ունեցել ու երեխաներ: Անցել է քսաներկու տարին, ամեն օր աշխատանք, ծառայության ընթացքում վեճ ու կռիվ ընկերների հետ. մի օր ուրախ՝ հաջող դործի համար, մյուս օրը հուզված՝ ձախորդության պատճառով: Միջին տարածությունը 1920 թվականից մինչև 1942-ը, Հայաստանի Մայիսյան օրերից մինչև սովետական ժողովուրդների Հայրենական մեծ պատերազմը՝ փոքր չէ եղել: Երկար, բայց բնական ու պարզ ճանապարհ: Եվ միշտ հավատարիմ է եղել նա իր ճանապարհին ու միշտ իմացել է, թե ուր է գնալու: Եռանդը երբեք չի պակասել, սերը կյանքի հանդեպ երբեք չի պաղել: Ու այսօր էլ աշխատում է նույն պատանեկան եռանդով: Այդպես էլ կաշխատի մինչև խոր ծերության օրերը, դուցե մինչև վերջին օրը: Դա սովետական միջին մարդու կերպարն է, որի կյանքի վրա արժեր որ մտածելին գրողները: Նա մեծ պահանջներ ու մեծ պրետենզիաներ չի առաջադրում կյանքին, նա հենց ինքն է նրան նվիրված: Նա ղեկավար չէ, գեներալ չէ, հերոս չէ: Բայց նա հենց այդ ամենն է միասին վերցրած:

Նա կարծում եմ կհասկանան ինձ իմ օրս-
պրի խոհուն ընթերցողները: Նա հազար կապե-
րով կապված է կյանքին, ժողովուրդներ ի ար-
դար դործին ու տառապում է նրանց ապառաջի
համար: Կապված է հազար թելերով իր ընկեր-
ներին ու բարեկամներին, իր Պարտիային ու
Հայրենիքին:

Դա մարդն է: }

Այդ մարդը կապված է նաև իր ընտանիքին:
Ընտանիքը պետականության ամբուլթյան առա-
ջին պտուտակներից մեկն է: Ընտանիքի բարո-
յական պատկերը կլինի իր ժամանակի ու հա-
սարակության բարոյական էության չարիանիչը:
Ընտանիքն ինչքան որ ամուր լինի, այնքան ար-
մուր է այդ ժողովրդի պետականությունը: Իսկ
ամբուլթյունն ու նվիրվածությունը պետի երևա
սմենադժվար փորձություններ ժամանակ:

Հայրենական պատերազմն ամենալավ փոր-
ձությունն էր: Պատերազմի դաշտից մենք՝ ճա-
կատայիններս հետևում ենք մեր ընտանիքներին
և ամեն տեսակ արհավիրքներ ղիմադրելու
նրանց կամքն ու պատրաստակամությունը ուժ
ու եռանդ է տալիս մեզ մեր գործի մեջ: Ընտա-

նիքը սուրբ բան է, իսկ սովետական ընտանիքն
ամենաբարձրն ու ամենասուրբը՝ ընտանիքներէ
պատմութեան մեջ:

Ահա մի ընտանիք: Նույն Պետրոս Պետրոս-
յանի՝ իմ աշօրվա հերոսի ընտանիքը... Ինչ-
քա՛ն հիշողութեաններ կան կապիւծ հարազատ
ընտանիքի ամեն մի անդամի կյանքի հետ:
Կարդալով ամեն մեկի նամակը՝ նա տեսնում է
նրանց իր աչքերի առաջ: Ահա կիներ՝ Նատալի-
ան, ամենասիրելի բարեկամը կյանքի մեջ...
Հիշում է նա այն կապուտաչյա ուռւ աղջկան,
որին բախտը Կոյկաս էր նետել 1919—20 թվե-
րին: Ծանոթացան, սիրեցին իրար, իրար հաս-
կացան ու հավատարիմ մնացին մինչև աշօր:
Կինը ծնեց երեխաներ հարազատ ամուսնու պատ-
կերով, փայտացեցին նրանց, մեծացրին ու եր-
ջանիկ եղան: Քսան-քսաներկու տարվա ամուս-
նական կյանքի բոլոր մանրամասնութեանները
վերականգնանում են նրա երևակայութեան մեջ,
հիշում է սիրող կնոջ քնքշանքները, նրա մշտա-
կան կանացի հողատարութեանը և երբ կարդում
է նրա նամակը, թվում է թե՛ նա կողքին է և
սպիտակ մատներով շոյում է իր ճակատը.

«Մենք քիչ չապրեցինք իրար հետ, — դուռն է նատուրխան, — շուրջ 22 տարի է: Ապրեցինք սիրով, ամսոսալով և օգնելով իրար: Մեծ փորձություններ չկրեցինք, որովհետև խաղաղ ժամանակներ էին: Եվ ահա սա էլ փորձություն է, և՛ ժողովուրդների և՛ ընտանիքների համար: Դու միշտ անհանդատանում ես, թե ինչպես մենք կղիմանանք դժվարություններին, ուժ կունենանք մեր մեջ տոկալու: Դու՛, սիրելի՛ս, ճանաչում ես թո ընկերուհուն: Պետք է իմանաս, որ ես պատրաստ եմ ամեն ինչի: Առայժմ կյանքը մեծ դժվարություններ չունի, իսկ եթե դան մեծագույն զրկանքների օրեր, ապա ևս պատրաստ եմ դիմադրելու, որովհետև գիտեմ թե ինչի համար են դրանք: Այլ բանը հասկանում են երեխաներն էլ: Եթե նրանք թո և իմ երեխաներն են, ուրեմն պատանի հայրենասերներ կլինեն: Եվ հենց այդպես էլ են: Մենք միայն մի բանի համար ենք ճնշվում, որ հեռվից-հեռու քեզ անհանդատացնում ենք»...

Կարդում է զինվորական տեխնիկն իր կնոջ նամակը և հպարտության զգացումները ողողում են նրա սիրտը:

Բայց այնուամենայնիւ անհանդատանում է նա. դժվար չէ՞ լինի նրանց համար ապրել առանց իրեն: Ու պատասխանում է ինքն իր հարցին: Չէ՞ որ կան տասնյակ հիմնարկներ ու հարյուրավոր ընկերներ թիկունքում, որոնք ճանաչում են իրեն, որոնք կարող են ձեռք մեկնել իր ընտանիքին դժվարությունների ժամանակ...

Ու շարունակում է նամակի ընթերցումը. «...տնտեսության մասին ես հարցնում, ամեն ինչ լավ է, վառելավայր չունեինք, դնացի առաջին սովխոզը, Աբաջյանին ասացի, որ Պետրոսյանի կինն եմ, խնդրում եմ վայր բաց թողնեն ինձ: Նրանք շատ ուրախացան, ընդունեցին ինձ բարեկամաբար, հարցրին քո մասին, վայր դուրս դրեցին և պատվիրեցին երբեք անհարմար չդառնալ, չբաշվել, որևէ կարիքի ու պահանջի դեպքում դիմել իրենց: Դուրս գրեցին նաև կարտոֆիլ, մի քիչ դոշար: Օգնում են ամեն ինչով: Աշնանը ոչխարներ դնեցի, դալուրմա արի: Մի խոսքով, ինչ որ ունենք, բավական է մեզ համար: Այլեւին պետք էլ չի: Երեսխաներն էլ ոչ տկլոր են, ոչ էլ բոթիկ: Նրանց համար դնել եմ նոր կոստյումներ և կոշիկներ:

Տրամադրութիւնները շատ լավ է: Սաչայից նամակներն ստանում ենք կանոնավոր կերպով: Ահա նրա վերջին նամակը, որ ուղարկում եմ քեզ»:

Կարգում է իմ բարեկամն ու հուզմունքից դողում, ինչպես ամեն մեկը մեզանից, երբ իր ընտանիքից ճակատում նամակ է ստանում:

Եվ կինը շարունակում է.

՝ «... Ամեն առավոտ մենք ըստ ենք սովե-տական ինֆորմբյուրոյի հաղորդադրութիւնները և լցվում հավատով ու արիութեամբ մեր քաջարի Կարմիր Բանակի փառապանծ հաղթանակների նկատմամբ: Ես ամեն օր հերթապահում եմ հիվանդանոցում, խնամում հիվանդներին: Կարծես թե բավական էր, որ մեր ընտանիքից սիրելի ամուսինս և սիրելի որդին բանակումն են: Ես կարող էի մեր տնտեսութեան դործերով միայն զբաղվել, բայց խիղճս ինձ ստիպեց անձնական մասնակցութիւն էլ բերել ընդհանուր դործին: Թող Պետրոսն ու Սաչան իմանան, — ասացի ինքս ինձ, — որ ես էլ եմ մի բան անում, պարապ չեմ նստում այս օրերին... Ի՞նչ կարող եմ գրել ավելին: Ուժ ու եռանդ եմ

ցանկանում քեզ և բոլոր ընկերներին, հերոսա-
կան կարմիր Բանակի բոլոր մարտիկներին:
Սիեցե՛ք ատելի թշնամուն, քչեցե՛ք նրան մեր
երկրից, թույլ մի՛ տվեք, որ շունչ քաշի, նա
արդեն ուժասպառվում է, կռվեցե՛ք և հաղթա-
նակելով վերադարձրե՛ք մեզ մեր ազատ կյանքը,
մեր ընտանիքներին երջանկությունը...»:

— Օ՛, սիրելի՛ բարեկամ, ինչպես կարելի է
չկատարել քո թախանձանքը, — շնջում է զին-
վորական տեխնիկն ինքն իր մեջ և փակում մի
բոպե աչքերը: Նա կնոջն իր կողքին է զգում,
զգում է կարծես նրա ջերմ, ծանոթ շունչը...

Ու բաց է անում ավազ որդու՝ Մաշայի
նամակը: Առաջին սիրո սրտուղն էր նա: Կարծես
երեկ էր, որ լսեց նրա առաջին ճիչը:

— Ուա՛... ուա՛...

Ինչպե՛ս մեծացավ մեկեն: Երեխան հանկարծ
դարձավ մանուկ, մանուկը՝ պատանի, պատա-
նին՝ երիտասարդ, և զենքվերցրեց ու կռվողնե-
րի շարքերը մտավ: Եվ ահա տղամարդ է, կա-
տարյալ տղամարդ, առնական, դեղեցիկ: Նա-
յում է նա որդու նկարին և թվում է թե իր
պատանեկության օրերի լուսանկարին է նայում:

Հա՛յր... ինչպե՞տ հպարտ է հնչում: Մարդն
 դպում է իրեն ավելի ուժեղ ու ավելի ամուր,
 երբ որդիները մեծ ու հասուն են, տղամա՛րդ,
 ինչպես ինքը: «...Իմացա, որ հայրիկը ճակատ
 է դնացել,— դրում է մեծ որդին մորը,— շատ
 ուրախ ու հպարտ եմ դրա համար: Պատմեցի
 ընկերներս: Դու, մամա՛, կարող ես պարծե-
 նալ, որ մեր ընտանիքից երկուսը, քո ամուսի-
 նըն ու քո մեծ տղան Հայրենական պատերազմի
 մասնակիցներ են: Խնդրում եմ հայտնեք ինձ
 հայրիկի հասցեն, կոչումը, պաշտոնը և միշտ
 տեղյակ պահեք ինձ նրա մասին: Ես հորս հետ
 պետք է մրցման մեջ մտնեմ իմ պարտականու-
 թյունները լավ կատարելու: Երբ մրցումը ես
 շահեմ, ուրեմն փառք կլինի ինձ համար, ով
 կարողացել եմ հասնել ու անցնել այնպիսի հին
 դինվորի ու հայրենասերի, ինչպիսին հայրիկն
 է: Նա էլ կարող հպարտանալ, որ իրեն արժանի
 որդի է ծնել: Իսկ եթե նա շահի, էլի կարող է
 հպարտանալ, որ առաջ է դնում ջահել սերնդից,
 իսկ ես կարող եմ պարծենալ, որ հերոս հայր
 ունեմ...» 4

Երջանկությունից այրվում էին հոր աչքերը:

Նա ազահությամբ կլանում էր տողերը:—Դո՛ւ .
սիրելի՛ս, ինչ լավ քաջ տղա ես դարձել, — բա-
ցականչեց նա բարձրաձայն:

Սաշան ապա բարևելով ընտանիքի բոլոր
անդամներին, վերջում հիշում էր մի անուն, որ
նույնպես հարազատ ու ծանոթ էր հորը. «բա-
րևիր Գոնարային, մամա՛, դր՛իր ինձ թե ի՛նչ է
անում նա, ստացե՞լ է իմ նամակը...»:

Առաջին անգամն էր Սաշան ծնողների մոտ
սիրած աղջկա անունը տալիս... Հայրը հիշում
է նրան: Գալիս էր նա իրենց տունը որդու և
նրա ընկերների ու ընկերուհիների հետ: Հա-
մեստ, ամոթխած մի աղջիկ էր: Պատանիները
կարծում էին, թե ծնողները ոչինչ չգիտեն ու
չեն էլ իմանա, միամտորեն չհասկանալով, որ
կյանքի մեջ փորձված մարդու առաջին հայաց-
քը տեսնում է պատանիների առաջին սերը նը-
րանց աչքերի մեջ, դեմքի վրա ու շարժումնե-
րում: Եվ երբ տեսավ ու հասկացավ հայրը,
աղջիկը մի անդամից դարձավ հարազատ նրան:
Թվում էր թե նրան էլ ինքն է ծնել ու մեծաց-
րել իր որդու հետ միասին...

Երբորդ ծրարը բանալիս հոր տրամադրու-

Թյունը հանկարծ փոխվեց : Մի սարսուռ անցավ
 նրա մարմնով : Ճակատը մռայլվեց : Ամեն ինչ
 ուրախ չէր եղել այդ ընտանիքում : Մի հիմար ,
 անհեթեթ պատահականություն բերել էր լաց ,
 հառաչանքներ ու մշտական մի ստվեր դրել ըն-
 տանիքի անդամներից ամեն մեկի հոգու վրա :
 Ամենից շատ հայրը տառապեց այդ վշտից :
 Միջնակ , չար տղան մի օր երեանում ընկավ
 տրամվայի տակը և կորցրեց ոտքերը... Գեղե-
 ցիկ , լավ պատանին իր չարությունների համար
 հավետ դատարարովեց հենակների օգնությամբ
 չարժվելու... լաց եղան ծնողները , լաց եղան
 ավագ ու կրտսեր եղբայրները , բարեակամներն
 ու մտերիմները , բայց այնպես , որ պատանին
 չտեսնի : Նրան փաղաքշանքի , հանդստացնող
 խոսքեր ասացին , սիրեցին ավելի , քան մյուս
 առողջ երեխաներին : Մի ամիս հետո միայն
 հայրն ասաց դժբախտ որդուն .

— Տեսնո՞ւմ ես , սիրելի՛ս , ինչ եղավ , քա՛-
 նի անդամ ես զոուչացրել էի քեզ , որ խուլիդան
 երեխաներից հեռու մնաս , ...

Այդպես ասաց հայրն ու անմիջապես զղջաց ,
 տեսնելով որդու դեմքը , որ վերայորանք ու

վիշտ էր արտահայտում: Պատանին սիրում էր
եր բոլոր ընկերներին և այդ ծանր դժբախտու-
թյան մեջ էլ նրանց պաշտպանեց:

— Ես խուլիզան ընկերներ չունեմ, հայ-
րի՛կ...

Այո՛, հայրը շատ զղջաց, բայց ուղղելն ար-
դեն հնարավոր չէր: Վ

Զինվորական տեխնիկն սկսեց խորին հուզ-
մունքով կարդալ որդու նամակը:

«Սիրելի՛ պապա.—

«Քո նամակն ստացանք նոր տարու օրը և
չատ ու շատ ուրախացանք: Խմեցինք քո կենացը
և ուռուտ՝ կանչեցինք: Թանկագին պապա ջա՛ն,
գիտեմ, որ դու շատ ես մտածում իմ մասին:
Խնդրում եմ հանդիստ լինես և չմտածես: Պետք
է մտածել միայն հաղթանակի մասին: Ես էլ
միայն ու միայն դրա մասին եմ մտածում: Թե
ինչպես եմ սովորում, կասեմ ազնվորեն: Ոչ
այնքան լավ և ոչ էլ վատ: Գերազանցի և վատի
արանքումն եմ, այսինքն՝ բոլոր առարկաները
լավ ու միջակ: Գուցե զարմանաս, բայց ահա
պատճառը բացատրեմ. չեմ կարողանում լավ
կենտրոնանալ, միտքս շարունակ դրադված է

պատերազմով և թերթերը խլում են ժամանակիս
մի մասը: Բացի դրանից, հասարակական պար-
տականություններ էլ ունեմ: Հաճախ էլ այցե-
լում ենք վիրավոր հիվանդներին, փող եմ հա-
վաքում ճակատայիններին նվերներ ուղարկելու
համար: Պապա՛ ջան, մեզ մոտ իմ բոլոր հասա-
կակիցները դիմումներ են տվել ուղմական
դպրոցներ ընդունվելու: Իմ բոլոր ընկերները
տանկային, ավիացիոն և ուղմածովային դըպ-
րոցներ են դնացել: Երբեք այսքան ծանր չէր
թվացել ինձ իմ դժբախտությունը: Եթե ես ա-
ռողջ լինեի, ոչ թե դպրոց կգնայի, թեկուզ
ուղմական դպրոց, այլ ուղղակի ճակատ կմեկ-
նեի որպես կամավոր մարտիկ, քեզ ու Սաչայի
պես կկռվեի հայրենիքի թշնամիների դեմ, կռվի
մեջ էլ կսովորեի ուղմական դորժը... Այն պա-
տանիները, սիրելի՛ հայրիկ, որոնց խուլիզան-
ներ էին համարում, նոր տարվա օրերին չտես-
նըված հայրենասիրական խանդավառության յեջ
էին, փողոցում երգում էին երգման երգը հայ-
րենիքը պաշտպանելու համար... և շատերը
գնացին: Ուրեմն ինչքա՛ն սխալվում էին նրանց
փչացած երեխաներ համարողները... Խնդրում

Եւ չվիրաւորվես այս խոսքերիցս, սիրելի՛ հայրիկ :

Ինչպես մաման ու մյուսները, այնպես էլ ես քեզանից մի խնդիր ունենաք միայն, ոչինչ մի՛ խնայիր հայրենիքի համար : Առանց հայրենիքի ոչինչ պետք է մեզ, ոչինչ : Կովեցե՛ք քաջաբար, խմացեք, որ ամբողջ մեր բախտը, ժողովրդի բախտը ձեր ձեռքումն է, մեր կյանքը կախված է ձեր արիությունից : Ձեր համարձակությունն ու հերոսությունը միայն փրկություն կրենրի ժողովուրդներին և ձեր կանանց ու երեխաներին...

Սիրելի՛ պապա, ես շատ կարոտել եմ քեզ ու Սաշային : Քանի դեռ բոլորս միասին էինք, ես չէի կարծում, թե քեզ այդքան սիրում եմ : Ոչ մի վայրկյան չեմ մոռանում քեզ, միշտ աչքիս առաջ ես : Դու էլ հիշիր ինձ. քո՛ ժորա»...

Հոր աչքերից արտասուքի կաթիլներ ընկան նամակի վրա : Տղամարդու արտասուքի ծանր կաթիլներ : Բայց նա չդիտեր դա՛, վիշտն է արտասուք խլում, թե՞ երջանկությունը, այն հողեկան հիանալի առողջության և այն պայծառ

ու հասուն մտքի համար, որ ունի իր տասնյոթ-
ամյա որդին»։

Նա թաշկինակով սրբեց աչքերը և երկար
ժամանակ չէր կարողանում հանդստանալ, հաղ-
թահարել տպավորությունը: Իսկ կրտսերի նա-
մակը դեռ մնում էր, իր սիրելի էդիկի նամա-
կը... Զսպեց նա մի պահ իր զգացմունքները և
պատուեց վերջին ծրարը: Ծանոթ, դեռ անվարժ
ձեռագիրն էր, իր սրամիտ և խելացի փոքրիկի
ձեռագիրը: Գրում էր հորը. «Սիրելի հայրիկ
ջա՛ն, քո նամակը շատ ուրախացրեց մեզ, բայց
ինձ ամենից շատ: Էնքան ծիծաղեցի, որ դրե՛լ
էիր, թե բեխեր ես թողել... երևի նման ես
Բուդյոննի դյադյային: Բուլո՞րն էլ ծիծաղում են,
բայց ես ուրախացել եմ: Բեխերը շատ կսաղեն
քեզ, ավելի սիրուն դարձած կլինես... Պատա՛
ջան, մենք շատ լավ ենք: Նոր տարու երեկո-
յան կալինին պատվին ուղևորյով խոսեց, չնոր-
հավորեց բուլո՞րի 1942 թիվը: Որ վերջացրեց,
մենք խմեցինք նրա կենացը, հետո՝ քո կենացը:
Հայրի՛կ ջան, խի՛ր թշնամուն անխնա,
ինչպես 1920 թվին ևս խվե՛լ: Քչեցեք այդ խո-
ղերին մինչև իրենց դամբ:

Հայրի՛կ ջան, քո դնալուց հետո մեր բարեկամները դալիս են միշտ, հարցնում են քո մարին: Քեռի Թաթոսը, Պետրոսը և Լո-լա Գբէլչան դալիս են ամեն անգամ դռում են մեզ վրա, որ մամային միշտ լսենք, դիտակից լինենք... Շատ ու շատ բարեւներ քեզ և ամբողջ Կարմիր Բանակին. քո հղիկ...»:

Վերջացրեց Պետրոս Պետրոսյանը հայրենի բաղաքից, հարազատ ընտանիքից ստացած նամակները, ծալեց և սիրով ու ակնածանքով ծոցը դրեց: Նրան կարծես մի ամբողջ աշխարհ տվին, դերընահան ուժ ու խանդ ստացավ: Կյա՞քը երեւաց ավելի լավ ու դեղեցիկ, ընկերները մոտիկ ու սիրելի և վտանգը չնչին բան մեծ ու սուրբ դործի հանդեպ, որ պիտի կատարի ժողովուրդն իր հաղարավոր, միլիոնավոր հայտնի ու անհայտ հերոսների ջանքերով...

Դուռը բացվեց: Ներս մտավ ծանոթ մի բանակային.

— Թույլ տվեք զիմելու ձեզ, ընկե՛ր զինատեխնիկ...»

— Ասացեք...

— Ստորաբաժանման հրամանատարը հրա-

մայեց կես ժամ հետո քսան մեքենա պատրաստ
լինեն հրետանային ռազմամթերքներ տեղափո-
խելու դժամար...

— Հայտնեցե՛ք, որ ճշգրիտ ժամանակին
կլինի,— պատասխանեց ղինտեխնիկը և շտապ
կտուղեց ղինասարքն ու դուրս եկավ։

Նրա հակեց պառավ տանտիրուհին ասաց իր
աղջկան.

— Մհա՛ւ լավ մարդ... բեխավորը...

Հրետանու և ականանետների որոտը սաստի-
կացել էր։ Չես լսում, մինչև ականջ չես դնում.
Ջրաղացպանի նման վարժվում ես ծանոթ աղմու-
կին։

Մարտ ամսի առաջին օրերն էին, բայց
սառնամանիքը դեռ նույնքան խոր էր, ինչպես
հունվարին...

Շարքային համետ մարդը զնում էր իր
պարտականութունների հակեց, հոգու մեջ իր
սրբազան ընտանիքի սերն ու կարոտը։

Մարտ, 1942 թ.

Գործող Բանակ

ԵՂՐԱՅՐՆԵՐ

Մեկ ամիս առաջ ավագ լեյտենանտ Ալեքսանդր Կուրդումոսովը, քսանամյա մի քաջ սպանի, որ մարտական մի զուգարտակի հրամանատար է, ինձ ծանոթացրեց իր ստորաբաժանման մեջ իրենց ուղղմի գործերով հայտնի Շումկո եղբայրների՝ Ստեպանի և Մաքսիմի հետ: Ուկրաինացիներ են նրանք՝ լի մահառիթ վրեժխնդրությամբ իրենց ավերված չքնաղ Ուկրաինայի համար, մայրական արտասուքների ու հեծկտանքների և իրենց առևանդված ու խոչտանդված քույրերի պատվի համար: Մի զուգարտակում իրար հանդիպելով՝ նրանք սրտահույզ կերպով ողջագուրվեցին, ապա դառնադին սրտով պատմեցին իրար գերմանական բռնակալների ձեռքից հայրենիքի կրած տառապանքները և ուխտ արին՝ երկու եղբայրով չինայել իրենց երիտասարդ, թանկագին կյանքը՝ արյունառուչո թշնամու գեմ մղված կռվում: Սրբազան ուխտ էր դա, որին հավատարիմ են զպորոժյան նախնիների զարմիկ սովետական դյուցազունները:

Եւրօքային մարտիկներ էին երկուսն էլ իւրար հանդիպելիս :

Քանի՛-քանի անգամ հանդուպն դրոհներէ ժամանակ, որպէս անպարտելի կորյուններ, թշնամու վրա են խոյացել կրակի ու բոցի միջով՝ արհամարհելով վտանգ ու մահ, ոչնչացնելով մայր Ռեկրաինայի և ողջ սովետական երկրի թշնամիներին : Գործել են դնդացիբներով, հրացաններով, նոնակներով : Քիչ չի սլատահել, որ սվինամարտի բռնվելիս, պետք է եղել նույնիսկ զործի դնել առնական բաղուկները, մատներով սեղմել հիտլերականի կոկորդը : Ամենազոր է ատելության պոթիլումը մարդու մեջ : Հեքյաթներում միշտ ասվել է՝ քաջը կրտսերն է լինում : Երևի կա մի ճշմարիտ իմաստություն՝ ժողովրդական այդ մտածողության մեջ : Համենայն դեպս, այս անգամ էլ կատարվեց դրա նման մի բան : Ավազը՝ Մաքսիմը երբեք չդժեց իր երդումը, միշտ կռիվներէ մեջ մնաց քաջ ու անպարտելի, բայց կրտսերը՝ Ստեպանը դերադանցեց նրան : Նա միայն մի կովում ոչնչացրեց

10 գերմանացու :

Ստեպանի հրամանատարության տակ դրվեց

ամբողջ մի դասակ, իսկ Մաքսիմին մի ջոկ
սովեցին ղեկավարելու: Այն ժամանակ Ստեպանը
խնդրեց հրամանատարութեանը, որ եղբորը փո-
խադրեն իր դասակը՝ կռվելու ուրպես ջոկի հրա-
մանատար: Հարգեցին այդ խնդրանքը: Շուտկո
սովազը կրտսերին ներկայացավ:

— Ընկե՛ր դասակի հրամանատար, ջոկի
հրամանատար Մաքսիմ Շուտկոն ներկայանում
է ձեզ...

Առանց ժպտի, կարծես թե անձանոթներ
էին, կրտսերն ասաց.

— Ահա մենք միասին ենք կռվելու. ինձ հա-
մար թանկ է քո կյանքը, քեզ համար էլ՝ իմը,
բայց Ուկրաինայի պատիվն ու ազատութեանը,
Սովետական Միութեան փառքն ամեն ինչից
բարձր պիտի լինի երկուսիս համար էլ... Այս
դիչեր, ահա՛, քո ջոկով պիտի հետախուզու-
թեան գնաս թշնամու թիկունքում... Խնդիրը
հետևյալն է...

Ուշադիր լսելուց հետո՝ Մաքսիմ Շուտկոն
ձգվեց Ստեպան Շուտկոյի առաջ և ասաց.

— Լսում եմ, ընկե՛ր հրամանատար, լիա-

կատար պատրաստ եմ մարտական հանձնարարութիւնը կատարելու...

Ու սեղմեցին եղբայրներն իրար ձեռքերը ու գրկեցին միմյանց :

Իրանից հետո նորանոր սխրագործութիւններով նրանք փառքով պսակեցին իրենց ազգանունը և եղբայրութիւնը դարձրին ավելի սուրբ հասկացողութիւն ու զգացմունք...

— Ահա այդպես պիտի լինի եղբայրութիւնը, — ասաց ինձ ավագ լեյտենանտը՝ ուստի մեծ ժողովրդի զավակ Ալեքսանդր Կուրդոստովը :

Այո՛, Հայրենիքի համար, արդար կռիւ մեջ ավելի ազնիւանում է մարդը : Եւ մի՞թե Շումկորի օրինակը բացառիկ է, մի՞թե միայն մի մոր ծնված որդիներն են դաժան մարտերի մեջ անաղարտ եղբայրութեամբ կռոււում իրար : Լի է իմ հիշողութիւնը անդամաճան եղբայրութեան տասնյակ, հարյուրավոր սքանչելի օրինակներով :

Երբ Ավագ քաղղեկ Կյուրեղ Գրեգորյանը ծանր վիրավորուեց և՛ թշնամու կրակի օղակի մեջ մնաց, կոմիսար Սիտնեկովը դիմեց մարտիկներին .

— Ո՞վ է ուղում այն քաջը լինել, որ պիտի փրկի ավագ քաղղեկի կյանքը:

— Ե՛ս, — առաջինը բացականչեց ուսու բանակային Չերնովը: Ու դնաց սողալով: Բոլորը հետևում էին քաջի գործողությանը: Թշնամին գլխի էր ընկել, որ վերալորը հրամանատար է և կրակի կարկոտով թույլ չէր տալիս նրան մոտենալ: Չերնովը հերոսի մահով նահատակվեց: Այն ժամանակ հաստատակամ ու առանց դողալու կոմիտարին ղլմեց ուկրաինացի մարտիկ Բոնդարենկոն:

— Այժմ իմ հերթն է, ընկե՛ր կոմիտար...

Ու սողաց դեպի մահը: Շատ կրակ տեղաց նրա վրա մի քանի ժամ շարունակ, բայց խիզախը մնաց անվնաս ու փրկեց իր քաղղեկ Գրիգորյանի կյանքը:

Ի՞նչն էր մղում նրանց դեպի կրակ ու մահ. — եղբայրությունը, որն ուժեղ է մահու սարսափից և կռվի մեջ միշտ հաղթում է նրան, այն անքակաելի կապը, որ կապում է մեր եղբայրական բոլոր ժողովուրդներին և որն ավելի ամրացավ, ավելի կոպկեց հայրենական մեծ պատերազմի առաջին օրերից սկսած:

... Տեղի էր ունենում ահեղ, դաժան ճակատամարտ: Առաջնության երեկո արձիճ ու պողպատ էր թափվում մարդկանց վրա: Օդը լցվում էր ծխով: Դաշան իր տեսքը փոխել էր ականաների, արկերի ու ուժերի պայթյուններից: Ամեն վայրկյան մարդիկ էին հերոսանում այդ կռվի օրը: Գործում էր նաև սանխտար աղբբեջանցի Մեհաի Սուլթանովը: Իրաչ Ետեից կրակի դատուց նա դուրս էր բերում ծանր վիրավորներին ու սանխտարական կետերն ուղարկում: Վիրավորները տեսնելով դեպի իրենց սողացող ծանոթ աղբբեջանցուն՝ ասում էին.

— Կարդա՛չ, փրկի՛ր, փրկի՛ր, դեռ պետք կզանք իրար...

Կարդա՛չ... Դա առաջին բանն էր, որ սովորել էին սովետական սլավոն ժողովուրդների սրդիներն աղբբեջանցիների հետ չվիճելիս: Ինչքան սեր ու մտերմություն կար այդ միակ բանի մեջ...

Հետո Մեհաին ինձ պատմում էր.

— Երբ կռվի մեջ առաջին վիրավոր ոտան ինձ իմ մայրենի լեզվով կարդաչ ասաց, սիրտս

դողաց, մարմինս փշաքաղվեց. սլառերազմեց
սուաջ էլ ոռւս ընկերներն ինձ այդ խոսքով էին
դիմում, բայց այն ժամանակ մեր կարդաչ խոս-
քըն այդպէս չէր աղբում ինձ վրա...

Վերապիտրին Սուլթանովը հանդստացրեց:

— Մի՛ ընկճվիր, բրա՛թ, կամ երկուսս էլ
կմեննենք միասին, կամ կփրկվենք...

Միայն այդ կովի ընթացքում հայրենասեր
ազրբեջանցին փրկեց 19 մարտիկի կյանք,
տասնինն անգամ կրակի փոթորիկի մեջ մտալ ու
դուրս եկալ այնտեղեց հերոսաբար: Անդալաճարս
հնաց եղբայրության սրբազան ուխտին:

Զինվորական բուժակ Աղասի Ասրյանի հետ
էլ տեղի ունեցալ այդպիսի սրտացունց մի
դեպք: Շատ շատերին էր նա մահվանից աղա-
տել, փրկել շատերի կյանքը, բայց այդ դեպքն
ավելի խոր տպավորություն դորձեց նրա վրա
և ողջ կյանքում կմնա անմոռաց:

Դար դեռ աշնան մեր ծանր տպումների օրե-
րին էր: Մեր զորամասը մի քանի օր շարունակ
ետ շարտելով թշնամու գրոհները, հրաման ըս-
տացալ քաշվել նոր դիրքեր: Բայց զբաժանվոր-
ված թշնամին գարլիս էր ետեից: Կրակով նրան

դսպելով՝ Լա էինք դալլա մենք: Այդ մարտի
ժամանակ զինվորական բուժակն իր ստորաբա-
ժանման հետ էր կրակի դժուժ: Նա նկատեց, որ
ճահճի ափին դալարվում է մի վիրավոր մար-
տիկ: Տեսնես ո՞վ է, — հարցրեց նա ինքն իրեն
մի պահ: Բայց ինչ կարևոր էր, թե ո՞վ է, բա-
վական էր, որ յուրային է: Թշնամու ավտո-
մատավորներն ու սկանաճիդները խիստ կրակի
տակ են պահում դեպի ճահճին ընկած շերտը:
Առանց դանդաղելու՝ զինվորական բուժակը
նետովեց դեպի կրակ: Հասավ վիրավորին: Նա
արդեն հուսահատ ընկել էր դեմքի վրա ու ծանր
չնչում էր: Աորյանը շուռ ավելց նրան, նայեց
դեմքին:

— Պանչո՞ւկ...

Վիրավորն աչքերը բացեց, վայրկենապես
սթափվեց.

— Ասրյա՛ն, Թանկադի՛ն, դու եկել ես ինձ
փրկելո՞ւ...

Թշնամին համադարկ ավելց: Նրանք պառկե-
ցին խոտերի մեջ:

— Հիշի՛ր, ախպիր ջան, — չչնչում էր Պան-
չուկը, — որ մենք բաժակ բաժակի ենք խփել,

միասին Ղաճարլուի դինու դավաթով բարեկամության խոսքեր ենք ասել իբար, համբուրվել ենք... Մի՛ թողնիր ինձ այստեղ, պիտի կենդանի մնանք մենք, պիտի կրկին Հայաստան գրանք...

Ու վերա՛յրը փորձեց երգել զորամասի ջադի հայտնի երգը.

— Եյ ջա՛ն Երևա՛ն, РОДИНА МОЯ!...

Նա արդեն տենդի մեջ էր: Ասրյանը հանեց նրան կրակի օղակից, կապեց վերքերը: Երբ ապահով անտառում Պանչուկին ուշքի եկավ, առաջին արտասանած խոսքը, որով դիմեց նա իր ընկերոջը, հայերեն էր.

— Սխալե՛ր ջա՛ն... — ու ավելացրեց սուսերենով — «մենք կրկին միասի՛ն ենք քեզ հետ»...

Ահա մի հերոսական դեպք էլ, որ տեղի ունեցավ մի քանի օր առաջ, որ վերհիշել տվեց ինձ այս ակնարկում շարադրված մյուս եղբայրությունները:

...Ստորարածանումը պատրաստվում էր մարտի: Միախնդում ուրիշների հետ միասին բաշկիր բանակային Եմիլովն էլ հանդիսավոր

խոստում տվեց սրբությամբ կատարել Հայրենիքին տված երդումը: Երբ ջոկերն ու դասակը դուրս եկան կրակի դիծը և պատրաստվեցին գրոհի, Թշնամին բացեց փոթորկային՝ ականանեաային ու հրեամանային կրակ: Մի արկ պայթեց Եմիլովի մոտ: Նա ցնցումից ուշաթափ ընկավ շեանին: Մարտիկի բերնից արյուն էր հոսում, կոճոտուղիայի էր ենթարկվել: Մանխտարները վերցրին նրան ու տեղափոխեցին, ապահով տեղ: Թուայ հրթիռը՝ գրոհն սկսելու նշանը: Սովետական դյուցազուհիներն առաջ նետվեցին: Թշնամին սկսեց ետ-ետ սողալ՝ թողնելով դիակներ: Մերոնք ներս խուժեցին ավանն ու դիմեցին սվինամարտի:

Կռիվը բոբբոբվում էր: Այնտեղ չէր միայն քաջերից մեկը՝ Եմիլովը: Նա աթաղիվեց երկու ժամ հետո և հիշեց բոլորը: Մանխտարները հաղորդեցին մնացյալը: Ու նա վերցրեց նռնակները և դիմեց դեպի կռիվ վայրը: Հրամանատարական կետում հանդիպեց կոմիսարին: Նա դարձանքով նայեց մարտիկին ու հարցրեց:

— Ու՞ր, Եմիլով:

— Դեպի մարտ, ընկե՛ր կոմիսար.

— Բայց ես հրամայել էի, որ քեզ՝ սանխտա-
բական պունկտ տեղափոխեն:

Եմիլովի դեմքը դունատ էր, հիվանդադին,
չբխենքներին դեռ մնացել էին արյան չորացած
հետքեր:

— Ո՛հ, թույլ տվեք ինձ դնալ կռվի, — ա-
ռարկեց բաշկիր մարտիկը, — իմ եղբայրներն
այնտեղ կռվում են, իսկ ես դնամ պատկելո՞ւ... .

Կոմիսար Մալիշևը ուսերը թոթվեց, որ նը-
շանակում էր թե՛ «առարկել չեմ կարող, երբ
այդքան ուղում ես»... .

Մի քանի րոպե հետո Եմիլովը կռվի մեջ էր:

Առաջին հենց պահին նոնակներով ոչնչ-
չացրեց պատի տակ թաքնված թշնամու գնդա-
ցրի անձնակազմն ու գրավելով գնդացիքը՝ շու-
տովեց թշնամու դեմ: Մարտի մեջ նա մոռացավ
և՛ հոգնածութունը և՛ ծանր դժխացավը: Կարճ ու
սևահան համազարկերով նա այդ կռվում ոչնչ-
չացրեց 15 ֆրից ու հանա:

Եղբայրուքյան աղնիվ զգացմունքը նրան
մարտ ուղարկեց, տվեց ուժ, եռանդ և բերնից
քաջի համար անթառամ փառք:

Շումկո ուղրախնացի եղբայրների պես հե-

րոսական կարծիք Բանակում միլիոններն են եղ-
 րայրության կապով կապված իրար հետ. ուս-
 ներ են նրանք, հայեր, ազրբեջանցիներ, ուկ-
 րաինացիներ, վրացիներ, բելոուսներ... Մի
 մայր է ծնել նրանց, սովետական մեծ ժողո-
 վուրդը և ավանդել է՝ անդամավաճան լինել, լի-
 նել եղբայրներ՝ աշխատանքի ու կուլի մեջ: Եվ
 նրա որդիները բարձր են պահում եղբայրու-
 թյան դրոշը, սրբությամբ են կատարում հա-
 րազատ մոր ավանդը: †

Ապրիլ, 1942 թ.

Գործող Բանակ

ՀԱՆՐԻՊՈՒՄՆԵՐ

Երբորդ օրն էր, որ թշնամին հասաւ կերպով
 գիմազբում էր՝ լարած իր դելվային բոլոր ու-
 ժերը, դործի դրած զենքի բոլոր տեսակները:
 Նա կատաղի մոլուցքով կրակ ու բոց էր փչում
 դեպի մեզ՝ իր դարչեղի մարմինը թաքցրած
 ստորերկրյա ամբությունների և խրճիթներում
 կառույցած ԴՁՑ-երի մեջ: Յայց զնալով թու-
 լանում էին նրա ուժերը, վիշապի շունչը կտրը-

վում էր բոցե լորձունք թափելուց, իսկ մեր
դյուցազունների ուժն ու ողին կրկնապատկվում
էր: Դիմացը՝ հարազատ դաշտանկարն էր, ուս-
սական տափաստանը, լաջն ու անսահման, ինչ-
պես իր ժողովրդի սիրաբ: Հունվարի առաջին
օրերն էին: Սառնամանիքն այրում էր կրակի
պես: Ինքնակոչ հյուրերն անարդելով ու ան-
պատվելով տանտերերին՝ խցկվել էին ներս, վա-
խենալով սառնամանիքին դուրս դալ: Հասարակ
աչքով, պարզ ու մեկին երևում էին լուկ դյու-
ղերը՝ ծածկված սառած ձյունների տակ, թչնա-
մու թաթի ծանրությունից լուռ ու պապանձ-
ված: Նայում ես ահա ծանոթ հորիզոնին, քո
հայրենիքի վրա կամարած կապույտ երկնքին,
դիտում ես ահա պարզկա երեկոն, որ լուսավոր-
վում է հազար հրթիռներով ու լցվում հազար
աղմուկներով, սպրում ես ուսական կախարչ-
ված դիչերվա սղջ վրդովմունքը և հողիդ մին-
չև խոր հատակները լցվում է վրեժի հզոր ու-
ժով, լցվում անսահման ատելությամբ: Եթե
կան աշխարհում մարդիկ, որ դարձանում են
սովետական հերոսների ինքնամոռացության
հասնող մոլեռանդության վրա, երբ իրենց

հողի համար մղված կռիվների մեջ նրանք
խենթությունների են հասնում, եթե կան
աջդպիտի մարդիկ, ապա նրանք երբեք չեն
ապրել իրենց մայր հայրենիքի ուրախություն-
ներով և չեն տառապում նրա ճակատագրի հա-
մար, չեն հիացել նրա բնության գեղեցկու-
թյուններով և չեն ցնցվել թշնամու ավերածու-
թյունները տեսնելիս: Նրանք անհողի ու ան-
սիրտ մարդիկ են՝ դուրկ արժանապատվությու-
նից ու արիությունից: Միաքին ու զղացմունքը
խանդարում են ինձ պատմել այն դեպքերը, որ
հիմա, այս տողերը դրելիս, հիշելով, վշաքաղ-
վում է մարմինս, աչքերս մթնում են և ամ-
բողջ էությունս այրվում է կրակով, խոսքերս
պակասում են և դբիչն էլ թույլ ու անողոր է
թվում:

...Երբորդ օրը հափշտակիչներն բանակն
ալլեն չէր դիմանում այն դուռ հարվածներին,
որ նրա վրա էին տեղում իրենց հայրենիքի ու
ժողովրդի անձնավեր ու խիզախ որդիները: Թըշ-
նամու պաշտպանության գիծը ճեղքվեց մի քա-
նի տեղից: Աստղազարդ երկինքը վկա էր
դյուցազնական դատեմարտին, տեսավ հերոսների

դործերը և հիացալ: Գիշերը լցվեց սաղմի գու-
ձայներով: Գիշերը հաղթանակ էր երկնում:
Հարյուրավոր հափշտակիչներ չտեսան այլևս
այդ օրվա լուսարացը: Բայց այն, ինչ տեսանք
մենք, երբե՛ք, երբե՛ք չենք մոռանա:

Թշնամին դիակների կուլտեր թողնելով ևս
էր սողում՝ դուրս քշվելով իր որջերից: Հնո-
վում, ձորակի մեջ տեղավորված դյուղից կովի
ահեղ բուսկներին երևացին ծխի սյուներ, հետո
սյուներն ամպ դարձան, դորչ ու մութ ամպ,
որ դանդաղ երկինք էր բարձրանում՝ չկտրվե-
լով ձորաբերանից:

Ի՞նչ էր դա. դիտելինք, որ Թշնամին նենդ է
և շատ խարդավանքներ է սովոր: Բայց ի՞նչ դե-
վային միջոցի է դիմում նա: Մի քանի բուսկ
միայն անմեկնելի թվաց երկինք բարձրացող
ծուխը: Հրամանատարները նայեցին հեռադի-
տակներով և տեսան Թշնամը ոճիբը:

— Այրո՛ւմ են դյուղը...

— Այրո՛ւմ են մեր կանանց ու երեխանե-
րին...

— Այրո՛ւմ են ծերերին...

— Այրո՛ւմ են մեր քույրերին ու հարսնա-
ցուններին... }

— Այրո՛ւմ են մեր մայրերին...

Նայում էին մարդիկ ահավոր զայրույթով
ու ցատուձով, լարվելով, կուտակվելով որպես
բուռնցք: Ուժեղ կրակի տակ ճնշելով թշնամուն,
ճնշելով նրա զենքերի գործողութունը, առաջ
էին գնում ժողովրդի դավակները: Ծուխը գնա-
լով մեծանում էր: Նա ծածկեց աչքից հորիզոնի
կեսը: Երևում էին բոցերն ու սև ծխի մեջ
բարձրացող կայծերը, որ փչրվելով հրթրանների
նման, թափվում էին ցած:

Ո՞վ կարող էր մտածել այդ բոստին իր
կյանքը խնայելու մասին: Ո՞վ չէր հերոսանա
այդ կռվի մեջ, ո՞վ կարող էր առաջ չդնալ
կրակի ու փոթորիկների միջով, եթե նա փոք-
րողի ու դավաճան չէ: Բայց գոնավեց հերոսե-
րից հերոսը, մի անանուն մարտիկ, մի շարքա-
յին բանակային, որ ստբի կանգնեց ու իր
կրծքի ողջ ուժով գոռաց.

— Նրանք այրո՛ւմ են մեր հայրենիքը...

Լռեց նա մի վայրկյան, ապա մոնչաց կրկին.

— Վրե՛ժ, ընկերնե՛ր, վրե՛ժ...

Նա մեկ ձեռքով թափահարում էր հրացանը
և մյուս ձեռքով ցույց տալիս ծխով ծածկված
հորիզոնը:

Դա էլ հենց գրոհի սկիզբը և զամ: Մեկ մար-
դու պես ոտքի կանգնեցին ամենքը՝ վրեժի նոր
բացակահեռութուններով: Առաջին մարտահրա-
վերը հնչողն ընկավ թշնամու կրակից, նրա հետ
միաժամանակ՝ նաև ուրիշներ: Նրանք իրենց
կյանքը նվիրաբերեցին հայրենիքի զոհասեղանին
և հաղթանակեցին: Թշնամին չգիմացավ գրոհին
և փախուստի դիմեց: Հետո դժվար էր որոշել,
թե հերոսաբար նահատակվածներից ո՞րն էր ա-
ռաջինը, որ ոտքի կանգնեց և որոտաց հասա-
րակ ու սլարդ խոսքը.— «նրանք այրո՞ւմ են մեր
հայրենիքը»... մի խոսք, որից փշաքաղվեցին
մարդկանց մարմինները, որը լցրեց մարդկանց
հոգին գերմարդկային ուժով: Ես հաճախ եմ
մտածել այդ անանուն դյուցազնի մասին: Գու-
ցե սեղան ենք նստել նրա հետ միասին, սիրտ
բաց արել մեկ-մեկու, դուցե վիճել, կռվել ենք
երբևէ ու մի վայրկյան դառնացել իրարից, կամ
ափոփել իրար դառն ու ծանր օրերին, ի՞նչ գիտ-
նաս: Ով էլ լիներ նա, սովետական մարդ էր և

դա բովանդան է հասկանալու համար նրա սխրան-
դործութիւնը:

... Անցալ մի գիշեր էլ: Մյուս օրը, կեսօր
դեռ չէր եղել, որ դրոհով քշելով անարդ տմար-
դի թշնամուն՝ քաջերը հասան այրվող գյուղին:
Ծուխն ու խանձահոտն արդեն հասնում էին
դրոհողներին: Այդ վայրկյաններին էր, որ տեղի
ունեցալ այն, որի մասին պիտի պատմեմ այս
նամակում: Հանկարծ ծիւի ու կրակի միջեց
դուրս թռալ մի սև ուրվական ու դեպի մար-
տիկները վազեց: Ռազմական սովորութեամբ
մարտիկները հրամայեցին նրան ձեռները վեր
բարձրացնել, հրացանների փողը նրա վրա ուղ-
ղելով: Նա բարձրացրեց ձեռքերը և կանգնեց մի
պահ, ապա հիվանդ ու թեաթափ թռչունի
պես մի կռինչ արձակելով, մի քիչ էլ առաջ ե-
կալ և ուշաթափ ցած ընկալ դետին, բանակա-
յիների ոտքերի մոտ: Նրան վեր բարձրացրին:
Ծխահոտը փչում էր հազուստների վրայից:
Դեմքն ու ձեռքերը մրոտ էին, կարծես ձյութով
ներկված: Մարող աչքերից արտասուքներ էլ
չէին կաթում: Նա չկարողացալ դրկել այն
մարդկանց, որոնց մոտ վազելու համար հավա-

քել էր իր ուժերի վերջին կաթիլը: Միայն նը-
շաններով հասկացրեց, որ ծխի մեջ էլի ուրիշ-
ներ կան: Մի քանի րոպե հետո բանակայիններն
այրվող տների մոտից հանեցին երկու երեխա:
Ուժասպառ մորն ու կիսաուշաթափ երեխաներին
սահնակներով թիկունք ուղարկեցին...

Հարձակումը շարունակվում էր: Ծխի հետ
նստել էր ձորակում ծանր խանձահոտը, չորերի
և մարդկային մարմինների խանձահոտը: Շատ
փայտաշեն տներից մնացել էին ուստական վա-
ռճարանների աղյուսները միայն: Ամեն, ամեն
ինչ թողվել էր ծխի ու մոխիրների տակ: Դա-
րեր շարունակ ապրել էր ավանն իր կյանքով, իր
խաղաղ ու բարի ժողովրդով, իր ազգային ըն-
տանեկան ավանդույթյուններով: Եվ ծիւում էին
այդ բոլորը ավազակաբարո թշնամու կրակի
տակ և ոչ մի կենդանի մարդ չէր մնացել պատ-
մելու այդ զարհուրելի եղեռնագործության
մանրամասնությունները, բացի այն սև ուրվա-
կանից, որին սահնակը թիկունք տարավ:

Դա հունվարյան օրերին էր: Այսօր մարտն
է: Սկսվել է ձնհալը: Հալվում է դաշտերի
ձյունը: Առավակներ են հոսում, լսվում է ջրերի

մեղմ կարկաչը, հարթութունները շողջողում են
արևի տակ: Անցել է երկու ու կես ամիս,
երկու ու կես ամիս շարունակ ես
մտածում էի այն կնոջ մասին, որ մեր
առաջ դուրս եկավ կուլի օրը: Ինձ թվում էր թե
ողջ մի աշխարհ տարավ նա իր հետ լի սարսափ-
ներով ու թշնամու դաժան դործերով: Ես որո-
նում էի նրան ու չէի գտնում, բայց նախազգա-
ցումն ասում էր, որ մենք կհանդիպե՞նք մի օր:
Եվ հանդիպեցինք... }

Նստում է իմ դիմաց երիտասարդ մի կին,
տխուր, թախծոտ աչքերով, որ թվում է թե
դեռ խոնավ են արտասուքներից: Նրա կողքին՝
իննամյա մի ցոլակն պատանի, որ նույնքան
հետաքրքրությամբ լսում է մոր պատմություն-
ները, ինչպես մյուսները:

Երիտասարդ կինը պատմում է ցավով, տա-
ռապանքով, պատմում է եղելություններ, որ
մարդկային երևակայությունը երբեք չէր կարող
օտեղծել: Հին, մեծ դյուղը, որից մոխրակույ-
տեր ու այրված աղյուսներ մնացին միայն, նրա
հայրենի դյուղն է: Ինքն ապրում էր մոտիկ քա-
ղաքում, որ դրավեցին աշնանը օտարերկրյա

Հափշտակիչները: Քաղաքից դուրս եկավ նա մի
օր ցնցոտիներ Հազաժ որպես մուրացիկ, բռնած
իր որդու ձեռքը և ընկավ Հայրենի գյուղի ճա-
նապարհը: Թշնամու ասպատակությունների
հետքերը փռված են ամեն տեղ, և՛ քաղաքնե-
րում, և՛ գյուղերում: Ամեն տեղ մահ է, կոտո-
րած: Միայն թե հասնի Հայրական օջախը, տես-
նի մի անդամ էլ Հարազատների դեմքերը և եթե
վիճակված է մեռնել՝ միատեղ մահը թեթև կլի-
նի: Ճանապարհին վայրե՛ացած գերմանացիները
չատ անդամ բռնեցին նրան, ծաղրեցին, ծեծե-
ցին: Գեղեցիկ կինը տղեղ էր թվում նրանց, նա
«քողարկված» էր, այդ պատճառով էլ Հնարա-
վոր եղավ կենդանի, որդու հետ միասին գյուղ
հասնել: Բայց այնտեղ էլ գերմանացիներն էին:
Նրանք վարվում էին այնպես, ինչպես բարբարոս
թշնամին կարող է վարվել այն դրաված երկրի
ժողովրդի հետ, որի բարոյակարս ուղին բարձր է
իրենից (և) դրզում է նրա բերս կըքերը:

Ահա պողպատե սաղավարտներով հիտլերա-
կանները հավաքում են գյուղի խոճկորները:
Գյուղը լցվում է խռինչներով, մորթվող անա-
սունների ձայներով, կրակոցներով, հարբած

հորդանների սունոցներով ու հայհոյանքով: Կրահում են խոզերի վրա, հաջող շան վրա, փախչող հովերի ետևից, կրահում են անխնայ պատվի վրա, կրահում են դեպի երկինքը, կրահում են արդար, անաչառ երկնքի վրա... Գյուղը քարանուձ է սարսափից: Տղամարդ չկա, միայն կանայք և զառամած ծերունիներն ու երեխաներն են մնացել գյուղում: Ամեն թաղում, երբ հայանվում են ավտոմատներով ղինված ավազակները, երեխաները ճչում են ու ձայնում իրար.

— Նեմեցն եկա՛վ, նեմե՛ցը...

Ու ներս են փախչում, թաքնվում մահճակալների տակ, վառարանների ետևում, ծածկվում են տան անկյուններում: Ջահել աղջիկները չեն լվացվում շաբաթներով, դեմքերին վերքեր են բուսցնում, հազնում են հին ու կեղտոտ շորեր, անմաքուր թաշկինակներ կապում: Նրանք ցեխոտում են իրենց դեղեցկութունը, որ չցուցադրեն թշնամու լողիբջ, ցանկասեր աչքերին: Մայրերը փակում են դռները, ծածկում լուսամուտները: Բայց կանաչ շինելալորները ներս են խուժում, փակ դուռը ջարդվում է նրանց առաջ,

տանտիրուհու առեւտրութեամբ լի հայացքը չի շփոթում նրանց, այլ դրզուում է: Ներս են ընկնում խմբով, սպայի հետ, որպէս քաղցած զայլի ձագերն իրենց մօր ետեւից...

— Օ՛, աստլած իմ, ինչե՛ր չեն անում նրանք, ինչե՛ր... ինչպե՛ս դուք կարող եք դալ, հասկանալ առանց տեսնելու...

Երիտասարդ կինը ոսկեդուռն զանդուր մազերով զլուխն առնում է ատերի մեջ և լռում: Մենք մխիթարանքի խոսքեր չենք ասում: Շատ է լսել նա այդպիսի խոսքեր: Թող ինքն իր մտքերի ու զգացմունքների հետ լինի: Մօր կողքին կանգնած փոքրիկ տղան էլ համակվում է ծանր տրամադրութեամբ ու աչքերը հատակին հասնում: Այդ լռութունը, մօր ու որդու այդ ծանրը լռութունը, երիտասարդ կնոջ ծանր չնչառութեան հետ միասին՝ ինձ արեւի շատ բան են ասում, քան կասեին պերճախոս խոսքերը: Իմ աչքերի ստաջ բացվում է մոխրացած, ծխացող դյուղը... բայց կինը բարձրացնում է զլուխն ու ոչ թե՛ ինձ, այլ տան մի անկյունի վրա դարձրած իր կարմրած աչքերը՝ շարունակում է:

— Եւրս են մտնում և վայրկենական արն-
դությամբ աչքերով խուղարկում տան անկյուն-
ները... կարազով հաց են տեսնում երեխայի
ձեռքին, խլում, ուտում են, ոչ մի ուշադրու-
թյուն չդարձնելով սարսափից ճշացող երեխայի
վրա, շաքարամանի մեջ տեսնում են մի կոտոր
շաքար, դրպաններն են դնում, ամանի մեջ կաթ
են տեսնում, վերցնում խմում են... քանդում են
բոլոր անկյունները, դտնում, հանում են այն-
պիսի առարկաներ, որոնց զոյությունը տանտե-
րերը վաղուց մոռացել են... Եվ հավաքում են
բոլորը... մոտենում են փակ սնդուկներին ու
դիվային ծիծաղով ցույց են տալիս կողպեքը...
փակել էք հա՞, կարծում եք դժվա՞ր է բացել...
այդ են ուզում ասել: Եվ գործիքներ են ճարում,
բացում են, կամ վերցնում են կացինն ու ջար-
դում. և թալանում են... թալանում են ամեն
ինչ... հազուստների մասին չխոսենք, վերցնում
են օրինակ ձեռքի սապոն, սապոնաման, հու-
լունքներ, կոճակներ, երեխաների ձեռնոցներ,
զուլպաներ, նորածնի համար պատրաստված
չապիկն ու տրուսիկը... Ինքները ասացեք, ին-
չո՞ւ համար են այդ բոլորը, մի՞թե իրենց երկ-

րում այդպիսի հասարակ բաներ գտնել չեն կարող, միթե իրենց Բեռլինում նորածինները տղլոր են և պետք է՞ր դրա համար մեր երկիրը դալ, ոռւսական դյուղերը թալանել... Մտածում ես, մտածում և ինքդ չես հավատում աչքերովդ տեսածներին... Ահա ես ձեզ պատմում եմ և նրանց անամոթ պատկերները կանգնած են երեւակայությանս առաջ... խուլարկէլ, վերջացրել են տունը, մառանն են մտնում: Հավաքում են ինչ որ կա, վերջին ձուն, վերջին բաժակ կաթը, կէկէոցով լցվում է տունը՝ բռնում են հավերին ու սաղերին: Փետուրները ձյան վաթիլների պես խաղում են օդի մեջ ու հատակին նստում: Սիրտդ լցվում է, քունքերդ դողդողում են, վայրկյանը հուսահատական դործողության է մղում, բայց միտքդ զսպում է քեզ. դու ոչինչ անել չես կարող, պետք է միասնաբար... աճուլամենայնիվ դիմում ես մարդակերպ վայրենիներին:

— Պա՛ն զինվորներ, հե՛ն սպա, մի՞թե դուք չըխտեք ինչ բան է խիղճը, մի՞թե ամոթի դպացումն անձանոթ է ձեզ...

Զեւանում են թէ չեն հասկանում: Ալտո-

մասն ուղղում են վրադ և ձեռքով իրենց բերա-
նը ծածկում, թե՛ եթե չլուես, կսպանենք: Վա-
խեցնելու համար չեն անում, այլ սպանում
են— Բողջեի՞կ, բողջեի՞կ... դո՛ւմ, դո՛ւմ...
Եվ բողջեիկ են համարում յոթանասուն տարե-
կան պառավ կնոջը, որ աստվածածնի անունով
մահ է ցանկանում նրանց և հայճոյում են ու՛
դո՛ւմ, դո՛ւմ, կրակում են նրա խորշոմներով
պատած դեմքին... է՛, իմ սիրելիներ, ինչպե՛ս,
ինչպե՛ս պատմեմ ձեզ... ծանր է հիշել այդ բո-
լորը... երբ հիշում ես, պատմում, նորից կրկնվում
են այդ դժոխային սարսափները... Այսպես էր
անցնում մեր օրը: Նրանք հավատացնում էին,
որ մեր կառավարութան բանը պրծել է, որ
Մոսկվան, Լենինգրադը դրավել են արդեն, որ
գրավել են Բաղուն և մերոնց քչել են մինչև
Ուրալ: Բայց երեխաներն անտառներից դանում,
բերում էին մեր թոռացիկները: Կարդում ու
հույսով սպասում էինք: Այսպես էր անցնում
մեր կյանքը, մինչև հասավ այն օրը, որի մա-
սին դուք խնդրում եք պատմել, ամենասարսա-
փելի օրվա մասին...

Երիտասարդ կնոջ դեմքն այրվում էր: Նա

ձեռքերով փակեց աչքերը և հանկարծ սկսեց հե-
կեկալ: Երիտասարդ, առողջ ուսերը ցնցվում
էին: Տանաիրուհին մոտեցավ, դրկեց նրան ու
փաղաքշական խոսքեր մրմնջաց.

— Հանդստացի՛ր, աղափնյա՛կ, Եկատերինա
Ֆեոդորովնա՛, խնայի՛ր քեզ, բավական է...

Մորը նայելով, հեկեկալ սկսեց նաև փոքրիկ
տղան: Այն ժամանակ կինը դուրսը բարձրացրեց,
թաշկինակը վերցրեց աչքերից ու դրկեց որդուն.

— Դու մի՛ լաց եղիր, Սլավի՛կ, գնա դուր-
սը խաղա...

Չէր բաժանվում որդին մորից:

՝ Ինձ նայելով՝ Եկատերինա Ֆեոդորովնա
ասաց.

— Մենք գուցե մոռանանք, բայց մեր երե-
խաները երբեք չեն մոռանա. դա նրանց մանկու-
թյան սմենածանր տղավորությունն է, որ եր-
բեք չի մոռացվի. ամենատուժեղ զգացմունքն ա-
տելությունը կլինի նրանց մեջ դեպի թշնամին...
Իմ ու ձեր մանկությունը չի տեսել այդպիսի
սարսափներ...

Այդ խոսքերից մի դող է անցնում իմ
մարմնով: Ես ոչինչ չեմ ասում նրան: Հիշողու-

Թյուններէս մեջ կրկնվում են սարսափներն իմ
 մանկութեան օրերի... Լուսաբաց է, մթնշաղ...
 բարբարոսներն հրացանի կոթերով ծեծում են իմ
 հորենական տան դուռը, ջարդում ու վայրենի
 աղաղակներով տուն մտնում... Հեռավոր այն
 օրերից իմ ականջին են հասնում լաց, ճիչ, կրա-
 կոցներ... Մայրս ինձ դրկած փախչում է փո-
 դոցներով... Դոյուում են ձիերի սմբակները...
 լավում է խրխինջ... խորովվող ոչխարների ճեն-
 ճերահոտը նստել է սարսափից արթնացող դյու-
 դի վրա... Ապա՝ այդ սարսափներից հեռու,
 խաղաղ մի անկյունում (չգիտեմ որտեղ է),
 մայրս իր դրկում օրորելով ինձ՝ պատմում է,
 թե ինչպես են կոտորել թշնամիները մերոնց...
 երբ մեծանաս՝ վրեժ կառնես թշնամուց... իմ
 մանկությունը չի տեսել թշնամու բարբարոսու-
 թյունները... Ես նայում եմ կապուտաչյա Սլա-
 վիկին և թվում է ինձ, թե ևս եմ դա, նորից
 փոքրացած, որ իմ բարի մայրն է այդ կինը և
 կարծես պատմությունը կրկնվել է...

Եկատերինա Փետրորովնան պատմում է.

... Մի օր էլ մոտիկից լավից մերոնց հրե-
 տանային կրակը: Գերմանացիների մեջ նկատելի

էր տաքնապ, արագ իրարանցում: Հույսը շողաց մարդկանց մեջ ավելի թովչական գույներով, բայց նրանք իրենց ժպիտները թաքցնում էին թշնամու աչքից: Ժպտում էին իրենց հոգու մեջ: Գերմանացու աչքից հեռու դրկում իրար, համբուրվում, շնորհավորում միմյանց: Երկրորդ օրը կրակն ավելի մոտեցավ: Գերմանական զորք էր տեղափոխվում դեպի կրակը: Անհանգստությունն ավելի աչքի ընկավ: Նույն օրը երեկոյան գյուղ մտան գերմանական նոր վաշտեր, կտրեցին բոլոր ճանապարհները և ամեն տուն մտնելով հրամայեցին.

— Տասնհինգ բոպելից հետո ճամբա պիտի ընկնեք դեպի թիկունք, կարող եք ձեզ ուտելու բան վերցնել, որ չմեռնեք ճամբին...

— Ինչո՞ւ համար, պան ղինվորներ, խաղաղ բնակչությունն ի՞նչ է արել ձեզ, որ տեղահան եք անում...

Խոսքի փոխարեն ավտոմատն էր պատասխանում: Առաջին բոպեներին սպանեցին մի քանի հոգու և սարսափ տարածեցին գյուղը:

— Սառնամանիք է, հե՛ռ սպա, երեխաները կմեռնեն ճանապարհին:

— Այդ դեպքում թող ախտեղ մեռնեն, եթե չեք ուզում մեռնեն ճանապարհին, — սլառասխա նում է դերմանական բանակի սպան ցինիկ հանդըստությամբ:

Ծայրի թաղն արդեն դատարկվում է: Մի կին հանկարծ ճչում է.

— Այրո՛ւմ են գյուղը, գյուղն այրո՛ւմ են...

Գոռուն դռչյունը, լաց ու կոծը, աղաղակը երկինք էին հուռնում: Այն՝ վում է ծայրի թաղը: Ապա կրակը կամաց կամաց մոտենում է կենտրոնին: Ավտոմատների կոթերի հարվածների տակ հայրական օջախից դուրս արին նաև եկատերինա Ֆեոդորովնային իր քույր Մարիայի և երեխաների հետ: Հետո նրանք տեսան, թե ինչպես հիտլերականները շշբրով նսվթ լցրին տան տախտակե շեմին, վախտաշեն կտուրին ու կրակ սովին: Բոցերը նախ մեղմ, հանդարտ, ապա մեկեն լափեցին տունը, շեկ օղակի մեջ առան, հալեցին կտուրին նստած սառցաշերտերը: Եկատերինան ու Մարիան նայում էին հորենական վառվող տանը՝ քարացած, կարծես անտարբեր:

Դա նշան էր, որ մերոնք դալիս են: Թշնա-

մին ավելի ու ավելի դազան և ոճրագործ է դառնում, երբ զգում է իր թուլութունն ու հակառակորդի ուժը: Այբովող գոմերում խոնչում էին խոճկորները, որոնց ուշադրութունն չէին դարձրել շտապող դերմանացիները, կրակի միջից արտակեղեք մլալում էին կատունները... Այդպիսի պատկերներ միայն մեծ ոճրագործի երևակայութունը կարող էր ստեղծագործել... Բայց այն, ինչ տեղի ունեցավ հարևաններին հետ, ավելի դիվային էր...

Երկու պառավ կին՝ Մատրիա Տիմոֆեևնա Բարաչինսկայան և Մարֆա Միխայլովնա Ռիովան, պառավ ու հիվանդ կանայք, վերջին տարիների ընթացքում անչարժ ընկած մահճակալներին՝ չէին կարող շունչ ու կյանք առնել և դեպի դերմանական թիկունքը քայլել: Հայհոյեցին նրանց, անպատվեցին դերմանացիները, բայց անօգուտ էր: Այն ժամանակ, սպայի հրամանով դերմանական շուն արտակներին ժառանգները պառավ կանանց ոտքերից քարշ տալով հանեցին նրանց իրենց տներից ու դրսում ձյունների վրա թողեցին: Հունվարյան սառնամանիքին մեկ-երկու ժամից ավելի չդիմացան պա-

ուսմանը: Գալարվեցին ցրտի տակ՝ ծերությունից ու հիվանդությունից տանջված նրանց մարմիններն ու չորացան: Կարծես կատարվեց բնության մեջ հասարակ, սովորական մի բան: Ոչ ոք չզարմացավ դրա վրա: Գյուղի բնակիչները չզարմացան, որովհետև նրանք ճանաչում էին արդեն թշնամուն և սղոսում էին նրանից ամեն ինչ, ոչ էլ իրենք, այդ քարքարոտությունների հեղինակները զարմացան, որովհետև դա առաջինը չէր, նրանց ոճիրների մեջ աննշան մի գեպը էր դա: Բայց թշնամու դեմ որպես բարոյական վիթխարի ուժ, որպես վրեժի տհեղ կոչնակ հնչող կախարդ ծերունի, որպես իր ժողովրդի կենդանի ու անմահ սպու մարմնացում, կանգնեց գյուղացի Նիկոլայ Ալեքսեևիչ Կոչկարյովը...

Երբ գերմանացիները նրա խրճիթը մտա՛, ու հրամայեցին, որ դուրս գա՛. նա դիմեց իր ընտանիքի անդամներին և առանձին-առանձին նրանց իր մոտ կանչելով՝ համբուրեց ծերունական գողգողացող շրթունքներով ու ասաց.

— Գնա՛ք բարով, կենդանի մնացեք դուք

ու պատմեցեք բոլորին, թե ինչ տեղի ունեցավ
մեր դժուրում... իսկ ես կմնամ...

— Դու՛րս արի, ծերուկ, — դուռացին թշնա-
մինեքը:

— Ես այստեղից դուրս չե՛մ դա, — ասաց
նա հանդիստ ձայնով, վաղուց որոշում ընդու-
նած մալձու հաստատուն, անվրդով ձայնով:

— Դուրս չես դա՞, ինչպե՞ս թե.

— Սա իմ տունն է, ինքս եմ կառուցել,
երբ ելիտասարդ էի, որդիներ եմ ծնել այստեղ,
թոռնիկներս այստեղ են աշխարհ եկել, հայրս
այս տանն է մեռել, ես չեմ դավաճանի իմ
սուրբ օջախին...

Ռուսերեն խոսող սպան զարմացած լսում
էր ծերունուն ու ոչինչ չէր հասկանում: Ի՞նչ է
ցանկանում նա: Ու ասաց նրան գերմանացի
սպան իրոնխայով:

— Ի՞նչ է, ուղում ես այրվե՞լ քո սուրբ օ-
ջախի մեջ...

— Ես մահից չեմ վախենում, ես շատ կոխի-
ների մեջ եմ եղել և ծանր վերքեր եմ ունե-
ցել...

Սպան ծիծաղեց անամոթ ծիծաղով:

— Լա՛վ, դե մնա՛ քանի որ ուզում եմ,
խոհ մենք կդիտենք տեսարանը...

Ու կարդաողրեց դուռը փակել նրա վրա։

Բոցերը լավեցին խրճիթը։ Սև ծուխը դուրս
հորդեց ջարդված լուսամուտներից։ Պատուհանի
ստաջ երևաց ծերունու կերպարանքը։ Գլուխը
բաց։ Գորշ, երկար մազերն ու ալեհեր միրուքը
խառնվել էին ծխին։ Չեռքերը բուռնցք արած՝
նա սպառնում ու հայհոյում էր թշնամուն։
Սպան ու զինվորները դիտում էին տեսարանը։
Բոցերը հասան ծերունուն, խանձեցին միրուքը,
լավեցին մազերը... Բայց նա դեռ հայհոյում
էր Տարաս Բուլբայի պես... նա ուժի ու վրեժ-
խնդրության մի ահավոր խորհրդանշան էր, այդ
յոթանասունհինգամյա ոռոս դյուղացին, հին
զինվորն ու հերոսը... Առաստաղի գերանները
փվեցին և ծուխն ու բոցերը ծածկեցին նրա
կերպարանքը...

— Սա առասպել չէ, — շարունակեց Եկատե-
րինա Ֆետոդորովնան, — իրականություն է. մեր
չրջանում, մեր հին դավառում ամենքը ճանա-
չում են Նիկոլայ Ալեքսեևիչ Կոչկարյովին և
արդեն լսել են նրա նահատակությունը... Թող

ս'ղջ աշխարհն իմանա նրա մասին, թող բուրն իմանան, թե ինչպես են մեռնում ուն մարդիկ... Բայց նա միակը չեղավ... դերմանացիներն իրենց տների մեջ այրեցին նաև ծերունի կողով Եմեւյան Եֆրեմովիչին և Բարադինսկի Վասիլի Իվանովիչին էլ: Եվ դուցե շատ ուրիշներ էլ, բայց այդ իրարանցման, հրի ու բոցի մեջ ես միայն այդքանը տեսա: Երբ թշնամին դուրս վռնդվի մեր երկրից, վերադառնան տարադրությունից մեր համադյուղացիները, շատ բան պարզ կդառնա, որ մի մարդու աչքը դիտել չէր կարող... Ու այսպես...»

...Ու այսպես, այրվում էր դյուղը, այրվում էին մարդիկ: Երեկո էր դառնում, խճում էր մթնշաղը: Կրակի դղիքըն ավելի մոտենում էր: Մի քանի կելոմետրի վրա ճակատամարտ էր տեղի ունենում: Եկատերինա Ֆեոդորովնան դարմանում էր, թե ինչպես իրեն թողել են մեխված իր տեղում: Մոտեցավ նրան մի ղինվոր ու դռաց:

— Ինչո՞ւ ես կանգնել, անմիջապես քայլի դեպի ճակատ...»

Բայց թվում էր թե իրեն չեն դիմում:

Սթանիսլեց նա ծանր մղձավանջից, երբ զգաց
 բիրտ դերմանացու բռունցքի ծանր հարվածը:
 Դեմքը շաղարիսից արյունով: Լալեց Սլաւիկի
 ճիչը: Ոչինչ չպատասխանեց նա դերմանացուն:
 Ուզում էր ապրել, ուզում էր տեսնել ազատ
 հայրենիքի մարդկանց ու պատմել նրանց, վրե-
 փի կոչել, այո՛, որքան հիշում է, ոչինչ չպա-
 տասխանեց: Բայց ո՛չ, մոռացել է նա, Սլաւիկը
 լավ է հիշում, որ մայրիկն ասաց. «բանդիտ-
 նե՛ր, բանդիտնե՛ր, սրիկանե՛ր...»)

Որդուն դիրկն առնելով, երևտասարդ կէնը
 վազեց դեպի ձորակը, դեպի այրվող տները:
 Գերմանացի զինվորը հեռացավ, կարծելով թե
 նա դեպի տարագրության ճամբան է վազում:
 Եկատերինա Փեոդորովնան իրեն նետեց ձորա-
 կում կուտակված ծխի մեջ, մոտեցավ այրվող
 մի տան ու ծածկվեց փոշու ու կայծերի տակ:

Ողջ դիչեր այրվում էր դյուղը: Իրենց տան
 մոտից լսում էր Փեոդորովնան կռալի ծանոթ,
 ծանր բառաչը... Բացվեց լույսը, բայց նա ե-
 րեխայի հետ դեռ չէր շարժվում տեղից: Լույսը
 բացվեց և նրան թվում էր, թե ծանր մի երացից
 է արթնանում, դաժան, կոշմարային մի երա-

զից, որ ահա պիտի փարատվի մշուշի նման:—
Արևը շողում էր երկնքից և դորչ ծխի պալալու-
ների միջից շողերը նրան էին հասնում: Արևերն
ու միները պայթում էին շուրջը և վախի ոչ
մի զգացում չունեիր նա: Մերոնց կրակն էր դա,
թող շատ կրակեն, շատ կրակեն թշնամու վրա
ն՝ թող ինքն էլ ընկնի մեր կրակից, միայն
պատժվի թշնամին: Հետո հասան նրան ոռ-
սերեն հզոր, հարազատ խոսքեր, լսեց նա հուժ-
կու ուռան, լսեց Ստալին, Հայրենիք բառերը...
և ուժ հավաքելով՝ դուրս եկավ թաքստոցից և
ընդառաջ վազեց...

— Ահա՛ այն բուրբը, ինչ տեղի ունեցավ,—
ավարտեց իր պատմությունը երկոտասարդ կի-
նը,— ի՞նչ կարող են ասել իմ կցկտուր խոս-
քերը, որ խեղդվում են կոկորդուս: Եվ առ-
հասարակ միթե՞ մարդկային լեզուն կարող է
նկարագրել այն ահալոր պատկերները, որ
տեսնում է մարդկային աչքը... Դուք տեսաք
մեր գյուղը, մեր մեծ, հարուստ գյուղը, որ
ունեիր 7000 բնակիչ, հիմա փոշի ու մոխիր է
դարձել, այրվեցին ու փոշի դարձան ծանոթ ու
հարազատ մարդկանց ոսկորները և հազար-հա-

դար քաղցր, նվիրական հիշատակներ, այրվե-
ցին մեր բոլոր զգացմունքները և միայն վրեժ-
խնդրութեան զգացմունքը մնաց ավելի ուժե-
ղացած, ավելի բոբրոքով... դա իմ հայրենա-
կան Կ. Լ. դյուղն էր, ևս հետո՝ քաղաքի բնակ-
չուհի էի դարձել, իմ ընտանիքի օրրանը Բ.
քաղաքն էր... Բայց մի՞թե նրա դրուժյունն էլ
նույնը չի թշնամու վայրենություններէջ...

Լուեց երկտասարդ կիներ: Մենք էլ ենք լուռ:
Ոչ մի հարց տալու պետք չկար: Եթե սիրտը
դեռ չի դատարկել՝ ինքը կխոսի, կչարունակի
իր պատմությունը: Ու ահա, նա կրկին բարձ-
րացնում է զլուխը, այս անգամ նայում ուղիղ
իմ աչքերին:

— Դուք կին ու երեխաներ, քույրեր ու
մայրեր ունե՞ք...

— Այո, և՛ քույրեր, և՛ կին ու երեխա...

— Իհարկե սիրում եք բոլորին էլ... Այն-
լորդ է իմ հարցը... ինչպես կարո՞ղ եք չսի-
րել... սիրում եք և չէիք ցանկանա, որ նրանք
էլ տեսնեին այն սարսափները, որ ևս տեսա,
մի՞ խնայեք ուրեմն ձեր կյանքը, ոչինչ մի՛
խնայեք թշնամուն ոչնչացնելու համար... Ես

միայն ձեզ չեմ ասում դա... բոլորին... Ես
ինքս էլ զենք վերցրել և պարտիզանական խմբե-
րի հետ պիտի դորժեմ թշնամու թիկունքում,
ուրիշներէ, թեկուզ հարազատ եղբոր ձեռքով
կատարված վրեժի հատուցումն ինձ քիչ կմխի-
թարի... կոչնչացնենք թշնամուն և դարձյալ
կապրենք մեր ազատ հայրենիքում... Այրվել են
մեր աները, ոչինչ, կապրենք մենք մեր հայրե-
նիքի պարզ, կապույտ երկնակամարի տակ, ոռո-
սական արդար, բաց երկնքի տակ և կվերաշի-
նենք մեր երկիրը...

3.

... Բեզ եմ պատմում այս բոլորը, իմ թան-
կադին, իմ սիրելի՛ հայ ժողովուրդ, իմ ծնո՛ղ
մայր, քեզ, որ շատ ես տեսել բռնակալներ ու
բարբարոսներ: Իմացի՛ր, որ քո աշխատավոր
որդիներին տեղահան անող Շահ Աբասը, քո զա-
վակներին սրախողխող անող սուլթանները, քո
դյուղերում ու քաղաքներում դիակի կույտեր
կանգնեցնող Նադիր շահն ու Ալա Մահմեդ խանը
կրկին սուր են քարձրացրել քո եղբայրների ու

քեզ վրա, այս անգամ եվրոպացու կոստյումի
 մեջ ծածկելով իրենց բարբարոսի ժանտ հոգին
 ու այլանդակ կերպարանքը: Իմացի՛ր, որ լենդլ-
 Թեմուրն ու Չինգիս խանը բարեզու՛թ հայրեր են
 եղել արյունոտուշտ Հիտլերի համեմատությամբ,
 Փարաչներն ու սարդարները, վալլիներն ու կայ-
 մակամները՝ մարդասերներ՝ դարչնագույն
 սպաների ու դինսիորների առաջ: Թանկադի՛ն իմ
 ժողովուրդ, իմ եղբայրներ՛ր ու քույրե՛ր, սովե-
 տական հայրենասեր պատանիներ՛ր, թող ձեզ
 հասնեն ուս ծեր կանանց՝ Մատրինա Տիմո-
 Ֆեննա Բարաչինսկայայի և Մարֆա Միխայլով-
 նա Ռիկովայի տնօրոցները: Նրանց որդիները
 վրեժխնդիր կլինեն իրենց մայրերի համար՝
 մենք ենք նրանց որդիները: Գուցե հենց նա է՛ր
 որդին այդ մայրերից մեկն ու մեկի, որ այժ-
 վոյ դյուդին նայելով կանչեց. «նրանք այրու՛մ
 են մեր հայրենիքը... վրե՛ժ, ընկերներ՛ր,
 վրե՛ժ...»: Վրեժի այդ խոսքերը թող հնչեն
 բոլորի, մեծի ու փոքրի սրտում: Թանկադի՛ն
 իմ ժողովուրդ, հայ հերոսակա՛ն ազգ, որ դե՛-
 մացար դարերի արհավիրքներին, որ ոտքի ետ
 կանգնած կրկին քո պատվի ու ազատության

պաշտպանութեան համար, դու չես մոռացել և չես կարող մոռանալ, թե ովքեր են հետևորդները, հազարավոր քո որդիներն ընկան նրա տմարդի, բռնակալ նախորդի, Վիլհելմ II-ի սրից... Դու այդ բանը չպիտի մոռանաս... Թող նահատակ նիկոլայ Ալեքսեևիչ կոչկարյովի ողջակիզվող կերպարանքը՝ ծխի ու բոցերի մեջ կանգնի քո աչքերի առաջ Ասցնի քո բոլոր որդիների սիրտն այն հզոր ուժով, որ կոչվում է վրեժ...

... Մարտի վերջին օրերն են: Հալչում է ձյունը: Դաշտերն ու անտառները բուրում են դարձնան բույրերով... Ես քայլում եմ դեպի արևմուտք ու մտածում...

Հարվող ձյունը առուններ է դառնում ու խոխոջում: Անտառներում երգում են ճնճողուկները, դեղձանիկներ էլ այսօր հայտնվեցին: Մի պահ ահանջ եմ դնում նրանց երգին... Դա արթնացող բնությունն է, դարունը... բայց մոռնիկից ոտատում են ահանանետները և ճնճողուկների երգը լուծ է... պատանձվում է անտառը... բայց թո՛ղ ուժգին հնչի ռազմի համերգը, բնության ձայներին մենք հետո ահանջ կդնենք, թող այնպիսի լայն բացվի մեր ճամբան դեպի արև-

մուտք: Մեր ուղեկիցն է արևը: Նա էլ է դեպի
արևմուտք դնում: Եվ նույնքան հաստատուն է
մեր ընթացքը, ինչպես արեգական ճանապարհը
դեպի արևմուտք... նրա ուժը ակեղերքի օրենք-
ների մեջ է, մերը՝ մեր հոգու... նրա մեջ կ-
ուում է հալխունական հրահեղուկը, մեր սլափ
մեջ՝ վրեժի ուժը. վրեժ մեր Հայրենիքի պատ-
վի և ազատության համար...


Смерть немецким оккупантам!

Մարտ, 1942 թ.

Գործող Բանակ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Որդիական կարոտ	9
Ալեքսանդր Մորոզովը և ուրիշները	23
Բարեկամութիւն	39
Հերոսների ծնունդը	81
Թշնամին անձնատուր ջեղով և ոչնչացվեց	128
Մարդը և ընտանիքը	137
Նորայրներ	165
Հանդիպումներ	176



մուտք: Մեր ուղ
արևմուտք դնո
մեր ընթա
ուկո՛

Նա էլ է դեպի



Պատ. խմբագիր՝
Գ. ԲՈՐՅԱՆ

ՎՋ 2788. Պատվեր 341. Տիրաժ 3000.
Տպագրական 13 մամուլ. Մեկ մամուլում
16560. Նշան. Հեղին 5 մամուլ. Ստորադրված
է տպագրության համար 13/VI—1942 թ.

Հայպետհրատի տպարան, Երևան, Անիի 65

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0041030

[364]
ԳԻՆԸ 3 Ռ. 60 Կ.

A $\frac{1}{6193}$

Շապիի նկարը
Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆԻ

ГР. КОЧАР
Рождение героев
(На армянском языке)
Аргиз—1942—Ереван